Учитывая важность развития экспортно-ориентированных отраслей и производств, правительство РА в 2016г. ввело ряд новых регуляций, касающихся институтов предоставления государственной финансовой поддержки в целях стимулирования экспорта. В частности, это касается страхования экспортных кредитов, субсидирования процентных ставок по кредитам для предприятий, осуществляющих производственную деятельность с экспортной ориентацией. Следует отметить, что в результате этих нововведений установлено определенное взаимодействие между институтами экспортного страхования и субсидирования процентных ставок экспортеров, так как до 2016г. такое взаимодействие просто отсутствовало, о котором было указано нами ранее [1]. С учетом и при наличии этих положительных нововведений, тем не менее, существует ряд противоречивых механизмов, что, в определенной мере, объективно снижает эффективность механизмов государственной финансовой поддержки в целях стимулирования экспорта.

13 января 2016г. постановлением премьер-министра РА был создан Совет содействия экспорта [2]. Тем же постановлением был установлен регламент работы указанного Совета, порядок представления заявок и оценки резидентов экспортеров РА для оказания содействия, в том числе финансового, формы заявок, а также список наименования продукции, для которых в 2016г. будет в первоочередном порядке предоставлено указанное содействие. Согласно 1-му приложению данного постановления, руководителем Со-

вета является премьер-министр, в состав Совета включены: вице-премьер по вопросам международной экономической интеграции и реформ (он же заместитель руководителя Совета), руководитель аппарата правительства РА, министры финансов, экономики и сельского хозяйства, главный советник Президента РА, первый заместитель руководителя аппарата Президента РА, первый заместитель министра по вопросам международной экономической интеграции и реформ. Как видно из постановления, состав Совета довольно представительный.

Согласно регламенту работы Совета, утвержденный приложением 2 данного постановления, Совет принимает заявки от резидентов РА, оценивает эти заявки, ведет учет одобренных заявок, на основании договоров экспортных поставок экспортеров заявителей принимает решение о предоставлении содействия данному предприятию резиденту экспортеру РА. Решение о предоставлении содействия может быть полным, частичным или на определенных условиях.

Можно констатировать, что в целом правительство РА для содействия экспорта установило очень важную регуляцию, что однозначно следует приветствовать. Тем не менее, сам механизм принятия решения для такого содействия экспортеров в начале 2016 года был установлен в ручном режиме, так как каждый раз для каждого заявителя решение о содействии должен был принимать вышеуказанный сверх представительный Совет. По всем канонам регулирования экономических процессов такая регламентация содействия экспортеров относится к числу экстренных методов, которые применимы в особых условиях или чрезвычайных ситуациях, а между тем речь идет о повседневном процессе, где задействованы десятки тысяч экономических субъектов. Исходя из этого, следует полагать, что такое содействие будет оказано в единичных случаях, либо такой механизм просто не в состоянии будет обслуживать такую важную и объемную задачу. Для полного представления положения дел рассмотрим также процесс принятия заявок для экспортеров, который представлен в приложении 3 вышеуказанного постановления. Примечательно что, согласно этому приложению, Совет для экспортеров резидентов объявляет приглашение о подаче заявок, где указываются оговариваемые условия, сроки и порядок представления заявок, порядок оценки заявок и процедуру получения информации об условиях. Такая регламентация указывает на то, что этот важный процесс строится не на перманентной основе, а является одноразовой акцией по определенным правилам. В 5-ом приложении вышеуказанного постановления указано номенклатура продукции, для которых в первом полугодии 2016г. будет представ-

лено первоочередное содействие экспортерам. В составе такой продукции 5 наименований: это – вино, фруктовая водка, консервы, мясные изделия, рыба и рыбная продукция. Сам список также указывает на то, что процесс предоставления содействия экспортерам имеет довольно ограниченный и может временный характер.

10-го марта 2016г. постановлением премьер-министра РА были внесены изменения и дополнения в постановлении о содействии экспортеров [3]. Было отредактировано название указанного постановления. Следует отметить, что утратили силу те положения постановления, согласно которым Совет сам определяет тех экспортеров, которым следует оказывать содействие для осуществления экспортных сделок, то есть, по сути, был отменен ручной режим принятия решений со стороны Совета. Одновременно была установлена процедура оказания содействия экспортерам на основе особого «Процессуального руководства по оказанию содействию», которое утверждается Советом.

9-го марта 2016г. Совет по содействию экспорта принял постановление [4], согласно которому процесс содействия экспортеров был определенно упорядочен. Так, постановлением Совета установлено, что содействие экспортеров сводится к субсидированию процентных ставок кредитов представляемых коммерческими банками для пред- и после экспортного финансирования и факторинга реализуемого посредством страхования экспортных кредитов, а также возмещению страховых премий по страхованию экспортных кредитов осуществляемых государственным агентством по страхованию экспортных кредитов. Указанным постановлением установлено:

• содействие представляется для каждой партии экспортируемой продукции;

• величина пред экспортного финансирования составляет 25 млн. драм, а страховое покрытие по страхованию экспортных кредитов эквивалентно сумме до 600 тыс. долл. США;

• субсидирование процентных ставок кредитов представляемых коммерческими банками для пред экспортного финансирования и факторинга реализуемого посредством страхования экспортных кредитов составляет 3 процентных пункта;

• длительность пред- экспортного финансирования и факторинга не превышает 180 дней;

• страховые премии взимаемые государственным агентством по страхованию экспортных кредитов возмещаются полностью.

В «Процессуальном руководстве по оказанию содействию» пред- и после экспортного финансирования и факторинга реализуемого посредством страхования экспортных кредитов зарегламентировано, что для получения пред- экспортного финансирования резидент компании обращаются в государственное агентство по страхованию экспортных кредитов. Если сделка одобряется агентством по страхованию экспортных кредитов, то после этого организация экспортер обращается в коммерческий банк для получения пред- экспортного финансирования. Банк оценивает кредитоспособность организации экспортера и при положительной оценке получает также письменное подтверждение от Агентства по страхованию экспортных кредитов о лимите предоставляемой сделки. При положительной оценке сделки со стороны Агентства и банка весь пакет направляется в Фонд развития Армении (далее Фонд). Фонд, Агентство и банк подписывают трехстороннее соглашение, на основании которого Фонд развития Армении субсидирует процентные ставки кредита пред- экспортного финансирования в пределах 3 процентных пунктов, а также возмещает страховую премию Агентства.

Схожий механизм установлен также для экспортного факторинга. Экспортер сначала обращается в Агентство по страхованию экспортных кредитов для страхования краткосрочного экспортного кредита. В том случае, если организация экспортер пользовалась услугой пред- экспортного финансирования представленного через Агентство, то согласие на страхование экспортного кредита считается полученной. Компании экспортеры полисы на страхование экспортного кредита представляют в банк для получения факторинга по сделке страхования экспортного кредита. Далее процесс осуществляется по схожей схеме трехстороннего договора с участием Агентства, банка и Фонда.

Регламентация экспортного содействия в рамках постановления Совета экспортного содействия на основе «Процессуального руководства по оказанию содействия» экспортерам довольно прагматична с учетом установленного взаимодействия между Агентством и Фондом».

Теперь обратимся к некоторым процессуальным нормам указанного регулирования, в частности, к вопросу полного возмещения или субсидирования страховой премии, а также к механизму удержания и управления рисков экспортного страхования. Заметим, что в данном случае речь идет о полном возмещении, а не со-финансировании со стороны государства, и термин возмещение в данном случае означает субсидию со стороны государства, поскольку, согласно Соглашению ВТО по субсидиям и компенсационным мерам [5] (статья 1-ая, где дается определение субсидии), это однозначно

относиться к субсидии. В частности, пункт 1.1 Соглашения определяет, что субсидия существует когда: оказывается финансовое содействие правительством или любым публичным органом (Фонд развития Армении, по сути, публичный орган, средства фонда в основном поступают из бюджета, руководит им премьер-министр) в формате, когда: правительство предоставляет товары или услуги помимо общей инфраструктуры или закупает товары; правительство осуществляет платежи в механизмы финансирования или поручает, либо предписывает частному лицу выполнять одну или несколько функций, которые обычно возлагаются на правительство, причем на условиях, которые, фактически, не отличаются от обычной практики правительств. Одновременно важно и то, что такая субсидия является специфической в соответствии с положениями статьи 2-ой.

Альтернативой такого субсидирования страховых премий может являться возмещение или субсидирование операционных расходов Агентства или возмещение затрат Агентства по разработке новых продуктов, что, в свою очередь, приведет к снижению страховых премий для страхователей. Как известно, страхованию экспортных кредитов присущи многие проблемы и изъяны, в том числе, высокие операционные расходы, обратная селекция или антиселекция, неопределенность в определении последствий от возникших рисков, высокая корреляция рисков и потерь, страховое мошенничество или умышленные действия страхователей, катастрофический характер рисков, и, следовательно, сложность в установлении страховых тарифов. В этом смысле государственное субсидирование призвано преодолеть сложности управления рисков этого вида страхования. Очевидно, что возможности субсидирования государства ограничены, чтобы «поправить» все объективные проблемы и изъяны страхования экспортного кредитования. Следует заметить, что вне зависимости от формы государственного субсидирования, оно снижает уровень страховых премий для страхователей. Но прямое субсидирование страховых премий для страховщиков экспортеров оценивается экспертами довольно проблематичным, поскольку оно искажает рыночные отношения. Заметим, самое главное то, что прямое субсидирование страховых премий, по сути, никак не связано с управлением страховых рисков экспортных кредитов, а оно направлено на снижение затрат или повышение доходов экспортеров. Такое субсидирование более выгодно для выгодоприобретателей с низким уровнем рисков, чем для тех, у которых уровень рисков высок. Между тем, если субсидирование связывается с ожидаемыми потерями, то оно должно быть полезным для выгодоприобретателей с высоким уровнем рисков, что присуще рыночным коммерческим общепринятым канонам. В

высоких зонах риска тариф страховой премии должен включать надбавку за катастрофические риски. С другой стороны, субсидирование премии, как правило, приносит больше выгод крупным экспортерам, чем более мелким. Таким образом, можно резюмировать, что все виды субсидирования страховой премии в конечном итоге содержат искажающий элемент. Еще одна проблема в том, что применение субсидирования страховых премий в дальнейшем приведет к увеличению количества выгодоприобретателей, которые будут претендовать на получение дополнительных доходов или снижение расходов. В целом, субсидирование выявляет следующие позитивные и отрицательные факторы. Положительные:

• способствует вовлечению в процесс финансово слабых и начинающих предпринимателей;

• частично ослабляет проявление анти селекции;

• стимулируется рынок, страховщик имеет возможность повысить емкость рынка; поскольку субсидирование вовлекает в рынок низко рискованных кандидатов;

• пресекает упадок и стимулирует экономический подъем и рост.

Противопоказания:

• искажает рыночные принципы и мотивацию;

• в случае не классифицированного субсидирования, когда оно предоставляется тем лицам, которые способны заплатить страховые премии, углубляет дискриминацию (в этом случае необходимо выявить слабых и менее платежеспособных);

• создает зависимость в будущем для реализации таких страховых продуктов, блокирует распространение не субсидируемых продуктов;

• в будущем при возможном участии на рынке страхования экспортных кредитов частных страховщиков может создать для них дополнительные трудности, поскольку их страхователи могут не попасть в списки субсидируемых.

Для оценки субсидирования в целом следует сопоставить социальные затраты и социальные выгоды субсидирования. При таком сопоставлении очень часто субсидии оказываются высоко затратными. Прежде всего, следует выявить те виды субсидирования, которые не искажают эффективность частного страхового сектора с тем, чтобы в дальнейшем привлечь их для страхования краткосрочных продуктов экспортного страхования. В этом плане более эффективно субсидирование в формате технического содействия, особенно направленных на развитие инфраструктуры этого вида страхования. Ведь развитие инфраструктуры повышает уровень доступности к

страхованию экспортеров страхователей разных уровней. Субсидирование операционных расходов, может привести к снижению тарифов страхования, к более масштабному внедрению инновационных продуктов, которые требует содействия, в первую очередь, для разработки и внедрения продуктов для малого и среднего бизнеса и освоения новых рынков, для улучшения управления информационным обеспечением. Государственное содействие должно быть целенаправлено на то, чтобы страховщики, в данном случае государственное Агентство, удержали страховой риск, а не произошло перераспределение средств и доходов государства к страхователям. При субсидировании страховых премий следует классифицировать страхователей, так как поголовное субсидирование, как было отмечено выше, углубляет дискриминацию, сам процесс классификации страхователей сталкивается с проблемой идентификации, стабильности, эффективности, выбора целевых сегментов и анти селекции. Теоретически, субсидирование должно покрывать только операционные расходы, заложенные в премии, и никак не покрытие риска. В целом, ограниченные финансовые средства государства целесообразно направлять на развитие рынка и института страхования экспортных кредитов, чем содействию отдельных экспортеров страховщиков, исходя из следующего. Первое, в страховой премии, в методологическом плане очень трудно идентифицировать и разграничить рисковые и не рисковые элементы. Требуется обеспечить методологическую последовательность, чтобы для каждого отдельного договора страхования экспортных кредитов с точностью рассчитать нетто страховую премию риска и, таким образом, обеспечить правильное распределение между разными компонентами страховой премии. Естественно, это потребует дополнительные затраты, что приведет к повышению затратоемкости этого вида субсидирования и, следовательно, потере его эффективности.

Второе, если допустить, что задача идентификации решена, то не рисковые компоненты страховой премии могут в незначительной степени снизить размер чистой премии, а вместо этого потребовать значительные затраты. Со временем правительство может прийти к выводу о прекращении неэффективных затрат, что приведет к нарушению устойчивого роста рынка, связанного с прекращением непрерывности сформированного режима субсидирования.

Третье, если правительство заинтересовано в решении устойчивого роста и активизации малого и среднего предпринимательства, то должно уповать на эффективный анализ ограниченных государственных расходов с тем, чтобы гарантировать правильное распределение ограниченных государ-

ственных расходов. Между тем, очень часто уполномоченные госорганы просто на опыте или эмпирическим путем или по конъюнктурным соображениям определяют величину отдачи от государственного содействия малого и среднего предпринимательства, к примеру, примерно сопоставляя расходы и выгоды от субсидирования процентных ставок кредитов, предоставления гарантий, субсидирования страховых премий или консультационных услуг разного характера.

Четвертое, программы государственного субсидирования имеют тенденцию привлечь в программах высокодоходные предприятия экспортеры (без особого отбора), что расширяет возможности дискриминации.

В рыночном сегменте, каким являются краткосрочные продукты экспортного кредитования, в целом, следует избежать субсидирования страховых премий. В этом сегменте субсидирование должно быть направлено на сокращение воздействия неопределенностей и неточностей. Страховой тариф в этом случае должен строиться на базе чистой нетто премии по риску, к которому добавляются коррелирующие надбавки.

Подводя итоги, можно констатировать, что государственное субсидирование должно строиться на основе целостности всего процесса страхования и должно иметь следующие приоритеты: в первую очередь, это выделение средств для реализации перестрахования и предоставления специальных гарантий государства, во-вторых, выделение средств направленных на развитие инфраструктуры рынка и регулирующих мероприятий, и только, в третью очередь, на софинансирование или полное субсидирование страховых премий страхователей экспортеров. Кроме того, установление приоритетов по указанным направлениям, обусловлено тем, насколько каждая из них ограничивает в целом весь процесс и его эффективность страхования экспортных кредитов.

Экспортное страхового агентство Армении как особый институт стимулирования экспорта по своему статусу действует как обычная страховая компания и лишена механизма прямого гарантирования экспортных кредитов со стороны государства. При этом, заметим, оно действует в зоне стохастических рисков, где порой под влиянием различных факторов «геп» (или разрыв) между рыночно управляемыми рисками и катастрофическими, то есть рыночно не управляемыми рисками может внезапно и сильно колебаться. На страховом сегменте страхования экспортных кредитов рыночный «геп» может раскрываться и сокращаться, поскольку, по мнению страховщиков, не следует выдавать покрытия для отдельных отраслей и предприятий, и в целом факторы, влияющие на «геп» многочисленны. В частности, для

краткосрочных продуктов страхования экспортных кредитов, по мнению экспертов, очень важно различать доступность приобретения продукта, а не ставки страховых премий, поскольку очевидно и точно, что различные изменения меняют в целом восприятие риска [6].

Для полноценного страхового покрытия рисков, государство должно предусмотреть возможность предоставления дополнительных гарантий для «Экспортного страхового агентства Армении», установив особый лимит для таких гарантий в ежегодном государственном бюджете. Следует еще раз отметить, что без такого механизма гарантий Агентство действует как обычная страховая компания, невзирая на наличие общего капитала, выделенного из государственных средств.

Следует отметить, что государственная компания экспортного страхования не была основана как особый институт финансового рынка (на основе отдельного закона), а была создана как страховая компания в соответствии с действующим законодательством РА «О страховании и страховой деятельности» [7], которая осуществляет конкретные классы страхования. Для этого потребовалось внести определенные дополнения и изменения в указанном законе, в частности, в части 3-ей статьи 11 было закреплено положение о том, что Республика Армения может основать страховую компанию, занимающуюся страхованием экспорта и (или) быть участником этой компании. Таким образом, компания свою деятельность по осуществлению страховых услуг, поддержанию норм платежеспособности, ликвидности, удержания риска и других требований финансовой устойчивости строит на основе требований, установленных Центральным Банком РА (который в РА является мегарегулятором всех финансовых институтов) для коммерческих страховых компаний. Такой подход ставит государственную компанию по страхованию экспортных кредитов в один ряд с коммерческими страховыми компаниями, что в равной мере относится к видам разрешенных финансовых услуг и в целом всей деятельности, а также требований по обеспечению финансовой стабильности, уровню прозрачности и другим регуляциям.

По закону РА «О страховании и страховой деятельности» и в соответствии с положением Центрального Банка РА, за номером 3.02 «Величина, формирование, расчет основных экономических нормативов и критерии для установления незапрещенных перестраховщиков» [8] требование к капиталу страховой компании для осуществления страховой деятельности по классам – страхование кредитов (класс 14), представление гарантий (класс 15) страхование финансовых потерь (16 класс), составляет 1500 млн. драм . «Экспортное страховое агентство Армении» СЗАО (или Агентство) основано 23

октября 2013г. на основе постановления правительства РА за номером 1129-А от 17 октября 2013г. [9] и зарегистрировано в Центральном Банке РА 27.11.2013г.

Вышеуказанным постановлением правительства, общий капитал компании установлен в размере 1950 млн. драм, из которых в уставный капитал компании внесено – 1500 млн. драм и в главный резервный фонд или гарантийный фонд компании внесено, соответственно, 450 млн. драм. Единственным акционером компании является Республика Армения.

Страхование экспортных кредитов, в той или иной мере, соприкасается с катастрофическими рисками (когда риски неуправляемы в рыночном сегменте, что характеризуется неопределенностью оценки проявления рисков и их последствий, чему следует неопределенность определения страхового покрытия и страховой ставки). В таком состоянии гарантия, предоставляемая государственному Агентству, служит механизмом для дальнейшей передачи и управления риском, когда, по существу, управление риска нереалистично рыночными механизмами, используемыми коммерческими страховщиками. Государственная гарантия дает дополнительный ресурс для управления риском. Существующее положение, когда «Экспортное страховое агентство Армении» наделено капиталом из государственных средств не означает, что Агентство «наделено» всеми возможными ресурсами удержания и управления рисками. На рынке действуют страховые компании с большим капиталом, чем Агентство страхования экспортных кредитов, но они стремятся войти на рынок страхования экспортных кредитов. Существующий подход ограничивает возможности Агентства для удержания и управления рисками и емкость этого сегмента рынка. Государственная поддержка, оказываемая Агентству, должна носить непрерывный характер, одним из важных элементов которого – это формат предоставления государственных гарантий из государственного бюджета, что, в определенной мере, по аналогии сравнимо с перестрахованием рисков. При таком подходе, несомненно, формат, размер, случаи и условия предоставления государственных гарантий подлежат строгой регламентации и его законодательного закрепления в законе РА «О бюджетной системе» и государственном бюджете каждого года, где следует закрепить порядок абсолютную или относительную величину предоставления государственных гарантий Агентству. Такой подход позволит многократно повысить степень управляемости рисками, включая риски с катастрофическими характеристиками и повысить емкость этого сегмента рынка. Государственная гарантия для Агентства станет гарантией последней инстанции, сравнимая со средством передачи риска на перестрахование перво-

классным перестраховщикам. К такой гарантии Агентство должно будет обращаться в тех случаях, когда: а) когда риски невозможно управлять собственным удержанием и ресурсами, б) и/ или для них невозможно осуществить перестрахование, в) и/ или для перестрахования необходимо также государственная гарантия, г) и/ или государственная гарантия необходима для страхования риска, оставшаяся сверх объема перестрахования.

При реализации такого подхода у «Экспортного страхового агентства Армении» к трем имеющимся «поясам» платежеспособности и финансовой устойчивости, это: 1) пополненный с минимальным требованием уставной и общий капитал, 2) гарантийный капитал в составе первичного капитала компании, 3) технические резервы компании, создаваемые по регламентации для компаний страхования не жизни, добавится и четвертый «пояс» – государственные гарантии, выдаваемые из госбюджета по обязательствам Агентства. Это намного увеличит устойчивость компании, емкость рынка страхования экспортных кредитов, возможности Агентства на перестраховочном рынке. Исходя из приведенных обоснований и доводов, правительство РА должно сопоставить возможные выгоды предоставления субсидий страхователям на покрытие страховых премий по страхованию экспортных кредитов и предоставления государственных гарантий самому Агентству.

ЛИТЕРАТУРА

1. *Карян А.В., Макарян Ц.М.* Институты предоставления государственной финансовой поддержки в целях стимулирования экспорта в РА. Вестник РАУ, №3. Ер.: Изд-во РАУ. 2015г. СС. 112–121.
2. ՀՀ վարչապետի 13.01.16 «Արտահանմանն աջակցելու նպատակով արտահանման աջակցման խորհուրդ ստեղծելու, արտահանման աջակցման խորհրդի աշխատակարգը, աջակցություն ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ տնտեսվարող սուբյեկտների կողմից հայտերի ներկայացման և գնահատման, հայտերի հավանության արժանացման և աջակցության տրամադրման ընթացակարգը, տեղական արտադրության ապրանքների արտահանման համար օժանդակություն ստանալու հայտի և արտահանման օժանդակություն ստանալու նպատակով ներկայացվող դիմումի ձևերը հաստատելու և 2016 թվականի ընթացքում արտահանման անմիջական աջակցության տրամադրման համար գերակա համարվող Հայաստանի Հանրապետության արտադրանքի տեսակների ցանկը հաստատելու մասին» №5-Ա որոշում:
3. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016 թվականի հունվարի 16-ի №5-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին, 10 մարտի 2016 թվականի №133-Ա ՀՀ վարչապետի որոշում, http://www.mineconomy.am/uploades/20161103111837221.pdf:
4. Որոշում, Հայաստանի Հանրապետության արտահանման աջակցման խորհրդի, Քաղվածք, ՀՀ Վարչապետ Հովիկ Աբրահամյանի մոտ 2016 թվականի մարտի 9-ին

կայացած Արտահանման աջակցման խորհրդի նիստի արձանագրությունից, http://www.mineconomy.am/uploades/20162303160136300.pdf:
5. Соглашение по субсидиям и компенсационным мерам, ВТО, www.government-nnov.ru/?id=118437.
6. Study on short-term trade finance and credit insurance in the European Union, February 2012, Prepared by International Financial Consulting Ltd. for the European Commission, page 15, http://ec.europa.eu/competition/state_aid/studies_reports/study_short_term_finance_2012_en.pdf.
7. Закон РА «О страховании и страховой деятельности», www.cba.am.
8. Постановление совета Центрального банка РА 3.02 «Величина, формирование, расчет основных экономических нормативов и критерии для установления незапрещенных перестраховшиков», www.cba.am.
9. Постановление правительства РА от 17 октября 2013г. за номером 1129-А «Об основании компании закрытого акционерного общества по страхованию экспорта».

THE MECHANISMS FOR EXPORT PROMOTION IN RA

Ts. Makaryan

ABSTRACT

The article presents the current RA institutes of state financial support in order to stimulate exports, adopted by the Government in 2016. The article has considered the expediency and the format of subsidies to cover the insurance premiums of exporters on export credit insurance, as well as the issue of state guarantees for the Agency for export credit insurance.

Keywords: system of state support and promotion export, export credit insurance, subsidized interest rates of financing exporters and export credit insurance premiums.

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ց.Մ. Մակարյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված է կառավարության կողմից 2016 թվականին ընդունված ՀՀ-ում գործող արտահանման պետական խթանման և աջակցության համակարգը: Դիտարկվել է արտահանողների արտահանման ապահովագրության ապահովճարների սուբսիդավորման և դրա ձևաչափի նպատակահարմարությունը, ինչպես նաև արտահանման ապահովագրության պետական գործակալությանը պետական երաշխիքների տրամադրման հարցը:

Հիմնաբառեր՝ արտահանման պետական խթանման և աջակցության համակարգը, արտահանման վարկերի ապահովագրությունը, արտահանողների ֆինանսավորման տոկոսադրույքների և ապահովագրավճարների սուբսիդավորումը:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Սարգսյան[1]

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում են ՀՀ տնտեսության գլոբալ մրցունակության գնահատականն ու դրա փոփոխման միտումները վերջին տասնամյակի ընթացքում: Ցույց է տրվում, որ գլոբալ մրցունակության համաթվի արժեքով ՀՀ տնտեսության միջինից բարձր գնահատականը հիմնականում պայմանավորված է հենքային գործոնների նպաստավոր վիճակով: Մյուս կողմից, արդյունավետության խթանների և նորարարության գործոնների տեսանկյունից ՀՀ տնտեսության միջազգային մրցունակության գնահատականը բավականին ցածր է: Բացի այդ, տնտեսության կարգավորման ֆորմալ կանոնների, ընթացակարգերի, նորմերի առկայությունը թույլ է տվել չեզոքացնել ՀՀ մրցակցային, ներդրումային, հարկային, մաքսային, ինովացիոն, գիտակրթական քաղաքականության կարևորագույն ոլորտներում առկա խնդիրները: Այս հանգամանքը ՀՀ տնտեսությանը գլոբալ մրցունակության համաթվով տրված գնահատականի ոչ լիարժեք ադեկվատության վկայություն է հանդիսանում:

Հիմնաբառեր՝ գլոբալ մրցունակության համաթիվ, մրցունակության գործոններ, մրցունակության հենքային պայմաններ, մրցունակության արդյունավետության խթաններ, մրցունակության ինովացիոն գործոններ:

Ազգային տնտեսությունների մրցակցային առավելությունների և միջազգային մրցունակության մակարդակի գնահատման առավել ընդգրկուն ցուցանիշ է համարվում Համաշխարհային տնտեսական համաժողովի (World Economic Forum-WEF) կողմից մշակված Գլոբալ մրցունակության համաթիվը (Global Competitiveness Index-GCI), որը յուրաքանչյուր տարի հաշվարկվում և հրապարակվում է Մրցունակության համաշխարհային զեկույցում: Համաշխարհային տնտեսական համաժողովը ազգային տնտեսության մրցունակությունը դիտարկում է որպես ինստի-

[1] Ատենախոսության թեման՝ «Մրցակցային առավելությունները և ՀՀ-ի՝ միջազգային շուկա դուրս գալու հեռանկարները», գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թորոս Շահենի Թորոսյան:

տուտների, քաղաքականությունների և երկրի արտադրողականությունը բնութագրող ցուցանիշների ամբողջություն: Ըստ այդմ, որքան մրցունակ է տվյալ երկրի տնտեսությունը, այնքան շատ են աճի հնարավորություն-ները: Գլոբալ մրցունակության համաթվի կիրառմամբ ազգային տնտե-սության մրցունակության մակարդակի գնահատումն իրականացվում է ըստ հետևյալ 3 խմբերում ամփոփված 12 հենասյուների.


1. Հենքային պահանջներ (ներառում է 4 հենանսյուներ՝ ինստի-տուտներ, ենթակառուցվածքներ, մակրոտնտեսական միջավայր, առող-ջապահություն և նախնական կրթություն)

2. Արդյունավետության խթաններ (ներառում է հետևյալ հենասյուները՝ բարձրագույն կրթություն և վերապատրաստում, ապ-րանքային շուկայի արդյունավետություն, աշխատաշուկայի արդյունա-վետություն, ֆինանսական շուկայի զարգացում, տեխնոլոգիական պատ-րաստվածություն, շուկայի չափ):

3. Նորարարություն և գործարարության բարդության գործոններ (ներառում է երկու հենասյուներ՝ գործարարության բարդություն և նո-րարարություն):


Գլոբալ մրցունակության 2015-2016թթ. զեկույցում մրցունակության համաթվի արժեքով Հայաստանը 140 երկրների շարքում զբաղեցրել է 82-րդ տեղը: Մեր երկրի տնտեսության գլոբալ մրցունակության գնահա-տականը, 1-ից 7 բալ սանդղակով (7-ը առավելագույն մակարդակն է) կազմել է 4.01, ինչը նկատելիորեն ցածր է ինչպես աշխարհի միջին մակարդակից, այնպես էլ ԱՊՀ երկրների համապատասխան ցուցանիշից (գծանկար 1): Ըստ որում, դիտարկվող ողջ ժամանակահատվածում մրցունակության համաթվով ՀՀ տնտեսության գնահատականները զիջել են աշխարհի միջին մակարդակին, իսկ ԱՊՀ երկրների միջին մա-կարդակը հաջողվել է գերազանցել միայն մինչճգնաժամային տարիներն ընդգրկող ժամանակաշրջանում[2]:

[2] The Global Competitiveness Report 2015–2016. World Economic Forum, 2015: The Global Competitiveness Index 2015–2016 Rankings.



Գծանկար 1. Մրցունակության գլոբալ համաթվի արժեքների դինամիկան, 2006-2015թթ[3].

ՀՀ տնտեսության մրցունակության մակարդակի դինամիկան համադրելով տնտեսական աճի դինամիկայի հետ, հարկ է արձանագրել, որ երկնիշ աճի պայմաններում տնտեսության միջազգային մրցունակությունը նվազել է, իսկ հետճգնաժամային վերականգնման տարիներին, ընդհակառակը՝ աճել: Ըստ որում, աճի գագաթնակետը, տարօրինակ զուգադիպությամբ, ժամանակագրորեն համընկնում է Մաքսային միությանը ՀՀ անդամակցության մասին հայտնի քաղաքական որոշման կայացման հետ, որին հաջորդում է հայաստանյան տնտեսության մրցունակության մակարդակի նվազումը (տես՝ գծանկար 2):



Գծանկար 2. Տնտեսական աճը և մրցունակության համաթվի գնահատականը ՀՀ-ում[4]

Ավելին, նույն ժամանակահատվածում Մաքսային միության մյուս անդամ-երկրների տնտեսության մրցունակության գնահատականը հակադիր միտումներ է գրանցել: Այսպես, 2013-2015թթ. ՌԴ արտաքին

---

[3] Աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական համաժողովի Գլոբալ մրցունակության համապատասխան տարիների զեկույցները:

[4] Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Մրցունակության համաշխարհային զեկույցներ:

մրցունակության գնահատականը աճել է՝ 4.25-ից մինչև 4.44, Ղազախստանինը՝ 4.40-ից հասել է 4.49-ի, Ղրղզստանինը՝ 3.57-ից մինչև 3.83:

ՀՀ տնտեսության համար հաշվարկված գլոբալ մրցունակության համաթվի առանցքային բաղադրիչների դինամիկայի վերլուծությունը ի ցույց է դնում, որ հայաստանյան տնտեսության մրցակցային դիրքում առաջնային դերակատարում ունեն հենքային պահանջները կամ գործոնները, որոնց գնահատականը 2015թ. կազմել է 4.39, իսկ դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում բարձր է եղել 4.0 մակարդակից: Մյուս կողմից, հենքային պայմանների ընդհանրական գնահատականը ՀՀ տնտեսության համար ավելի ցածր է, քան ԱՊՀ միջինը (4.51) կամ՝ ըստ բոլոր երկրների հաշվարկված միջինը (4.58): Բացի այդ, սույն ցուցանիշով Հայաստանը նկատելիորեն հետ է մնում նաև Եվրոպայի զարգացող ու անցումային տնտեսություններից, իսկ զարգացած տնտեսությունների միջին մակարդակից տարբերությունը շատ ավելի ակնառու է (տես՝ աղյուսակ 1): Հետաքրքրական է, որ դիտարկվող ժամանակահատվածի սկզբում՝ 2006-ին, մրցունակության հենքային պայմանների առումով ՀՀ տնտեսության գնահատականը (4.17) նկատելիորեն գերազանցում էր ինչպես ԱՊՀ, այնպես էլ Եվրոպայի զարգացող ու անցումային տնտեսություններին (3.67): Պետք է արձանագրել, որ հետագա տարիներին ԱՊՀ երկրները, նաև՝ Եվրոպայի զարգացող ու անցումային տնտեսությունների մեծամասնությունը մրցունակության հենքային գործոնների բարելավման առումով շատ ավելի տպավորիչ առաջընթաց են գրանցել, քան ՀՀ-ն:

Գլոբալ մրցունակության համաթվի ցուցանիշների երկրորդ առանցքային ենթախումբը կազմում են արդյունավետության խթանները, որոնց ընդհանրական գնահատականը ՀՀ տնտեսության համար 2015թ. կազմել է 3.84: Այն ավելի ցածր է, քան վերլուծվող բոլոր երկրների խմբերի համապատասխան ցուցանիշը: Նորից նկատելի է, որ 2006թ. համեմատ ցուցանիշի աճը ՀՀ-ում շատ ավելի փոքր է, քան ԱՊՀ երկրներում ու Եվրոպայի զարգացող և անցումային տնտեսություններում, ինչպես նաև՝ նույն 2006թ. արդյունավետության խթանների առումով ՀՀ տնտեսության մեկնարկային պայմանները երկրների այս երկու խմբերի համեմատությամբ շատ ավելի բարվոք են եղել. ՀՀ գնահատականը՝ 3.43, իսկ մյուս երկու խմբերում՝ համապատասխանաբար՝ 3.23 և 3.26:

Աղյուսակ 1. Գլոբալ մրցունակության համաթվի բաղադրիչների գնահատականները ըստ ՀՀ տնտեսության և տնտեսությունների առանձին խմբերի[5]

	Տարեթիվը	ՀՀ	ԱՊՀ	Աշխարհ	Եվրոպայի զարգացող և անցումային տնտեսություններ	Զարգացած տնտեսություններ
Հենքային պահանջներ	**2015**	4,39	4,51	4,58	4,58	5,53
	2010	4,14	4,14	4,52	4,51	5,43
	2006	4,17	3,67	4,56	3,67	5,39
Արդյունավետության խթաններ	**2015**	3.84	3.98	4.11	4.15	4.98
	2010	3.51	3.74	4.05	4.06	4.87
	2006	3.43	3.23	4.05	3.26	4.85
Նորարարության և բիզնես գործառույթների բարդության գործոններ	**2015**	3.33	3.35	3.78	3.47	4.78
	2010	2.98	3.07	3.68	3.38	4.65
	2006	3.19	2.85	3.76	2.89	4.62

Նմանատիպ պատկեր է նաև «Նորարարության և բիզնես գործառույթների բարդության գործոններ» խմբի պարագայում: Այս գնահատականով ՀՀ տնտեսությունը նորից զիջում է ինչպես ԱՊՀ, Եվրոպայի զարգացած ու անցումային տնտեսությունների, նաև՝ աշխարհի միջին մակարդակին: Մյուս կողմից՝ 2006թ. ՀՀ համապատասխան գնահատականը բարձր է եղել ԱՊՀ, նաև՝ զարգացող ու անցումային տնտեսությունների մյուս խմբի համապատասխան ցուցանիշից:

Ազգային տնտեսության մրցունակության հենքային գործոնների համակարգում ինստիտուցիոնալ զարգացմանը առաջնային դերակա-

[5] Աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական համաժողով, Գլոբալ մրցունակության զեկույցներ:

տարում է վերապահվում: Այս հենասյան համար ՀՀ տնտեսությանը տրվել է 3.78 գնահատական, ինչը չնայած ցածր է աշխարհի միջինից (4.04), սակայն ավելի բարձր է, քան ԱՊՀ միջինը (3.71), նաև` Եվրոպայի զարգացող ու անցումային երկրների համապատասխան ցուցանիշը (3.69): Մյուս կողմից, հենասյան ընդհանրական գնահատականի համեմատաբար բարձր մակարդակը, մեր կարծիքով, լիարժեք պատկերացում չի տալիս ՀՀ տնտեսության ինստիտուցիոնալ համակարգում առկա խնդիրների խորության ու առաջնահերթության մասին: Այսպես, մրցունակության համաթվի «ինստիտուտներ» հենասյունը կազմված է 21 ցուցանիշներից, որոնց մի քանիսի (մեր մոտեցմամբ` համեմատաբար պակաս առաջնահերթ) բարձր գնահատականները գերակշռել են ավելի կարևոր ցուցանիշների ցածր գնահատականներին, ինչի արդյունքում ՀՀ ընդհանրական գնահատականը, ըստ այս հենասյան, ստացվել է համեմատաբար բարվոք: Այսպես, ներդրողների պաշտպանության ձևային կանոնների առկայության, հանցավորության և ահաբեկչության` բիզնեսին պատճառած ծախսերի ցածր մակարդակի, պետական մարմինների կողմից քաղաքականության մշակման ձևային ընթացակարգերի թափանցիկության շնորհիվ այս հենասյան 4 ցուցանիշներին տրվել են 5.0-6.0 գնահատականներ, որոնք չեզոքացրել են «տնտեսության պետական կարգավորման իրավական շրջանակի արդյունավետություն», «դատական համակարգի անկախություն», «հանրային վստահություն քաղաքականության իրականացնողների նկատմամբ», «պետական ծախսերի արդյունավետություն», «պետական պաշտոնյաների որոշումներում հովանավորչությունը» ցուցանիշների խիստ ցածր գնահատականները (2.7–3.1):

Մրցունակության համաթվի ցուցանիշների առաջին ենթախմբի` հենքային պայմանների բաղադրիչների գնահատականների հակասականության վերաբերյալ դատողությունները ամբողջովին տեղին են նաև «Արդյունավետության խթաններ» ենթախմբի պարագայում: Այսպես, ավելի մանրակրկիտ վերլուծության արդյունքում կարելի է տեսնել, որ արդյունավետության խթանների համար ստացված համեմատաբար բարձր գնահատականը ապահովվել է այնպիսի ցուցանիշների հաշվին, ինչպիսիք են` բիզնես սկսելու համար անհրաժեշտ ընթացակարգերի քանակը (ՀՀ-ում պահանջվում է անցնել ընդամենը 2 ընթացակարգերով, որի շնորհիվ այս ցուցանշով 140 երկրների շարքում մեր հանրապետությունը 3-րդ տեղում է), բիզնես սկսելու համար պահանջվող օրերի քանակը (8-րդ տեղ), շահույթի հարկման բեռը (ըստ Համաշխարհային տնտեսական համաժողովի գնահատականների Հայաստանում այն

կազմում է 20.4%, ինչը դիտարկվող տնտեսությունների շարքում 13-րդ արդյունքն է), ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությունը (44-րդ արդյունքը), արտաքին առևտրի սակագները (45-րդ տեղ), առևտրի ֆորմալ խոչընդոտների գերակշռությունը (54-րդ տեղ): Մինչդեռ, չափազանց ցածր գնահատականներ են ստացվել այնպիսի կարևոր ցուցանիշների պարագայում, ինչպիսիք են ՕՈՒՆ կարգավորման հետևանքները գործարարության վրա (109-րդ տեղ), մաքսային ընթացակարգերի ազդեցությունը գործարարության վրա (105-րդ տեղ), արտաքին ներդրումների դերը տնտեսությունում (101-րդ հորիզոնական), հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը (88-րդ տեղ), ներքին շուկաներում մրցակցության ակտիվությունը (85-րդ տեղ), հարկային քաղաքականության ազդեցությունը ներդրումային որոշումների վրա (76-րդ տեղ):

Ստացվում է, որ բիզնեսի գրանցման ու վարման ձևային ընթացակարգերի առաջադիմականությունը, հիմնականում տնտեսության մեջ ստվերային հատվածի էական դերակատարմամբ ու հարկային բեռի անարդյունավետ և ոչ հավասարաչափ բաշխմամբ պայմանավորված շահույթի փաստացի հարկման ցածր դրույքաչափը (ինչը այլ կերպ կարելի է մեկնաբանել որպես անուղղակի հարկման գերակայություն և տնտեսվարող (առաջին հերթին՝ խոշոր) սուբյեկտներից սպառողների վրա հարկային բեռի փոխանցման իրողության արտացոլում), ՀՀ դրամի գերարժևորմամբ, ներմուծման ոլորտում մրցակցության արհեստական սահմանափակմամբ ու հայրենական արտադրողների՝ ներքին շուկաներում մրցակցային դիրքերի թուլացմամբ պայմանավորված ներմուծում/ՀՆԱ հարաբերակցության աճը, ըստ էության, չեզոքացրել են տնտեսության ներդրումային գրավչության, հակամենաշնորհային, հարկային ու մաքսային քաղաքականության ոլորտներում արձանագրված ձախողումներով պայմանավորված և տնտեսության մրցունակությունն էականորեն սահմանափակող լրջագույն մարտահրավերների ներկայացվածությունը հայաստանյան տնտեսության արտաքին մրցունակության գնահատման համապատկերում:

Նույն կերպ, մրցունակության համաթվի 7-րդ հենասյան (Աշխատանքի շուկայի արդյունավետություն) գնահատականով ՀՀ տնտեսությունը 58-րդ տեղն է զբաղեցնում, ինչը նորից պայմանավորված է աշխատանքի շուկայի կանոնակարգման ձևային նորմերի և կանոնների արտաքուստ առաջադիմական բնույթով, մինչդեռ մեր կարծիքով առավել կարևոր ցուցանիշների գնահատականները հայաստանյան տնտեսության պարագայում խիստ ցածր են: Այսպես, աշխատանքի ընդունման և աշխատանքից հեռացման նորմերի ու պրակտիկայի գնահատականով

ՀՀ տնտեսությունը 140 երկրների շարքում 15-րդն է (ցուցանիշի արժեքը կազմել է 4.58, ինչը գերազանցում է ոչ միայն ԱՊՀ (4.23), Եվրոպայի զարգացող և անցումային տնտեսությունների (3.60), այլ նաև զարգացած երկրների միջին մակարդակը (3.92)), իսկ աշխատավարձի սահմանման ճկունություն, գործատու-վարձու աշխատող հարաբերություններում համագործակցություն, աշխատատեղի կրճատմամբ պայմանավորված գործատուի ծախսերի մեծություն ցուցանիշներով՝ 40–44-րդ տեղերում է: Մյուս կողմից, տաղանդների ներգրավման ունակության գնահատականով Հայաստանը աշխարհում 111-րդն է, տաղանդներին երկրում պահելու ունակությամբ՝ 119-րդը, աշխատելու խթանների վրա հարկային քաղաքականության ու վարչարարության ազդեցությամբ՝ 101-րդը, արհեստավարժ կառավարչական կադրերի վստահելիությամբ՝ 93-րդը: Նորից, առանց ցուցանիշների հարաբերական կարևորությունը հաշվի առնելու, դրանց գնահատականների պարզ միջինացման հետևանքով մրցունակության համար համեմատաբար կարևոր գործոնների դերը չեզոքացվում է պակաս կարևորների կողմից, ինչի արդյունքն էլ ՀՀ-ում աշխատանքի շուկայի արդյունավետությունը նկարագրող հենասյան՝ ոչ համարժեք բարձր գնահատականն է:

Ինչ վերաբերում է մրցունակության համաթվի ցուցանիշների երրորդ ենթախմբին, որոնք բնութագրում են տնտեսության նորարարականության աստիճանն ու բիզնես գործառույթների բարդության գործոնները, ապա այստեղ նախորդ երկու ենթախմբերի համեմատ արձանագրվել են վատագույն արդյունքները. ենթախմբի 3.33 գնահատականով ՀՀ տնտեսությունը աշխարհի 140 երկրների շարքում 101-րդն է:

Նորարարականության հենասյան ցուցանիշների գնահատականների վերլուծությունից բխում է, որ ՀՀ-ն ունենալով նշանակալի նորարարական ներուժ, լրջագույն խնդիրներ ունի այն օգտագործելու, նորարարական արդյունք ստեղծելու և այն շուկա հանելու ոլորտներում: Այսպես, գիտնականների ու ճարտարագետների թվաքանակով, նաև՝ հայտնագործությունների համար տրված արտոնագրերի քանակով մեր երկիրը բավականին բարձր տեղեր է զբաղեցնում (համապատասխանաբար 49-րդ և 59-րդ), սակայն հետազոտությունների և մշակումների ոլորտում գիտակրթական հաստատություններ-արդյունաբերություն համագործակցության ինտենսիվության գնահատականով մենք միայն 111-րդն ենք, հետազոտությունների և մշակումների վրա ընկերությունների կատարած ծախսերի մակարդակով՝ 109-րդը, գիտական հետազոտական հաստատությունների որակի գնահատականով՝ 105-րդը:

Այսպիսով, ըստ Գլոբալ մրցունակության համաթվի գնահատականների, Հայաստանի տնտեսության միջազգային մրցունակությունը գտնվում է միջինից փոքր-ինչ բարձր մակարդակի վրա, ինչը գլխավորապես պայմանավորված է մրցունակության հենքային գործոնների առումով արձանագրված համեմատաբար լավ գնահատականներով: Մյուս կողմից, արդյունավետության գործոնների, նորարարականության և բիզնես գործառույթների զարգացման խթանների առումով առկա են լրջագույն խնդիրներ, որոնք վերջին տասնամյակում նկատելիորեն զսպել են հայաստանյան տնտեսության մրցունակության աճը և ներկայումս էլ շարունակում են նույնպիսի ոչ նպաստավոր դերակատարում ունենալ:

Գլոբալ մրցունակության համաթվի ընդհանրական գնահատականով մեր տնտեսության՝ արտաքուստ բարվոք վիճակը մեծապես պայմանավորված է մրցունակության համար ոչ առաջնահերթ նշանակություն ունեցող ձևային կանոնների, ընթացակարգերի, կարգավորումների առկայությամբ, դրանց թվացյալ առաջադիմական բնույթով, ինչը թույլ է տալիս նշված ուղղությունների համար ստանալ համեմատաբար բարձր գնահատականներ և դրանով իսկ՝ կեղծ լավատեսական երանգներ հաղորդել տնտեսության մրցակցային, ներդրումային, նորարարական և ընդհանրապես՝ գործարար միջավայրի առանցքային բնութագրիչների ընդհանրացմամբ ստացվող տնտեսության արտաքին մրցունակության ոչ բարվոք նկարագրին:

Այս համատեքստում կարևոր է, առաջին հերթին, ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականությունում ձևային ընթացակարգերի ու կարգավորումների իրավանորմատիվային բարելավումներից անցնել տնտեսությունում ներքին մրցակցության խթանման, ներդրումային միջավայրի բարելավման, հարկային ու մաքսային վարչարարության կատարելագործման, կրթական համակարգի կենսունակության բարձրացման, նորարարական նախաձեռնությունների խթանման, կենսագործման ու առևտրայնացման գործուն համակարգերի ձևավորման, տնտեսական քաղաքականությանն առնչվող որոշումների կայացման գործընթացներին քաղաքացիական հասարակության և գործարար հանրույթի ակտիվ մասնակցությունը երաշխավորող գործուն մեխանիզմների մշակման ու ներդրման խնդիրների լուծմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. The Global Competitiveness Report 2015–2016. World Economic Forum, 2015: The Global Competitiveness Index 2015–2016 Rankings.
2. Համաշխարհային տնտեսական համաժողովի Գլոբալ մրցունակության համապատասխան տարիների զեկույցները:

3. ՀՀ ԱՎԾ, Մրցունակության համաշխարհային զեկույցներ:
4.Համաշխարհային տնտեսական համաժողով, Գլոբալ մրցունակության զեկույցներ:

АНАЛИЗ ФАКТОРОВ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ЭКОНОМИКИ РА

А. Саргсян

АННОТАЦИЯ

В статье проанализированы состояние и динамика конкурентоспособности экономики РА по Индексу глобальной конкурентоспособности Всемирного экономического форума. Показано, что сравнительно высокая оценка конкурентоспособности экономики РА обусловлена в первую очередь, приемлемым уровнем базовых условий конкурентоспособности. С другой стороны, в контексте факторов эффективности и инновационности экономики, оценки факторов конкурентоспособности достаточно низкие. Кроме этого, наличие прогрессивных формальных правил, процедур, механизмов и норм регулирования экономики позволила нивелировать проблемы в ключевых сферах конкурентной, инвестиционной, налоговой, таможенной, инновационной, научно-образовательной политики. Это обстоятельство свидетельствует о не полной адекватности оценки глобальной конкурентоспособности экономики РА.

Ключевые слова: индекс глобальной конкурентоспособности, факторы конкурентоспособности, базовые условия конкурентоспособности, факторы эффективности, инновационные факторы конкурентоспособности.

ANALYSIS OF COMPETITIVENESS FACTORS OF ECONOMY OF RA

A. Sargsyan

ABSTRACT

In the article the state and dynamics of competitiveness of economy of RA are analysed, based on the Global competitiveness index of the World Economic Forum. It is shown that comperatively high level of competitiveness index of economy of RA is caused first of all, the acceptable level of basic conditions of competitiveness. On the other hand, in the context of factors of efficiency and innovation of economy, the values of competitiveness factors are rather low. Besides, existence of progressive formal rules, procedures, mechanisms and norms of regulation of economy has allowed to neutralize the problems in key spheres of competition, investment, tax, customs, innovation, scientific and educational policies. This circumstance testifies to not full adequacy of assessment of global competitiveness of economy of RA.

Keywords: Global competitiveness index, competitiveness factors, basic conditions of competitiveness, efficiency factors of competitiveness, innovation factors of competitiveness.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՆՁԻ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Ն. Հակոբյան, Ս. Վարդանյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է մասնագիտության փոփոխության (մասնագիտական կարգավիճակի անկում՝ վարընթաց սոցիալական շարժունության արդյունքում) պայմաններում անձի հարմարվողականության առանձնահատկությունները և մասնագիտական վերակողմնորոշման միտումները: Արժեքային ոլորտի աղքատացման արդյունքում նկատվում է նախկին մասնագետի հարմարվողականության ցածր մակարդակ: Ուստի հասուն անձի վերահարմարման ուղիներից է մասնագիտական վերակողմնորոշման արդյունավետ կազմակերպումը, որը բացի անձի հոգեբանական պատրաստականությունից ենթադրում է նաև սոցիալական հոգածություն:

Հիմնաբառեր՝ սոցիալական վարընթաց շարժունություն, մասնագիտական վերակողմնորոշում, հարմարում, սոցիալ-հոգեբանական հարմարում, մասնագիտական հարմարում, հարմարվողականություն, հարմարման ռեսուրս, հարմարման արժեքներ, վերահարմարում:

Տեքստի տվյալ հատվածի մակրոկանխենթադրույթը *տունը, օջախն* է, որը և սահմանված է դրա առաջին բառ-նախադասությամբ՝ *Home!*: Այսինքն՝ այս միկրոտեքստում արտացոլված է *տուն, օջախ* ֆրեյմը և դրանից բխող կարծրատիպը: Ակնհայտ է, որ որոշ բառեր անմիջապես հարում են այդ թեմային՝ ֆրեյմին՝ *room (սենյակ), objects (առարկաներ), dust (փոշի), wall (պատ), photograph (լուսանկար), father (հայր)*, և դրա հետ կապված կարծրատիպային գործողությունները՝ *փոշին սրբել (to dust),* սակայն այստեղ կան նաև միավորներ, որոնք ֆրեյմի մակրոկանխենթադրույթին իմաստով չեն հարում: Դրանք առաջին հայացքից ակնհայտ չեն, սակայն դրանք էլ կարող են մտնել *տուն, օջախ* ֆրեյմի մեջ: Դրանք են *harmonium (ֆիսհարմոնիա), coloured print of the promises (գունավոր տպագիր խոստումագիր)*: Առաջին հայացքից վերջիններս կապ չունեն տան, օջախի հետ, սակայն ֆրեյմի հեռավոր իմաստային բաղադրիչներում դրանք կարող են առկա լինել՝ որպես տան ոչ տիպական առարկաներ:

Բառի համադրելիությունը «սաղմնավորվում է դրա անվանման ակտում՝ արտացոլելով նշվող առարկաների տրամաբանական-հասկացական կապերն ու հարաբերությունները» [19, էջ 245], որը կանխորոշում է տեքստի բառային ներկապակցման միջոցներն ու հարաբերությունները: Ըստ Մ. Հելիդեյի և Ռ. Հասանի՝ ներկապակցումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մի միավորի մեկնությունը կախված է մյուսի մեկնությունից, և որի դեպքում առկա է կանխենթադրույթ [20]: Վերոնշյալ հեղինակները պնդում են, որ բառային միավորի կրկնակի օգտագործումը «…կարող է հիմնված լինել վերեբերության հետևյալ հարաբերությունների վրա՝ 1) նույնություն; 2) ներառում; 3) բացառում; 4) անհամադրելիություն» [20]: Ըստ այս հեղինակների՝ հանդիպում է բառերի համադրելիության մի դեպք, որը հիմնված չէ վերաբերության վրա, այլ ուղղակի պայմանավորված է դրանց հաճախակի համատեղ գործածությամբ, օրինակ՝ հայր-մայր, քույր-եղբայր, արևելք-արևմուտք, սեղան-աթոռ և այլն:

Իմաստի ներառման հարաբերությունները «…տեքստում բավականին հաճախադեպ են, և հնարավոր է, որ տեքստի իմաստային կառուցվածքի մեջ կատարում են ավելի մեծ դեր, քան նույնության

հարաբերությունները» [21, էջ 96]: Իմաստի ներառման հարաբերությունները բնորոշ են իմաստի տարբեր ընդհանրացման աստիճաններ ունեցող բառային միավորներին, այսինքն՝ ծավալով ավելի լայն իմաստ ունեցող միավորը ներառում է ավելի նեղ իմաստ ունեցող միավորը: Լեզվական համակարգում իմաստի ներառման հարաբերությունը դրսևորվում է, երբ լեզվական ճանաչողական կառույցները խմբավորվում են և հիերարխիա կազմում՝ հիմնիմաստի (արխիսեմա) ընդհանրացման տարբեր աստիճանների հիման վրա: Սեռատեսակային հարացույցը իմաստի ներառման հարաբերության մի մասնավոր դեպք է: Սակայն Ջ. Լայոնզի կարծիքով՝ դրանք «…ամենահիմնական հարացուցային իմաստային հարաբերություններն են, որոնց միջոցով կառուցվում է լեզվի բառապաշարը» [22, էջ 478]:

Ի դեպ, եթե ցեղատեսակային հարացույցը ձևավորված է *ամբողջ-մաս* կամ *ընդհանուր-մասնավոր* հարաբերության հիման վրա, ապա ամբողջը, ընդհանուրը կարող է հոգնակիության իմաստ չարտահայտել, սակայն իր տեսակները ցույց տվող բառային միավորների հետ միասին այն կազմում է ամբողջություն: Այս տեսանկյունից դիտարկենք լրագրային հոդվածի մի հատված՝ վերցված aravot.am առցանց պարբերականի կայքից, որը վերնագրված է *Մարդու խառնվածքը՝ ըստ դեմքի*.

Մարդու **դեմքը** բաց գիրք է համարվում: **Դեմքի** յուրաքանչյուր գիծ, ամեն մի **կնճիռ** շատ բան կարող է ասել տվյալ անձնավորության բնավորության և խառնվածքի մասին: Կարևորվում են մարդու **դեմքի** հինգ հատվածներ՝ **հոնքերը, աչքերը, քիթը, բերանը և ականջները**: Ներկայացնում ենք դրանցից երեքի՝ **հոնքերի, աչքերի և քթի** կապվածությունը մարդու բնավորության առանձնահատկությունների հետ [23]:

Ակնհայտ է, որ *դեմք* բառը, լինելով ձևով եզակի, հավաքական ամբողջություն է, քանի որ դեմքը կազմված է մի քանի հատվածից՝ հոնքերը, աչքերը, քիթը, բերանը, ականջները և այլն: *Դեմքը* այստեղ ցեղ ցույց տվող բառային միավորն է, ֆրեյմի մակրոկանխենթադրույթը, իսկ *հոնքերը, աչքերը, քիթը, բերանը և ականջները*՝ տեսակները, տվյալ դեպքում մասերը, որոնք ֆրեյմում հանդիսանում են փոխկապակցված կանխենթադրույթներ են: Օրինակից ակնհայտ է, որ մաս ցույց տվող բառային միավորները կարող են նաև հոգնակի ձև ունենալ՝ *հոնքերը, աչքերը, ականջները*:

Այս հարաբերությունները բացահայտում են, թե ինչ տեղ է զբաղվում տվյալ միավորը և ինչ իմաստային ծավալ ունի ֆրեյմում,

կարծրատիպում՝ ելնելով դրանց մակրոկանխենթադրույթից: Ըստ այդմ՝ ձևավորվում է նաև դրա հարաբերությունների շրջանակը ֆրեյմի, կարծրատիպի մյուս միավորների հետ, որն ի վերջո կանխորոշում է դրա առկայացումը տեքստաշարում և հարաբերությունները տեքստի այլ միավորների հետ:

Իմաստի նույնության հարաբերությունը ենթադրում է, որ տեքստում հանդիպում են միևնույն նշանակությունը, վերաբերելին ունեցող երկու և ավելի լեզվական ճանաչողական կառույց: Հայտնի է, որ նշանակյալի վերացարկման գերագույն աստիճանը դրա հասկացույթն է կամ ֆրեյմը: Եթե միևնույն տեքստում կամ դրա հատվածում՝ միկրոտեքստում, հանդիպում են այդ նույն հասկացույթը մարմնավորող տարբեր լեզվական ճանաչողական կառույց, ապա գործ ունենք իմաստի նույնության հարաբերության հետ: «Լեզվական իմաստի և հասկացույթի միակ տարբերությունն այն է, որ լեզվական իմաստը իմաստային դաշտի մի քվանտ է և կցված է լեզվական նշանին, իսկ հասկացույթը՝ որպես հասկացութոլորտի տարր, լեզվական նշանի հետ կապ չունի» [24, էջ 90–91]:

Այսպիսով, եթե իմաստի նույնության հարաբերությունը դրսևորվում է իմաստով մոտ կամ նույնիմաստ լեզվական միավորների միջև, ապա տեքստը ներկապակցվում է միևնույն հասկացույթի, ֆրեյմի մակրոկանխենթադրույթի հիման վրա լեզվական ճանաչողական կառույցների հոմանիշության կամ կրկնության միջոցով: Ըստ Ջ. Լայոնզի՝ հոմանիշությունը «համարժեքության հարաբերություն է այդ բառի մաթեմատիկական իմաստով. ցանկացած բառային միավոր կարող է հանդես գալ ինքն իր փոխարեն և որոշակի համատեքստում հոմանիշ է ինքն իրեն» [22, էջ 480]:

Ստորև բերված օրինակում միկրոտեքստը ներկապակցված է համատեքստային գաղափարական հոմանիշների շարքի միջոցով, որոնք ստեղծում են ուժգնացող աստիճանավորություն: Այսպիսի հոմանիշային շարքը ներկապակցում է տեքստը խոսույթի կիզակետի՝ որոշակի խոսույթային կանխենթադրույթի առկայացմամբ:

– Ինչ ունեն, որ ինչ դարգեն, դու ձեր տան բանը գիտես ո՞չ: Էս տարի էլ ***հացը բարակ էր****, խեղճ հերդ զոռով* ***ծերը ծերին ա հասցնում****: Նրանից ի՞նչ ես ուզում: Թե ունիս, դու դարգի. հրեն խարջ են ուզում –* ***ձեռին գռոշ չունի*** [25]:

Ակնհայտ է, որ համատեքստային գաղափարական հոմանիշությունը դրսվորվում է ամբողջ պարբերությունով մեկ՝ ներկապակցելով այն և առկայացնելով խոսույթի մակրոկանխենթադրույթը, որը և ապահովում է դրա ամբողջականությունը: Այսինքն՝ համատեքստային հոմա-

նիշների *հացը բարակ էր; ծերը ծերին ա հասցնում; ձեռին գռոշ չունի* շարքը կրում է միևնույն իմաստը՝ ապրուստի միջոց չունենալ:

Այս հոմանիշային շարքը իրականում միևնույն *աղքատություն* ֆրեյմի թեմատիկ բովանդակային միավորներն են՝ ֆրեյմային կանխենթադրույթները, որոնք տեքստում լեզվականանում են գաղափարական հոմանիշության միջոցով: Այս միկրոտեքստը խոսող անհատի ԿՀ-ի միջոցով տեքստի կապակցման վառ օրինակ է, երբ հասցեագրողը, ելնելով իր հաղորդակցական ռազմավարությունից, գործի է դնում իր ԿՀ-ի ֆենոմենոլոգիական բաղադրիչը և ստեղծում ամբողջական խույթ, ապա այդ խույթը վերածում ներկապակցված տեքստի իր ԿՀ-ի լեզվական ճանաչողական կառույցների միջոցով: Որքան հղկված է տեքստի մակերեսային կառույցը, այնքան զարգացած է խոսող անհատի ԿՀ-ի լեզվական ճանաչողական բաղադրիչը. չէ՞ որ նույն խույթը կարելի էր լեզվականացնել արտահայտչությունից զուրկ, պարզունակ լեզվով:

Իմաստի բացառման հարաբերությունը դրսևորվում է միևնույն իրողության փոխբացառող երկու կողմերի միջև, որը տեքստում լեզվականանում է հիմնականում բառային հականիշության միջոցով: Այս տեսանկյունից դիտարկենք ներքոբերյալ օրինակը.

***Deep** down, I'm pretty **superficial** (Ava Gardner)*:

Ավա Գարդների հայտնի ասույթում *deep – superficial* հակադրական հականիշները ստեղծում են ամբողջական խույթ և ներկապակցված տեքստ՝ հիմնվելով *մարդու ներաշխարհ* ֆրեյմի գաղափարախույթի վրա: Մարդը իր ներաշխարհով կարող է լինել խորը, ոչ խորը, մակերեսային, ոչ մակերեսային և այլն: Խույթը ամբողջական է վերոնշյալ ֆրեյմի առկայացման արդյունքում: Մինչդեռ տեքստը ներկապակցվել է՝ *deep – superficial* հակադրական հականիշների ընդհանուր իմաստով, որը ցույց է տալիս, որ դրանք նույն հասկացույթի մաս են կազմում, և տարբերակիչ հատկանիշներով, որը, չնայած իմաստի տարբերություններին, պահպանում է ընդհանուր իմաստը, այսինքն՝ ֆրեյմի մակրոկանխենթադրույթը է: Այսպիսով՝ խոսող անհատը ապահովում է խույթի ամբողջականությունը իր ԿՀ-ի ֆենոմենոլոգիական ճանաչողական բաղադրիչի օգնությամբ, իսկ տեքստի ներկապակցումը՝ ԿՀ-ի լեզվական ճանաչողական բաղադրիչի միջոցով:

Չնայած նկարագրված հարաբերությունները կարող են դրսևորվել լեզվի ցանկացած մակարդակում, սակայն ակնհայտ է, որ բառային ներկապակցումը բնորոշ է լեզվի բառային միավորներին և հենվում է հարացուցային և շարակարգային հարաբերությունների վրա:

Միայն բառային իմաստաբանությունն է, իսկ ավելի ստույգ՝ ճանաչողական բառային իմաստաբանությունն է, որը լեզվական կաղապար է տալիս հասկացույթներին, օժտված է բավարար բացատրական ներունակությամբ տեքստի իմաստային կողմը պատշաճ նկարագրելու համար, որը և կանխորոշում է դրա ներկապակցման հարաբերությունները:

Կառուցել կապակցված տեքստ նախ և առաջ ենթադրում է ընտրել համապատասխան լեզվական ճանաչողական կառույցներ և դրանք այնպես համադրել քերականականական կառույցների, որ դրանք արտահայտեն ամբողջական հասկացութային իրողություններ՝ պրոպոզիցիաներ: Լեզվական ճանաչողական կառույցների ընտրությունը պայմանավորված է հասցեագրողի նպատակներով և մտահղացմամբ և չի հակասում հաղորդակցական կամ դենոտատիվ իրավիճակին: Խոսույթը լեզվականացնելու համար խոսող անհատը կարող է կիրառել տարբեր բառաքերականական դասերի՝ խոսքի մասերի միավորները, որոնք ունեն ինչպես ընդհանուր, այնպես էլ տարբերակիչ իմաստային հատկանիշներ՝ հիմնվելով դրանց համակարգային հարաբերությունների՝ հարացուցային և շարակարգային վրա:

Փաստորեն՝ տեքստի կառուցման ժամանակ հասցեագրողի համար ամենաբարդը լեզվական ճանաչողական կառույցների ընտրությունն է: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որպես կանոն խոսող անհատը ընտրում է տեքստի լեզվական ճանաչողական կառույցները անմիջապես դրա կառուցման ընթացքում: Որպեսզի խոսող անհատի լեզվական, հաղորդակցական, գործաբանական ունակությունները լիարժեք դրսևորվեն լեզվամտածական գործընթացում, անհրաժեշտ է, որ նրա ԿՀ-ի լեզվական ճանաչողական բաղադրիչը ձևավորված լինի: Դա ապահովում է լեզվամտածական գործընթացի ինքնաբերականությունը: Այսպիսով, լեզվամտածական գործընթացը կարգավորվում է խոսող անհատի ԿՀ-ի բովանդակությամբ և դրա գործառման մեխանիզմներով, որոնք արտացոլված են նրա ԿՀ-ի մեջ՝ որպես մի կողմից ֆենոմենոլոգիական, մյուս կողմից լեզվական ճանաչողական կառույցներ, գիտելիքներ: Առաջինը տեքստը կառուցում է հասկացութային-բովանդակային տեսանկյունից, երկրորդը՝ զուտ լեզվական: Դրա մասին է վկայում նաև այն, որ գիտելիքների միևնույն պաշարից կարող են «…համադրվել տարբեր նկարագրություններ, …միևնույն գիտելիքների պաշարով հնարավոր է տարբեր ռազմավարություններ իրականացնել և ստանալ տարբեր տեքստեր» [26]:

ԿՀ-ում արտացոլված նախադիպային իրողությունները, ֆրեյմները և կարծրատիպերը կարող են ծառայել որպես տեքստի կառուցման

ձևանմուշ: Այսպիսով, խոսող անհատը ձևավորում է տեքստի սերման ճանաչողական ձևաչափ, որը հեշտացնում է լեզվական ճանաչողական կառույցների ընտրությունը և համադրությունը: Դրա նպատակն է առկայացնել խոսույթով կանխորոշված գործաբանական ցուցիչները՝ նպատակ, մտահղացում:

Այսպիսով, ամբողջական և ներկապակված տեքստը խոսող անհատի բարդ լեզվամտածական գործունեության արգասիք է, որն արտացոլում է նրա ԿՀ-ի ամբողջ ներունակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Караулов Ю.Н.* Русский язык и языковая личность / Ю.Н. Караулов / Отв. ред. Д.Н. Шмелев. АН СССР. Отд-ие лит. и яз. М.: «Наука», 1987.
2. *Johnstone B.* The Linguistic Individual: Self-Expression in Language and Linguistics, Oxford Universty Press, 1996.
3. *Соссюр Ф. де*, Курс общей лингвистики, М., 1933.
4. *Morris J., Hirst G.*, Lexical cohesion computed by thesaural relations as an indicator of the structure of a text // Computational Linguistics, 17 (1), New York, 1991. PP. 21–48.
5. *Barzilay R., Elhadad M.,* Using Lexical Chains for Text Summarization *II* ACL/EACL Workshop Intelligent Scalable Text Summarization. Madrid, 1997.
6. *Halliday M., Hasan R.,* Cohesion in English. Longman, London, 1976.
7. *Селезнев Д.Л.,* Референция и номинация // Моделирование языковой деятельности в интеллектуальных системах. М.: Наука. 1987. СС. 64–77.
8. *Андреева Е.С.* Диалектика текста: Понятийная сеть как логическая основа естественного языка. М., 2002.
9. *Беляевская Е.Г.,* Семантическая структура слова в номинативном и коммуникативном аспектах (когнитивные основания формирования и функционирования семантической структуры слова): Дисс. ...доктора филол. наук. М.: МГЛУ, 1991.
10. *Fillmore Ch.* Verbs of judging; Exercises in semantic description // Studies in Linguistic Semantics /Fillmore and Langendoen eds./, New York: Holt, Rinehart & Winston, 1971. PP. 273–291.
11. *Откупщикова М.И.,* Синтаксис связного текста. Л., 1982.
12. *Гак В.Г.,* К проблеме семантической синтагматики // Проблемы структурной лингвистики. М., 1972. СС. 372–387.
13. *Չարենց Ե.*, Ամբոխները խելագարված, http://blog.1in.am/blog/3586.html
14. *Гак В.Г.* Языковые преобразования. М.: Школа «Языки русской культуры», 1998.
15. *Акунин Б.,* Азазель, М: Захаров, 1998.
16. *Лайонз Дж.,* Введение в теоретическую лингвистику. М., 1978.
17. *Папина А.Ф,.* Текст: его единицы и глобальные категории: Учебник для студентов-журнилистов и филологов. М.: Едиториал УРСС, 2002.
18. *Joyce J.,* Eveline,
19. http://www.appohigh.org/ourpages/auto/2014/9/22/47339516/eveline.pdf
20. *Телия В.Н.* Семантический аспект сочетаемости слов и фразеологическая сочетаемость // Принципы и методы семантических исследований. М.: «Наука», 1976. СС. 244–267.
21. *Халлидей М.А.К., Хасан Р.* Когезия в английском языке // Исследования по теории текста. Реферативный сборник. М., 1979. СС. 108–115.

22. *Гак В.Г.* Повторная номинация на уровне предложения // Синтаксис текста. М., «Наука». 1979. СС. 91–102.
23. *Лайонз Дж.* Введение в теоретическую лингвистику. М., 1978.
24. http://www.aravot.am/2009/05/16/359943/
25. *Попова З.Д., Стернин И.А.,* Очерки по когнитивной лингвистике. Изд-ие 2-е, стереотипное. Воронеж, 2002.
26. *Թումանյան Հ.*, Գիքորը: http://armenianhouse.org/tumanyan/fiction-am/giqor.html
27. *Маккьюин К.,* Дискурсивные стратегии для синтеза на естественном языке // Новое в зарубежной лингвистике: Вып. XXIV. Компьютерная лингвистика: Пер. с англ./ Сост., ред. и вступ, ст. Б.Ю. Городецкого. М.,1989. СС. 311–356.

СВЯЗНОСТЬ И КОГЕРЕНТНОСТЬ ТЕКСТА ПОСРЕДСТВОМ ЯЗЫКОВЫХ КОГНИТИВНЫХ СТРУКТУР ПРЕСУППОЗИЦИОННОЙ БАЗЫ

Г. Ж. Товмасян

АННОТАЦИЯ

В статье рассматривается лексическая связность и когерентность текста посредством языковой составной части пресуппозиционной базы. По итогам исследования: на начальной стадии формирования текста говорящая личность выбирает когнитивные конструкции из своего сознания – фреймы, стереотипы, которые в дальнейшем войдут в основу дискурса, а именно, внутренней речи. Далеее, говорящая личность на основе предсказуемого пресуппозиционного содержания фрейма и стереотипа выбирает лексические единицы, которые максимально отражают пресуппозиции, находящиеся в слотах фрейма и стереотипа, выражая их на поверхностной структуре текста языковыми когнитивными структурами пресуппозиционной базы.

Ключевые слова: пресуппозиционная база, говорящая личность, связность и когерентность текста, когнитивные структуры, лексическая связность, дискурс.

TEXT COHESION AND COHERENCE VIA THE LINGUISTIC COGNITIVE STRUCTURES OF PRESUPPOSITION BASE

H. Tovmasyan

ABSTRACT

The article dwells upon lexical cohesion and coherence of the text via the linguistic cognitive component of the presupposition base. The findings of the study reveal that initially the speaking individual chooses the pertinent cognitive structures, that is, frames and stereotypes from his/ her consciousness which will further make the basis of the discourse, inner speech. Further, he/ she, relying on the predictable presuppositional information of the frame and stereotype, chooses the lexical items that maximally reflect the content of the slots of the frame and sterotype, thus, expressing them via the linguis-

tic cognitive structures of the presupposition base in the surface structure of the text.
Keywords: presupposition base, speaking individual, text cohesion and coherence, cognitive structures, lexical cohesion, discourse.

СЕМАНТИЧЕСКИЕ ГРУППЫ МИМИЧЕСКИХ АДМИРАТИВОВ РУССКОГО ЯЗЫКА

С.С. Мисисян

Российско-Армянский университет
sese92@yandex.ru

АННОТАЦИЯ

Данная научная статья посвящена исследованию мимических адмиративов русского языка. В теоретической части нами была отмечена важность исследуемой проблемы, в практической части – произведена классификация мимических адмиративов на основе семантических признаков. Данными для осуществленной классификации послужили лексикографические источники, а также примеры из художественной литературы, обнаруженные нами на сайте Национального корпуса русского языка (НКРЯ). Результаты проведенного исследования могут быть полезны для составления лекций по лексикологии и фразеологии, при написании рефератов, курсовых, дипломных и магистерских работ, а также при написании лексикографических трудов (например, при сборе материала для словаря эмоций).

Ключевые слова: семантика, кинесика, мимические адмиративы, эмоции, удивление.

Кинесические средства в общении выполняют выразительно-регулятивную функцию. Выразительные движения проявляются в мимике, позе, взгляде, походке. Особая роль отводится мимике – движениям мышц лица. Главной характеристикой мимики являются ее целостность и динамичность. Это означает, что в мимическом выражении шести основных эмоциональных состояний (гнев, радость, страх, страдание, удивление и отвращение) все движения мышц скоординированы. Мимические выражения не зависят от национальности и культуры человека, т.е. выражаются одинаково.

Лицо, мимика – самый верный источник, по которому можно узнать эмоции людей. Контролировать мимику очень сложно, тем более человеку, переживающему бурные эмоции, будь то радость, страх, гнев или удивление. Зачастую изменения на лице остаются дольше, чем человек испытывает ту или иную эмоцию.

Эмоция удивления считается самой короткой. Это чувство обычно быстро проходит, однако воздействие остается в виде широкой улыбки, приподнятых бровей, круглых глаз, или, к примеру, человек, испытывающий удивление, распахивает глаза, открывает рот и, скорее всего, забывает закрыть его.

Все изменения, происходящие на лице человека, называются мимикой, каждое из них по отдельности – мимическим жестом, а мимические жесты, выражающие удивление, принято называть кинесическими адмиративами[1].

В своем труде «Невербальная семиотика» Г.Е. Крейдлин толкует мимический жест следующим образом:

«Человек Х *делает большие глаза* по поводу Р, размер глаз Х-а становится больше нормы, что свидетельствует о том, что Х очень удивлен тому, что Р не понимает, что происходит» [Крейдлин 2002: 310].

Рассмотрим, как изменения, происходящие на лице человека, переживающего эмоцию удивления, могут отражаться во фразеологических единицах русского языка. Ниже представлена произведенная на основе семантического признака классификация мимических адмиративов.

1) **Изменение формы глазной щели:**

- расширение:
  - ***смотреть большими глазами, смотреть широко раскрытыми глазами, распахнуть глаза, открыть глаза, растопырить глаза, делать большие глаза.***

Например:

– Ты сколько раз был за Чертой?

– Один, – привычно соврал Фома.

– Да перестань ты! – поморщился Сати. – Системой зарегистрировано, по меньшей мере, сорок.

– Да?! – ***Сделал большие глаза*** *Фома. – Она зарегистрировала гораздо больше, чем я мог. (С. Осипов) [НКРЯ].*

- сужение:
  - ***сощуриться, зажмуриться.***

Например:

– Хотите сказать, барон, что русские быстрее априори, и нашим парням остается лишь бить головой о потолок своих возможностей, отпущенных природой? Но, черт возьми, это какая-то не наша точка зрения.

– То есть славяне, – усмехнулся Шлоссер, – как говорит нам наш дражайший Геббельс, не могут иметь никакого другого таланта, кроме таланта к послушанию, и склонности к любой иной работе, кроме черной?

– А вы считаете иначе? – ***сощурился*** *лысач так, будто перед ним была бродячая собака, рожающая в лопухах. (М. Елизаров) [НКРЯ].*

- **округление:**

[1] Адмиратив – это категория, маркирующая неожиданность ситуации для говорящего: говорящий удивлен тем, что маловероятный факт имеет (имел) место.

- ***смотреть круглыми глазами, делать круглые глаза.***

Например:

– Неужели болит? Как странно! Такой прекрасный зуб! Так, значит, болит? Ну, это ужасно! Такой зуб! Прямо удивительный! <…>

Он [врач]быстро нагнулся и ткнул меня булавкой в язык. <…>

– Извините, мадам, это все, что я могу для вас сделать.

Я молча смотрела на него и сама чувствовала, какие у меня ***стали круглые глаза****. (Н. Тэффи) [НКРЯ].*

2) **Движения органов зрительной системы:**

➢ **поднятие глазных яблок вверх**:

- ***поднимать глаза вверх, обращать глаза вверх, обращать глаза к небу; закатывать глаза (под лоб); глаза на лоб лезут/полезли.***

Например:

Православная скульптура вообще редкость, – говорила она. – Церковь скульптурные изображения не одобряет, считает их слишком плотскими. В центральной России вы ее, кажется, вообще не встретите. Попадается только в медвежьих уголках, где священники не успевали доглядеть, там, где они были полуобразованными и всех канонов просто не знали. А то, что у нас, – уникально. Мало того, что целый зал, еще и лица у них совершенно необыкновенные.

–Чем же? – спросила я.

– А они все – комики. И Иисус, и Николай Чудотворец.

– Как – комики? – у меня ***глаза на лоб полезли****. – Это уж не нарушение канонов, а прямое глумление над святынями получается. Они что – на манер скоморохов, что ли, изображены?* (А. Ткачева) [НКРЯ].

В данном примере эмоция удивления перерастает в такие негативные эмоции, как возмущение, негодование, крайнее недовольство. Это свидетельствует о реализации сразу нескольких модальностей.

выступ глазного яблока из глазницы:

- ***выкатить глаза, вытаращить глаза, выпучить глаза, вылупить глаза, глаза из-подо лба вылезли, глаза вылезают из орбит; глаза по пятаку, глаза вон лезут.***

Например:

– Тебе одна дорога, мне – другая… Прощай, брат! – И он махнул рукою.

Странник изумленно ***вытаращил глаза*** *и* ***вскочил на ноги****.* (В. Вересаев) [НКРЯ]

Отметим, что в составе данного примера помимо мимического (*вытаращить глаза*) имеется также корпоральный адмиратив (*вскочить на ноги*), а также лексема, обозначающая наивысшую степень удивления (*изумленно*).

- **движение век:**
  - ***хлопать глазами, моргать глазами, мигать глазами, глазами хлоп.***

Например:

Но когда через две-три минуты лейка должна была опустеть, она снова оказалась полной. Вслед за комнатной водой полилась холодная, родниковая, и это огорчило Шотландскую Розу. «Каким же образом, – подумала она, – лейка снова наполнилась, не заставив Васю бежать к водопроводному крану?» Вася смутился, хотя свидетелем этого случая был только Кот, который долго в недоумении ***хлопал глазами****. Хлопала бы, без сомнения, и Шотландская Роза, если бы у нее были глаза.* (В. Каверин) [НКРЯ].

Рассмотрев на материале художественной литературы паремиологические единицы, имеющие в своем составе мимические адмиративы, связанные с движением глаз, можем отметить, что на лице, выражающем удивление, происходят следующие изменения: глаза широко открыты, нижние веки расслаблены, а верхние веки приподняты. В состоянии удивления узкие полоски белков глаз (склеры) становятся видны между верхним веком и радужной оболочкой (окрашенной центральной частью глаза). Склера может также быть видна и ниже радужной оболочки, но это зависит от того, насколько глубоко посажены глаза и опущена ли нижняя челюсть достаточно низко, чтобы натянуть кожу под глазами. Таким образом, когда виден белок ниже радужной оболочки глаза, это не является таким же надежным индикатором удивления, как появление склеры между верхним веком и радужной оболочкой. Такие раскрытые глаза могут дополнять эмоцию удивления возникшим интересом, что в некоторых случаях может иметь словесное выражение, например, соответствовать такому восклицанию, как: «Здорово!»

Следует отметить, что «удивленные глаза» обычно дополняются «удивленными бровями», «удивленным ртом» или тем и другим одновременно (об этом см. ниже).

3) Вариации взгляда:

- **продолжительный взгляд в одну сторону, зафиксированный в одном положении:**
  - ***вскидывать глаза, поднимать глаза, пристально посмотреть, воззриться, уставиться, глазеть, пялиться, вытаращиться, вылупиться, смотреткак баран на новые ворота,***

смотреть как гусь на зарево, смотреть во все глаза, смотреть как зачарованный, смотреть как завороженный, переглядываться, посмотреть друг на друга.

Например:

– А что в нем [в чемоданчике] такое? – впервые пришло в голову Длинноволосому. – Что в нем такое, что я его таскаю?

– Открой да посмотри, – посоветовал Иудей.

Длинноволосый ***уставился*** *на собеседника с изумлением: как это ему раньше не приходило в голову? Но ведь не приходило же…* (Л. Улицкая) [НКРЯ].

- **по сторонам:**
  - ***осмотреться, оглядеться, посмотреть вокруг, сделать дикие глаза, сделать безумные глаза, распустить глаза.***

Например:

– Мы не волнуемся, даже когда они разгуливают по парку. Сегодня просто слишком много народу, и мы во избежание недоразумений решили не выпускать животных.

– Много народу?!

Я изумленно ***огляделся****, но, кроме считанных пар, затерявшихся среди бескрайних аллей парка, ровно никого не заметил.*

– Не удивляйтесь, – аппетитно затянувшись трубкой, пояснил ветеринар, – у нас очень большой парк. Людям есть где разбрестись. Как бы в подтверждение его слов на лужайке возле громадного дуба я заметил отдыхающее семейство. (В. Запашный) [НКРЯ].

- **сбоку:**
  - **смотреть исподлобья.**

Например:

Грудной ребенок заворочался и пискнул. Ольга тотчас же умолкла и неловко и суетливо принялась раскутывать Петю, который ***смотрел исподлобья*** *удивленно и строго и не выпускал руки Мавры Ивановны.* (З. Гиппиус) [НКРЯ].

4) **Движение бровей:**

- **по направлению вверх:**
  - ***поднимать брови, приподнимать брови, вскидывать брови, взметать брови, взмахивать бровями, повести бровью/бровями, брови ползут, брови поднимаются вверх, брови на лоб полезли.***

Например:

– Я хотел бы исповедаться.

<…>

– Тогда пойдем.

– А нельзя нам остаться здесь?

*Стефан удивленно **повел бровями**.* (Ж. Гранже) [НКРЯ].

- **сведение:**
  - ***сдвинуть брови, нахмурить брови, нахмуриться.***

Например:

Однажды, когда Шут уходил из школы, к нему вдруг подошла Ира и сказала, премило улыбаясь:

– Валенька, понеси-ка мой портфельчик.

*Шут остановился, **нахмурил брови** и, внимательно оглядев Иру с головы до ног, точно впервые ее видел, произнес:*

– Откуда ты такая пришла, красавица?

– А ты проводи меня до дому. Глядишь, и узнаешь, откуда я, такая, пришла, – ничуть не смутившись, ответила Ира. (Ю. Вяземский) [НКРЯ].

Реакция на явление, вызывающее удивление, может быть как положительной, так и отрицательной. Это значит, что в большинстве случаев удивление влечет за собой другие, оценочно маркированные – позитивные и негативные – модальности, в зависимости от ситуации. В приведенном выше примере действующее лицо (Шут), удивившись, испытывает также восхищение и интерес.

У человека, испытывающего эмоцию удивления, брови чаще всего изгибаются и приподнимаются. Кожа под поднятыми бровями растягивается и становится более заметной, чем обычно. Поднятие бровей приводит к появлению длинных горизонтальных морщин на лбу. Если брови удерживаются в приподнятом положении в течение нескольких секунд, то выражение лица становится эмблемой **сомнения** или **вопроса**. Часто так поступает человек, слушая, что говорит ему кто-то другой, таким образом, он без слов выражает вопрос или сомнение в том, что ему говорят. Вопрос или сомнение могут быть серьезными или нет; часто такая эмблема выражает ироническое **сомнение, скептицизм** или **удивление** слушателя по поводу сказанных слов. Все эти изменения, выражающие удивление, как показывают приведенные выше примеры, находят свое отражение в языке.

5) **Движение рта:**

- **открытие:**

- ***открыть рот, раскрыть рот, растянуть рот, разинуть рот, разинуть варежку, широко раскрыть рот, с разинутым ртом.***

Например:

Карпекина встает с парты и подходит к ним:

– Ну-ка, отпусти его. Она никогда не лезет ни в какие драки и с нами вообще не разговаривает, считает, что мы козлы и идиоты. Бы ра ***разинул рот*** *от удивления, но Куню не отпускает.* (В. Козлов) [НКРЯ].

- ***челюсть отвалилась, лицо вытянулось, физиономия вытянулась.***

Например:

– Я хочу попросить прощения за себя самого, за то, что я такой, какой я есть… Я… мне очень больно, что все так получается. Я обязательно постараюсь исправиться и не быть больше таким… занудливым, высокомерным всезнайкой, сделав над собой усилие, выговорил он.

У Баб Ягуна даже ***челюсть отвисла****: ничего себе, сказать такое про себя!*

(Д. Емец) [НКРЯ].

➢ **Улыбка или невольное искажение черт лица:**

- ***улыбнуться, скривить губы***

Например:

Вслед за этим Тиир схватился с Лукусом, движения палок моментально слились в неразличимый веер, вскоре белу, тяжело дыша, остановился и, потирая ушибленное предплечье, удивленно ***улыбнулся****:*

– Очень неплохо! Пожалуй, нисколько не хуже Хейграста. Хотя, конечно, многие приемы отличаются. Я признателен тебе, Тиир, за науку. (С. Малицкий) [НКРЯ]

Мимические адмиративы, связанные с движением рта, выявляют следующие кинесические изменения: в момент удивления нижняя челюсть опускается, в результате чего разжимаются зубы и размыкаются губы. Приоткрытый от удивления рот расслаблен, не напряжен. Губы не сомкнуты и не оттянуты назад. Вместо этого рот выглядит так, будто он раскрылся естественным образом. Рот может быть открыт лишь слегка, умеренно приоткрыт или раскрыт более широко, и эта степень раскрытия зависит от того, насколько сильным оказывается удивление.

Челюсть может опускаться без каких-то движений остальных элементов лица, опущенная челюсть выражает более высокую степень удивления – ошеломление.

6) **Тремор лицевых мышц**:

- ***лицо задергалось.***

Например:

– Я предлагаю вам десять миллионов долларов за этот старый и ржавый кусок железа.

– Не смешите меня, фрау Мария, – отмахнулся директор, даже не поворачивая головы, – этот экспонат не имеет цены.

– Как насчет ста миллионов?

***Лицо** директора **дернулось**, но все же он отрицательно покачал головой.*

– Ну, хорошо, миллиард американских долларов. (В. Исаев) [НКРЯ].

7) **Изменение цвета кожи:**

- **гиперемия**:
  - ***покраснеть.***

Например*:*

*– Ваше превосходительство! – как-то торжественно сказал он, поднося ее на ладони генералу, прежде чем тот мог опомниться от удивления при виде такого неожиданного поступка, – вы знаете, сколько моей крови ухлопано на эту золотую штуку… Поменяемся, ваше превосходительство … на племянника! Генерал весь **покраснел** от удивления и гнева.* (И. Омулевский) [НКРЯ].

Удивление, будучи самой короткой из всех эмоций, часто сопровождается либо сменяется другими эмоциями. Данный пример демонстрирует процесс трансформации удивления в гнев.

Как было отмечено выше, степень интенсивности проявления эмоции удивления может выражаться в ее смежных модальностях, таких, как странность и неожиданность. В данном примере гиперемия отражает удивление и одновременно негодование, вызванные неожиданностью, что находит в тексте свое словесное выражение.

- **побледнение:**
  - ***побледнеть, сделаться белым как стенка.***

Например:

И этого мудрого человека встретил я однажды в одном месте... в очень нехорошем месте! Он по-гусарски дул шампанское и сидел с хорошенькой пухленькой француженкой...

*– Что вы делаете, герр профессор?!?! – воскликнул я, **побледнев** от удивления.*

– Глупость, сын мой! – отвечал мудрец, наливая мне шампанского. – Я делаю глупость...

– Для чего же??!

– А для того, сын мой, чтобы проветрить малость атмосферу... За женщин и вино!

Я выпил и еще более ***побледнел*** *от удивления.* (А. Чехов) [НКРЯ].

Как мы уже отмечали выше, удивление длится не более нескольких секунд. Оно моментально проходит, однако, как только человек осознает произошедшее, на смену удивлению приходят другие эмоции, такие, как, например, радость, облегчение, отвращение, гнев или же страх. Данный пример иллюстрирует реализацию не только модальности удивления, но и страха. Кстати, хотим отметить, что кинесические средства выражения эмоций удивления и страха во многом совпадают, что делает затруднительным, а иногда даже невозможным их разграничение. Естественно, это явление отражается и в языке. Многие адмиративы многозначны и в зависимости от контекста могут реализовывать как модальность удивления, так и модальность страха.

- **цианоз:**
  - ***посинеть, лицо сделалось серым.***

Например:

Землемер Скоморохов ***посинел*** *от удивления, не в силах сообразить, как и что считать.* (В. Палей) [НКРЯ].

Кроме мимического адмиратива, связанного с изменением цвета кожи, в составе предложения содержится адмиратив, связанный с движением глаз.

Как видим, при выражении эмоции удивления основную информационную нагрузку несут брови и губы, а также область вокруг рта. Немаловажную роль играет взгляд, или визуальный контакт. С помощью глаз передаются самые точные сигналы, ведь расширение и сужение зрачков не поддается сознательному контролю.

Важно отметить, что испытываемая эмоция удивления различается по своей интенсивности. Чаще всего степень интенсивности находит свое отражение на лице. Лицо может выражать удивление двумя зонами. Условно назовем их следующим образом: верхняя(лоб, брови, глаза) и нижняя (область рта, челюсть).

В верхней части лица зачастую наблюдаются незначительные изменения бровей (немного приподнимаются) и глаз (расширяются и открываются чуть шире). Основным же индикатором интенсивности удивления является нижняя часть лица. Чем сильнее удивление, тем шире раскрывается рот. Проявления крайнего удивления часто сопровождаются восклицаниями, на-

подобие «О-о!» или «Ого!», произнесение которых в той или иной мере визуально удлиняет челюсть.

Удивление может быть выражено посредством вышеуказанных двух областей лица, при этом третья (средняя) область останется нейтральной. Лицо, на котором удивление проявляется в двух зонах, свидетельствует об особой степени интенсивности проявления эмоции удивления.

Удивление выглядит вопросительным, когда выражение удивления на лице создается только за счет движений верхней зоны (бровей и глаз). «Удивление достигает изумления, когда оно выражается на лице только за счет движений глаз и рта. Удивление выглядит подобным ошеломлению, когда оно выражается только движениями бровей и рта» [Экман 2013: 39–41].

Учитывая психологические и лингвистические особенности выражения исследуемой эмоции, можно выделить следующие универсальные характеристики: удивление – неопределенное амбивалентное эмоциональное состояние, поддающееся градации и имеющее короткий период протекания, которое стимулирует процесс познания и может иметь заметное физиологическое влияние на человека. Внешние изменения, происходящие с человеком, испытывающим эмоцию удивления, закрепляются в языке и могут использоваться в качестве устойчивых сочетаний. Подобные лексические и фразеологические сочетания могут иметь как узуальное употребление, так и контекстуальное. Многие лексические и фразеологические единицы, за которыми изначально не закреплено значение выражения эмоции удивления, могут в контексте, в особом лингвистическом окружении, получить дополнительные семантические характеристики и использоваться в качестве адмиратива.

Еще одна особенность репрезентации эмоции удивления в языке заключается в синкретизме. Очень часто в кинесическом поле удивления встречается переплетение нескольких значений: адмиративы могут быть выразителями других эмоций.

ЛИТЕРАТУРА

1. *Крейдлин Г.Е.* Невербальная семиотика: Язык тела и естественный язык. М.: НЛО, 2002. 581 с.
2. *Экман П.* Психология эмоций: я знаю, что ты чувствуешь: [пер. с англ.]. Питер, 2013. 333 с.
3. *Акишина А.А., Кано Х., Акишина Т.Е.* Жесты и мимика в русской речи. Лингвострановедческий словарь. М.: Русский язык, 1991. 146 с.
4. Большой толковый словарь русского языка / Гл. ред. С.А. Кузнецов.
Первое издание: С-Пб.: Норинт, 1998.
5. *Мелкумян Р.Л., Погосян П.М.* Русско-армянский фразеологический словарь. Ер.: ЕГУ, 1975. 615 с.
6. Русский язык: энциклопедия // Гл. ред. Ф.П. Филин. М.: Сов.энцикл., 1979. 432 с.

7. *Степанова М.И.* Фразеологический словарь русского языка. Изд. 2-е, испр. и доп. С-Пб.: Виктория плюс. 2009. 608 с.
8. *Фасмер М.* Этимологический словарь русского языка. В 3-х т. М.: Прогресс, 1964. 562 с.
9. Национальный корпус русского языка [НКРЯ]. Электронный источник: http://www.ruscorpora.ru/ [дата обращения: 01.05.2015г.]

SEMANTIC GROUPS OF MIMIC ADMIRATIVES OF RUSSIAN LANGUAGE

S. Misisyan

ABSTRACT

The article is devoted to the consideration of mimicaladmiratives of Russian language. In the theoretical part the importance of researched problem is shown, in the practical part the classification of mimicaladmiratives by semantic sign is done. Data for the implementation of the classification served lexicographical sources and examples from literature taken from the National Corpus of Russian Language (NCRL). The results of this research can be useful in preparing lectures on lexicology and phraseology, in writing essays, dissertations and master's works, as well as in writing lexicographical works (for example, when collecting material for a dictionary of emotions).

Keywords: Semantics, Cinesics, Mimical Admiratives, Emotions, surprise.

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՄԻՄԻԿԱԿԱՆ ԱԴՄԻՐԱՏԻՎՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

Ս.Ս. Միսիսյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է ռուսաց լեզվի միմիկական ադմիրատիվների հետազոտությանը: Տեսական մասում նկարագրվում է բարձրացվող խնդրի կարևորությունը, գործնականում՝ առաջարկվում է միմիկականադմիրատիվների դասակարգումը ստիմաստաբանական առանձնահատկությունների: Դասակարգման համար հիմք են հանդիսացել բառարանագրական աղբյուրները, ինչպես նաև գեղարվեստական գրականություն իցօրինակները՝ վերցված Ռուսաց լեզվի ազգային կորպուսից (ՌԼԱԿ): Իրականացված հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել բառագիտությանը և դարձվածաբանությանը նվիրված դասախոսություններ կազմելիս, ռեֆերատներ, կուրսային, դիպլոմային, մագիստրոսական աշխատանքներ գրելիս, ինչպես նաև բառարանագրական աշխատանքներ գրելիս (օրինակ՝հույզերի բառարան կազմելու համար նյութեր հավաքելիս):

Հիմնաբառեր՝ իմաստաբանություն, կինեսիկա, միմիկական ադմիրատիվներ, հույզեր, զարմանք:

ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ՀԱՆԴԻՊԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԵՎ ՌՈՒՍԱՑ ԳՐԱԿԱՆԼԵԶՈՒՆԵՐԻ[1]

Դ. Գյուլզատյան, Ռ. Ավետիսյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Դրական աստիճան, բաղդատական աստիճան, համաստիճան համեմատություն, տարաստիճան համեմատություն, ինքնառարկայական բաղդատական, այլառարկայական բաղդատական, բաղդատիչ, գերադրական աստիճան, միջաստիճանային սահմանախախտություն կամ աստիճանախախտություն, գերադիր:

Որակական կամ որպես այդպիսին դրսևորվող հարաբերական ածականների հատկանիշները սովորաբար համեմատելի են: Առարկայի կամ առարկաների նույնական հատկանիշների համեմատությունը, ահա, կազմում է աստիճանակազմության հիմքը: Համեմատության աստիճանը, այսպիսով, առարկայի հատկանիշի չափն է: Ածականը դիտարկվող լեզուներում համեմատության երեք աստիճան ունի՝ դրական, բաղդատական, գերադրական: **Դրական աստիճանը** որակական ածականի ելակետային ձևն է և համեմատության աստիճանների **աննշույթ քերույթը**: Սա ցույց է տալիս հատկանիշ՝ առանց այլ կամ նույն առարկայի միևնույն հատկանիշի համեմատության: Քանի որ աստիճանակազմության տեսանկյունից հայոց և ռուսաց գրական լեզուներն ունեն թե՛ ընդհանրություն, թե՛ տարբերություն, ստորև բաղդատական և գերադրական աստիճանների կազմությունը կներկայացնենք զուգադրական համեմատությամբ՝ անելով համապատասխան եզրահանգումներ:

1. **Բաղդատական աստիճանը** ցույց է տալիս համեմատելի հատկանիշ՝ ա) տարբեր առարկաների նույն հատկանիշ(ներ)ի հարաբերությամբ, բ) նույն առարկայի՝ տարբեր իրադրություններում դրսևորվող միևնույն հատկանիշի հարաբերությամբ:

Ա) Բաղդատական աստիճանը **հայերենում** կազմվում է **վերլուծական եղանակով**՝ համեմատելի հատկանիշից առաջ գործածելով

[1]Սույն ուսումնասիրությունը կատարված է Հայ-Ռուսական համալսարանում ՌՖ ԿԳ նախարարության կողմից ՀՌՀ-ում գիտահետազոտական գործունեության նպատակով հատկացված դրամաշնորհի շրջանակներում:

(եթե շրջում շարադասություն չէ) ***նույնքան, պես, նման, չափ, ավելի, առավել, նվազ, պակաս*** և այլ բառեր՝ որպես այս քերույթի նշույթներ: Բաղդատական քերույթի նշույթներն անվանում ենք **բաղդատիչներ**: Հատկանիշ(ներ)ի համեմատությունն **ըստ չափման բաշխվածության**՝ կարող է լինել **համաստիճան** կամ **տարաստիճան**: **Համաստիճան համեմատությունը նույն կամ տարբեր առարկաների միևնույն հատկանիշ(ներ)ի նույնաչափ արտահայտությունն է**: Այսպիսի համեմատությունը անվանում ենք նաև **հավասարական**[2] **բաղդատական**: Համաստիճանության բաղդատիչներն են ***նույնքան*** դերանվանական մակբայը և ***պես, նման, չափ*** կապերը, ինչպես նաև ***որքան, ինչքան*** հարաբերականները՝ ստորադաս նախադասության կազմում (հմմտ. «*Նա* ***նույնքան գեղեցիկ*** *է,* ***որքան*** ՝*դու»*):

Համաստիճանություն կարող է ապահովվել տարաստիճան բաղդատականի համար նախատեսված ***պակաս, նվազ*** ցուցանշանների, բաղդատական ***քան*** շաղկապ-ցուցանշանի և ժխտական բայ-ստորոգյալի համակշռությամբ: Համեմատական տիրույթում բաղդատիչի դեր են ստանձնում ***քան***-ը և ժխտական բայը նույնպես. հմմտ. *Իմ աշխատասենյակը* ***պակաս հրապուրիչ չէ, քան*** *քոնը* (= *Իմ աշխատասենյակը* ***նույնքան հրապուրիչ է, որքան քոնը***): **Տարաստիճան համեմատությունը տարբեր առարկաների միևնույն հատկանիշ(ներ)ի կամ միևնույն առարկայի՝ իրադրային տարբերությամբ նույն հատկանիշի այլաչափ արտահայտությունն է:** Այսպիսի համեմատությունն անվանում ենք նաև **անհավասար բաղդատական:** Տարաստիճանության բաղդատիչներն են ***ավելի, առավել, նվազ, պակաս*** մակբայական բառերը: Օրինակ՝ *Կրտսեր պաշտոնյան* ***ավելի լավ*** *մասնագետ է,* ***քան*** *ավագը:Նա* ***նվազ / պակաս*** *ջանասեր է,* ***քան*** *ընկերը:* Առաջին օրինակում ունենք մի առարկայի (մասնագետի) լավ հատկանիշի առավելություն՝ հանդիպադիր առարկայի (մասնագետի) նույն հատկանիշի հարաբերությամբ, երկրորդ օրինակում՝ մի առարկայի (ընկերոջ) ջանասեր հատկանիշի նվազականություն՝ հանդիպադիր առարկայի (մյուս ընկերոջ) նույն հատկանիշի հարաբերությամբ: Բերված օրինակներում միևնույն հատկանիշի համեմատությունը կատարվում է **համեմատվող առարկաների** միջնորդությամբ (առանց այդ առարկաների համեմատություն չի լինի), սակայն մեզ հետաքրքրող քերականական կարգի համար էականը հատկանիշի որակային չափն է, նրա հնարավոր աստիճանավորումը, որը, հասկա-

[2] Տե՛ս *Հ. Օհանյան,* Ածական անունը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ. 31–34(182 էջ):

նալիորեն, հանդիպադիր առարկաների գոյությամբ է պայմանավորված: Սակայն հնարավոր է միևնույն հատկանիշի համեմատություն նո՛ւյն իսկ առարկայի սահմաններում, որին կանդրադառնանք ստորև: Հատկանիշների առավել կամ նվազ լինելու հիմամբ էլ տարբերակում են **առավելական բաղդատական** և **նվազական բաղդատական** ենթաստիճաններ: Վերջին երկու օրինակներից առաջինում ունենք առավելական բաղդատական, երկրորդում՝ նվազական բաղդատական (ենթ)աստիճան: Սա, իհարկե, խիստ պայմանական խմբավորում է, որովհետև նվազականությունը ևս հնարավոր է արտահայտել ***ավելի*** բաղդատիչով՝ *Նա* ***ավելի փոքր*** *է, քան եղբայրը:*

Թե՛ հավասարական կամ համաստիճան, թե՛ անհավասար կամ տարաստիճան բաղդատականը կարող է հանդես գալ պարզ նախադասության կառուցվածքում: Ասվածը հեշտությամբ կարող ենք ցույց տալ վերի նախադասությունների փոխակերպումներով:

1ա) Կրտսեր պաշտոնյան **ավելի լավ** մասնագետ է, **քան** ավագը: →

→ 1բ) Կրտսեր պաշտոնյան ավագ**ից** (**ավելի**) լավ մասնագետ է:

2ա) Նա **պակաս** ջանասեր է, **քան** ընկերը: →

→ 2բ) Նա ընկերոջ**իցպակաս** ջանասեր է:

Բերված փոխակերպներում դուրս էընկել ***քան*** բաղդատիչը՝ տեղը զիջելով **բացառականով** ձևավորված բաղդատիչին, ավելի ստույգ՝ բաղդատիչը բացառականի հոլովակերտն է: Երկու փոխակերպված տարբերակում էլ պահպանված է աստիճանանիշ բառը՝ ***ավելի*** և ***պակաս*** ՝ տարբերությամբ, որ առաջինը փակագծավորված է, ասել է՝ առանց դրա էլ զիտակցվում է հատկանիշի առավելությունը: Երկրորդում դա հնարավոր չէ անել, որովհետև նվազական բաղդատականը կփոխակերպվի առավելականի: Սա երկու բան է հուշում. ա) նվազական բաղդատական ասվածը նկատելի արհեստականություն է կրում իր մեջ, և դրանով պիտի բացատրել նրա հազվադեպ կիրառությունը. բ) առավելական բաղդատականի դեպքում առավելանիշ բաղդատիչի առկայությունը հավելադրություն է, որը, եթե պայմանավորված չէ ոճական, առկայացական, տաղաչափական նպատակներով, բացառականի կողքին հավասարվում է **ավելորդության**, որից հարկ է խուսափել՝ ի շահ խոսքի տնտեսման, քանի որ լեզվական համակարգը հնարավորություն տալիս է բաղդատվածության ընկալման՝ առանց դրա: Առավել հարթ է «Կրտսեր պաշտոնյան ավագից լավ մասնագետ է» կառուցվածքը, որի մեջ փոխանվանական հատկանիշի բացառականով ձևավորվածությունն ինքնին համեմատության աստիճանակազմության ցուցանշան է:

Հատկանիշ(ներ)ի համեմատությունը, **ըստ առարկայակազմի**, կարող է լինել **ինքնառարկայական** (autoobjective) կամ**այլառարկայական** (alloobjective)։ Բաղդատականի այս տեսակները համաչափորեն բաշխվում են համաստիճան և տարաստիճան բաղդատականների վրա։ **Ինքնառարկայական (տիրույթի) բաղդատականն** անդրադարձ բնույթ ունի։ Հատկանիշի համեմատությունը կատարվում է նույն առարկայի սահմաններում։**Այլառարկայական (տիրույթի) բաղդատականի** դեպքում հատկանիշի համեմատությունը կատարվում է տարբեր առարկաների միջև.

Հմմտ.

ա) **Ինքնառարկայական համաստիճանություն**

Իմ ***<u>սենյակն</u>*** *այսօր* ***նույնքան հրապուրիչ*** *է, որքան երեկ։ // Իմ* ***<u>սենյակն</u>*** *այսօր երեկվա* ***պես/չափ հրապուրիչ*** *է*։

բ) **Այլառարկայական համաստիճանություն**

Իմ ***<u>սենյակը</u>նույնքան հրապուրիչ է, որքան<u>քոնը</u>***: || *Իմ* ***<u>սենյակըքոնի</u>*** ***պես / չափ հրապուրիչ*** *է*[3]:

Նույնը վերաբերում է տարաստիճան բաղդատականին.

Հմմտ.

ա) Ինքնառարկայական տարաստիճանություն

Այս տարի ավելի մեղմ<u>ձմեռ</u> կլինի, քան նախորդում։ // Այս տարի նախորդ <u>ձմեռվանից</u>(ավելի) մեղմ կլինի։

բ) Այլառարկայական տարաստիճանություն

<u>Պատանիներն</u>ավելի աշխույժ են, քան<u>երիտասարդները</u>։ // <u>Պատանիները երիտասարդներից</u> աշխույժեն։

Բ) Բաղդատական աստիճանը ռուսերենում, իտարբերություն հայերենի, կազմվում է և՛ համադրական,և՛վերլուծական եղանակով։

Բաղդատական աստիճանի համադրական ձևը կազմվում է դրական աստիճանի կամ ելակետային ձևի հիմքից՝ *-ее* (*-ей*), *-е* վերջածանցներով[4], իսկ նորագույն ուսումնասիրությամբ՝ նաև -ше վերջածանցով[5]՝ родной – роднее (родней), белый – белее (белей), вкусный –вкуснее

---

[3] Տե՛ս նաև *D. Sakayan,* Eastern Armenian for the English-speaking World. A contrastive approach, Yerevan, Yerevan state university press, 2007(540), էջ. 184–185:

[4] Տե՛ս *Н. Валгина, Д. Розенталь, М. Фомина,* Современный русский язык, М., «Высшая школа», 2002, http://www.studfiles.ru/preview/395390/ էջ. 137–138 (528 էջ):

[5] Տե՛ս *А. Камынина,* Современный русский язык. Морфология (учебное пособие, 2-е издание), М., МГУ, 2010, էջ 94 (240 էջ)։ Հարկ ենք համարում տեղեկացնել, որ ռուսերենին վերաբերող քերականական օրինակների զգալի մասը քաղել ենք այս երկու գրքից կամ կազմել ենք այդտեղի նմուշների համապատասխանությամբ։

(вкусней), тихий – тише, молодой – моложе[6]: Սակավաթիվ ածականներ են բաղադրվում -ше վերջածանցով՝ далёкий – дальше, большой – больше, ранний – раньше և այլն: Երեք ածականի բաղդատական աստիճանը կազմվում է տարարմատությամբ՝ малый – меньше, хороший – лучше, плохой – хуже[7]: Համադրական ձևի դրսևորումներից է առավելապես խոսակցական ռուսերենում ի հայտ եկող – *по* մեղմացուցիչ նախածանցով կազմությունը: Այդ նախածանցը դրվում է հե՛նց բաղդատական ձևի վրա՝ сильнее – посильнее, высокий – повыше և այլն: Այս նախածանցի համարժեքները պիտի համարել խոսակցական հայերենում արտահայտվող *-(ա)վուն*, *-ուտ* (արևմտահայերենում՝ -(*կեկ*)) վերջածանցները՝ մեծավուն, խոշորավուն (մեծկեկ, խոշորկեկ), փոքրավուն, մանրավուն, փոքրոտ, մանրոտ և այլն: Հարկ է նկատել, որ *-ուտ*-ը գործածվում է փոքր առարկաներ բնութագրող հատկանշացույց բառերի հետ, մինչդեռ *-(ա)վուն*-ը չեզոք է այս առումով. հավասարապես գործածվում էթե՛ մեծ, թե՛ փոքր առարկաների բնութագրության ժամանակ:

Բաղդատականի վերլուծական ձևը կազմությամբ նման է հայերենի օրինաչափությանըն, ի տարբերություն համադրական ձևերի, առավել կենսունակ է, չունի ձևային սահմանափակումներ: Ռուսերենում ևս դրսևորվում է առավելական ու նվազական տարբերակներով: Վերլուծականով ձևավորված բաղդատականը կազմվում է ոչ թե ելակետային ձևի հիմքից, այլ, ինչպես հայերենում, հենց ելակետային ձևից՝ համարժեք բաղդատիչներով, որոնք են՝ ***более*** (сильный), ***менее*** (длинный).

Արդ՝ վերստին ներկայացնենք վերը բերած հայերեն օրինակները՝ ռուսերենի հանդիպադրությամբ, որով ակնբախ են դառնում այս լեզուների կազմաբանական առանձնահատկությունները:

ա) Ինքնառարկայական համաստիճանություն

Իմ **<u>սենյակն</u>** այսօր **նույնքան հրապուրիչ** է, որքան երեկ: // Իմ **<u>սենյակն</u>** այսօր երեկվա **պես/չափ հրապուրիչ** է:

Моя **<u>комната</u>** сегодня **столь же привлекательна**, как и вчера.

բ) **Այլառարկայական համաստիճանություն**

Իմ ***<u>սենյակը</u> նույնքան հրապուրիչ է, որքան <u>քոնը</u>***:// *Իմ* ***<u>սենյակը</u> <u>քոնի</u> պես / չափ հրապուրիչ է***:

Моя ***<u>комната</u> настолько же привлекательна, как и твоя***.

ա) Ինքնառարկայական տարաստիճանություն

---

[6] Այստեղ ուշադրություն չենք դարձնում հնչույթների հերթագայական օրինաչափություններին:

[7] Չենք անդրադառնում նաև զուգաձևություններին և այն ածականներին, որոնցից բաղդատական աստիճան չի կազմվում:

*Այս տարի ավելի մեղմ **ձմեռ** կլինի, **քան** նախորդում: // Այս տարի նախորդ **ձմեռվա պես / չափ** մեղմ կլինի*:

*В этом году будет более умеренная**зима**, **чем** / **нежели** в прошлом.*

բ) **Այլառարկայական տարաստիճանություն**

***Պատանիներն** ավելի աշխույժ են, **քան** **երիտասարդները**: // **Պատանիները երիտասարդներից** աշխույժեն*:

Юноши** более активны, чем / нежели **молодёжь**.// **Юноши** активнее **молодёжи.

2. **Գերադրականաստիճանը** ցույց է տալիս տվյալ առարկայի հատկանիշի անգերազանցելի չափը՝ համդիպադիր առարկաների նույն հատկանիշի հարաբերությամբ: Ինչպես բաղդատական աստիճանը, գերադրականը ևս ունի իր համեմատելի ցուցանշանները: Գերադրական աստիճանի ցուցանշաններն անվանում ենք **գերադիրներ**: Գերադրական աստիճանակազմությամբ զուգադրվող լեզուներն ավելի շատ ընդհանություն ունեն, քան բաղդատական աստիճանի կազմության դեպքում: Երկու լեզվում էլ այս աստիճանը կազմվում է թե՛ համադրական, թե՛ վերլուծական եղանակով:

Հայերենում գերադիրներ են հատկանշացույց բառի վրա դրվող ***ամեն(ա)***- նախածանցը, -***(ա)գույն*** վերջածանցը, ***ամենից***, ***ամենքից***, ***բոլորից*** դերանվանական գոյականները: Վերջածանցական գերադիրը կենսունակ է ածականների փոքր խմբի համար միայն, իսկ նախածանցական և բառային գերադիրները մեծ կենսունակություն ունեն: Միայն թե **ամենքից** գերադիրը դասային սահմանափակում ունի և կիրառվում է բացառապես **անձնանիշ գոյականների** համեմատելի հատկանիշի վերաբերմամբ: Բերենք օրինակներ. *Նա քո **ամենից լավ** / **ամենալավ** / **լավագույն** ընկերն է: Բոլորից հասակովը Մինաս հորեղբայրն է (Ար.): Նա՝.... այդ ծիծաղող մարդը, թողեց **ամենքից շատ** գաղափարներ* (Գր. Գուրգ.):

Ռուսերենում գերադիրներ են-ейш-/-айш- ցուցանշանները (труднейший, величайший), ավելի հազվադեպ՝ наи-, пре- նախածանցները (предлинный, наивысший), самый, наиболее, наименее, всех, всего: Վերջին երկուսի համար հիմք է ծառայում ածականի բաղդատական աստիճանի ձևը (всех ближе, всего дороже), իսկ առաջին երեքի հիմքն է դրական աստիճանը կամ ելակետային ձևը՝ самый храбрый, наиболее дорогой, наименее известный[8]:

---

[8] Տե՛ս *Н. Валгина և այլք, նույն տեղում*, էջք 139-1.04, *А. Камынина, նույն տեղում*, էջ. 97–99:

Գերադրականի ձևով հնարավոր է արտահայտել գերազանց հատկանիշի իմաստ՝ առանց որևէ համեմատության՝

Այս ուսումնական հաստատության բոլոր ունկնդիրները մի քանի տարի առաջ արդեն ստացել են ***բարձրագույն*** *կրթություն* (Ար.): Առանց համեմատության բարձրագույն հատկանիշ ցույց տվող գերադրականը հայտնի է **բացարձակ գերադրական** (ēlātīvus) անվանմամբ՝ ի հակադրություն **համեմատական գերադրականի**(superlātīvus):Այդպես է նաև ռուսերենում՝ ա) Она умнейшая ученица (ēlātīvus). բ) Она умнейшая ученица в классе (superlātīvus): Բացարձակ գերադրականը դուրս է աստիճանակազմության սանդղակից: Սրա և համեմատական գերադրականի տարբերակիչ հատկանիշը հայերենում արտահայտվում է լրացյալ գոյականի **որոշյալությամբ**: Համեմատականի դեպքում նշված գոյականի ցուցիչը **որոշիչ հոդն** է, իսկ բացարձակի ցուցիչը՝ **հոդի բացակայությունը** (հմմտ. վերի օրինակները):

Համեմատության աստիճանների քերականական կարգը հայերենում չունի կազմաբանական այն խստապահանջությունը, ինչ որ ունեն, ասենք, թվի, հոլովի ու հոլովման կամ խոնարհման բազմաթիվ կարգեր: Դա հնարավորություն է տալիս մի կողմից՝ ազատ փոխանցումների թե՛ միջխոսքամասային, թե՛ միջաստիճանային առումով: Մասնավորապես վերջին դեպքում պատահում են մինչև իսկ **սահմանախախտումներ**: **Միջաստիճանային սահամանախախտություն** կամ պարզապես **աստիճանախախտություն**ենք անվանում համեմատության աստիճանների իմաստային այնպիսի հակադարձ գործառությունը, երբ հատկանիշի ստորին աստիճանն իրադրորեն կարող է գերազանցել վերին աստիճանը: Լավագույն օրինակ է հետևյալ քառյակը.

Դժվար է գալը, դժվար՝ գնալը,
Դժվար՝ լռելը, դժվար՝ ճչալը.
Դեռ *հավատա՜լն* ***է ամենից դժվար,***
Ավելի դժվար՝ չհավատա՜լը ... (Ս. Կապուտիկյան):

Բերված օրինակում նույն հատկանիշի բաղդատական աստիճանը գերազանցում է գերադրականը, որի արտահայտման մեջ դեր ունի, անկասկած, քնարական հերոսի սրված հոգեվիճակը:

Հայտնի է, որ լեզուն հորինված է արտաքին աշխարհի նմանողությամբ՝ ըստ մարդկային պատկերացումների: Ածականի համեմատության աստիճանները դրա վկայություններից են և հարաբերակցելի են կախման քերականական կարգի աստիճանավորմանը: Համաստիճան բաղդատականը նույնադաս և համադաս հարաբերությունների հատկանշային նմանակն է, տարաստիճան բաղդատականը՝ տարադասական

հարաբերության բաղադրիչների դրսևորման նմանակը՝ ըստ գերադաս կամ ստորադաս դիրքի. առավելական բաղդատականը գերադաս-ստորադաս հարաբերության հատկանշային նմանակն է, նվազական բաղդատականը՝ ստորադաս-գերադաս հարաբերության նմանակը: Իսկ, ահա, գերադրական աստիճանը հարաբերակիցն է վերագերադաս-ենթաստորադաս բաղադրիչների աստիճանավորման: Վերջապես թե՛ մեկ, թե՛ մյուս աստիճանավորումները հարաբերակիցներն ու նմանակներն են արտաքին աշխարհի բնական և մարդկային հարաբերությունների (ներառյալ եկեղեցական նվիրակարգությունը) շերտավորումների:

3. Ի մի բերելով հանդիպադրյալ լեզուների աստիճանակազմության օրինաչափությունները՝ դյուրին է նկատելը, որ կան թե՛ ընդհանրություններ, թե՛ տարբերություններ:

1) Տիպաբանական ընդհանրություններից **հանրույթներ** են երկու լեզուներում **բաղդատական** և **գերադրական** աստիճանները:

2) **Բաղդատական** հանրույթի շրջանակում **տարբերույթ** են դիտարկվող լեզուների աստիճանակազմության եղանակները. հայերենում բաղդատականը ձևավորվում է միայն վերլուծական, ռուսերենում՝ և՛ վերլուծական, և՛ համադրական եղանակով:

3) **Բացարձակ հանրույթներ** պետք է դիտել երկու լեզուներում հատկանիշների՝ իմաստային դաշտերը ինքնառարկայնությամբ ու այլառարկայնությամբ տոգորող ուղղվածությունները համաստիճան և տարաստիճան բաղդատականներում:

4) Ձևավորման եղանակի վերացարկվածության առումով **բացարձակ հանրույթներ** են հայերենի և ռուսերենի **գերադրական** աստիճանակազմ դրսևորումները, քանի որ այս աստիճանը հանդիպադիր լեզուներում կազմավորվում է թե՛ համադրական, թե՛ վերլուծական եղանակով: **Բացարձակ հանրույթ** է նաև այն, որ երկու լեզվում էլ համադրական եղանակը ձևավորվում է և՛ նախածանցի, և՛ վերջածանցի մասնակցությամբ:**Տարբերույթն** այն է, որ հայերենում թե՛ նախածանցի, թե՛ վերջածանցի համար հիմք է ծառայում ածականի դրական աստիճանի ձևը, ռուսերենում՝ կամ այդ ձևը, կամ բաղդատականի ձևը: **Բացարձակ հանրույթ** է նաև աստիճանակազմության այն դրսևորումը, որի համաձայն՝ երկու լեզուներում աստիճանակազմության ենթակա բոլոր որակական ածականներից հնարավոր է գերադրական կազմել վերլուծական եղանակով: Այս հանրույթին առնչակից մի **տարբերույթ** կա, որ դրսևորվում է հայերենում միայն (-***(ա)գույն***) վերջածանցի սահմանափակմամբ, մինչդեռ (***ամեն(ա)***-)նախածանցով համադրական կազմու-

թյուններր սահմանափակում չեն ճանաչում ճիշտ այնպես, ինչպես վերլուծականներր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Օհանյան Հ.,* Ածական անունը ժամանակակից հայերենում, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1962, (182):
2. *Sakayan D.,* Eastern Armenian for the English-speaking World. A contrastive approach, Yerevan, Yerevan state university press, 2007 (540).
3. *Валгина Н., Розенталь Д., Фомина М.,* Современный русский язык, М., «Высшая школа», 2002, http://www.studfiles.ru/preview/395390/(528):
4. *Камынина А.,* Современный русский язык. Морфология (учебное пособие, 2-е издание), М., МГУ, 2010 (240):

КОНТРАСТИВНЫЙ АНАЛИЗ ОБРАЗОВАНИЯ СТЕПЕНЕЙ СРАВНЕНИЯ ПРИЛАГАТЕЛЬНЫХ В СОВРЕМЕННОМ ВОСТОЧНОАРМЯНСКОМ И РУССКОМ ЛИТЕРАТУРНОМ ЯЗЫКАХ

Д. Гюльзатян, Р. Аветисян

АННОТАЦИЯ

Типологическое исследование образования степеней сравнения в современном восточноармянском и русском литературном языках выявляет интересные закономерности.

1) В типологической общности обоих языков универсалиями являются сравнительная и превосходная степени. 2) Дифференцирующим признаком в рамках универсальной сравнительной степени в изучаемых языках являются способы образования степеней сравнения: в армянском языке сравнительная степень формируется только аналитическим способом, а в русском – и аналитическим, и синтетическим способами. 3) Абсолютными универсалиями в обоих языках следует рассматривать тенденцию к насыщению семантических полей автообъективацией и аллообъективацией в гомоградуальных и гетероградуальных сравнениях. 4) С точки зрения способов формирования абсолютной универсалией в армянском и русском языках является образование превосходной степени, так как эта степень в сопоставляемых языках образуется и синтетическим, и аналитическим способами. Абсолютной универсалией является также образование в обоих языках синтетической формы как с помощью префиксов, так и с помощью суффиксов. Дифференцией является то, что в армянском языке основой как для префиксации, так и для аффиксации служит форма положительной степени прилагательного, а в русском языке – или та же форма, или форма сравнительной степени. Абсолютной универсалией представляется также то, что в обоих языках от всех качественных прилагательных возможно образовать аналитическую форму превосходной степени. С этой универсалией связана и одна дифференция: в армянском языке аффикс ***-(ա)գույն*** (*-(а)гуйн)* ограничен в употреб-

лении, между тем для префикса ***ամեն(ա)-*** *(амен(а)-)* при образовании синтетической формы нет никаких ограничений точно так, как в аналитических формах.

Ключевые слова: позитив, компаратив, гомоградуальное сравнение, гетероградуальное сравнение, автообъективное сравнение, аллообъективное сравнение, компаративный маркер, межградуальное нарушение,суперлатив, суперлативный marker

A CONTRASTIVE STUDY OF THE DEGREE-FORMATION FEATURES OF THE ADJECTIVE IN THE MODERN LITERARY EASTERN ARMENIAN AND RUSSIAN LANGUAGES

D. Gyulzatyan, R. Avetisyan

ABSTRACT

The typological study of the degree-formation features of the adjective in the literary forms of the contemporary Armenian and Russian languages discloses interesting patterns.

1) Universal among the typological generalities in both languages are the comparative and superlative degrees. 2) Differential within the universality of the comparative degree are the modes in which these degrees are formed; in Armenian, the comparative degree is formed solely in an analytical mode, while in Russian, both analytical and synthetic modes are utilized. 3) The tendencies of the quality to ascribe autoobjectivity and alloobjectivity to the semantic fields in homograde and heterograde comparatives must be considered as universal absolutesin both languages. 4) The features forming the superlative degree in both languages are universal absolutes in terms of the abstraction of the mode of formation, because in the contrasted languages this degree is formed both by a synthetic and analytic modes. In both languages, the synthetic mode is formed both by means of a prefix and of a suffix, which is another universal absolute. The differentiality is that while in Armenian the form of the positive degree serves as the basis for both the prefix and the suffix, in Russian, it is either this form or that of the comparative degree. Also of universal absolute nature is the possibility in both languages to make the superlative degree of qualitative adjectives by the analytical mode. There is one differentiality to this universality, which comes up in Armenian: there is a restriction to the use of the ((-***(ա)գույն***-(**a)guyn**)) suffix, whereas the synthetic forms with the ((***ամեն(ա)***-**amen**(**a**)**-**)) prefix know no restriction similar to the analytic forms.

Keywords: positive, comparative, homograde comparison, heterograde comparison, autoobject comparison, alloobject comparison, comparative marker, violation of the grade, superlative, superlative marker

ИСПОЛЬЗОВАНИЕ СРЕДСТВ НЕВЕРБАЛЬНОЙ КОММУНИКАЦИИ ПРИ ОБУЧЕНИИ ИНОЯЗЫЧНОЙ УСТНОЙ РЕЧИ СТУДЕНТОВ-ЭКОНОМИСТОВ

Л. Тер-Саргсян

Армянский государственный экономический университет
lusya.ter-sargsyan@yandex.ru

АННОТАЦИЯ

В данной статье рассматриваются невербальные средства коммуникации как дополняющее средство обучения и усовершенствования устной речи студентов-экономистов. Выделяются основные функции невербальной коммуникации в учебных целях, а именно: функции дополнения, опровержения вербальных сообщений, замещения вербальных сообщений, регулирования разговора.

Ключевые слова: устная речь, деловое общение, невербальная коммуникация, вербальная коммуникация, диалог.

В современных философских работах вопросам общения как специфическому способу взаимных отношений между людьми уделяется достаточное внимание (Каган 1988: 111).

Общение, включающее интеллектуальную, эмоциональную, духовную сферы деятельности человека, реализуется знаковой системой, строение которой обусловлено характером заданного речевого произведения. Исходным условием общения, а следовательно, и использования системы языков, является «индивидуальное своеобразие партнеров» (Каган,1988), реализуемое единством коммуникативной, интерактивной и перцептивной направленностей общения, а конечным результатом и смыслом которого является достижение взаимопонимания.

Говоря о взаимопонимании в общении, целесообразно подробнее рассмотреть средства общения, зафиксированные системой знаков. Такую систему знаков представляет язык, где реализуются не только словесные, вербальные, но и несловесные, невербальные средства общения.

Известно, что коммуникативное поведение индивидуумов являет собой реализуемые в коммуникации правила и традиции общения той или иной лингвокультурной общности. Подобные правила и традиции в большинстве случаев имеют ярко выраженную национальную окраску, что препятствует их адекватному восприятию представителями других народов и культур. Вербальные средства общения и значащие жесты, мимика, пантомимика и т.п. взаимодействуют в коммуникативном акте, дополняя друг друга, тем самым доказывая стимулирующее и интенсифицирующее влияние

на процесс общения и являются необходимым условием в практике обучения иноязычному общению, как сложному многоплановому процессу установления и развития контактов между представителями разных культур.

Заметим, что понятие «общение» не должно отождествляться с понятием «говорение». Определенная разнонаправленность терминов отражает сущность стоящих за ними явлений, вследствие этого, будучи формально схожими, они по своей сути представляют разные процессы. Если под «говорением», достаточно широко представленным в научных источниках, понимается владение одним из продуктивных видов речевой деятельности-внешней, произносимой и воспринимаемой на слух речью, то устное «общение» принято рассматривать как «специфический для субъектов способ взаимных отношений, способ бытия человека во взаимосвязях с другими людьми (Борисов, 1999), где специфичность отношений, на наш взгляд, проявляется, прежде всего, в том, что именно «Его Величество Общение (Ее величество Коммуникация) правит людьми и их поведением» (Тер-Минасова, 2000). Следовательно, понятие «общение», предполагающее взаимодействие субъектов, шире и многозначнее понятия «говорение» и не ограничивается только лишь воспроизведением устной речи согласно заданным образцам. В отличие от говорения, общение не ограничивается только лишь вербальными средствами, но параллельно предполагает обращение к невербальным средствам. Вопросам, связанным с функционированием невербальных средств общения в речи, посвящен целый ряд научных работ в философской, лингвистической, психологической и других областях. Вместе с тем, недостаточно исследованными остаются вопросы, связанные с процессом обучения иноязычному общению, предполагающему обращение к невербальным средствам общения.

Исследование процесса понимания, его роли и значения в коммуникативной деятельности людей является характерной особенностью современного этапа развития философской науки, где понимание определяется как сложный комплексный феномен, связанный с психологическими и познавательными способностями, с процессами общения между людьми, с познанием другого «я», с взаимодействием различных культур.

Следует обратить внимание на позицию ряда философов, представляющую процесс понимания в виде двух моделей-рационалистической и антропологической. При разработке вопросов понимания только как рационалистической (интеллектуальной) деятельности, ориентированной в основном на абстрактно-теоретическое мышление, не учитывается многообразие видов человеческой деятельности, направленной на переработку информации и

выражение смыслового содержания не только в форме словесного языка, но и в самих разнообразных несловесных формах, т.е. при помощи невербальных средств общения. При этом отмечается, что такими формами общения могут быть кинестетические феномены, которые выражают не только настроение собеседника, но и позволяют достаточно точно судить о характере коммуникативного партнера, что, безусловно, влияет на смысловое восприятие речи. По мнению исследователей, невербальные средства могут служить самостоятельным языком человеческого общения без помощи вербальных, лингвистических средств (Каган М.С.). Более продуктивным, на наш взгляд, в целях самого общения и понимания было бы не противопоставление двух моделей общения, реализуемых вербальными и невербальными средствами, а рассмотрение их как дополняющих одна другую, представляющих целостный механизм человеческого общения.

Невербальная коммуникация представляет собой обмен невербальными сообщениями между людьми, а также их интерпретацию. Особенностью невербальных сообщений является их ситуативность. Существуют несколько функций, которые невербальные сообщения выполняют при взаимодействии с вербальными. Это функции дополнения вербальных сообщений, опровержения вербальных сообщений, замещения вербальных сообщений и регулирования разговора.

Дополнения делают вербальную речь более выразительной, уточняют и проясняют ее содержание. Например, если вы обнимаете друга в тот момент, когда говорите ему, что очень рады его видеть, объятие служит дополнением к вашему речевому сообщению.

Опровержение означает, что невербальное сообщение противоречит вербальному. Если на вопрос «Вам интересно?» собеседник демонстрирует замешательство, отводит глаза в сторону, виновато улыбается и говорит «В общем-то, да», то следует усомниться в правдивости его ответа.

Замещение означает использование невербального сообщения вместо вербального. Так, например, во время дискуссии ведущий может без слов, с помощью взгляда и поворота головы и тела, предложить кому-то из участников выступить.

Регулирование означает использование невербальных знаков для координации взаимодействий между людьми. При этом часто используются описанные выше знаки; поворот головы в сторону того, кто должен выступить; тон голоса, сообщающий о завершении фразы; прикосновение к кому-то, выражающее желание о чем-то спросить, одобрительные или неодобрительные взгляды в адрес выступающего. Эти и многие другие знаки регулируют

течение коммуникации. Таким образом, невербальные сообщения – необходимая составляющая межличностной коммуникации. Они являются индикаторами эмоциональных состояний и показателями многообразных отношений человека к окружающему миру.

В ситуациях межличностного общения ни язык жестов, ни вербальные средства общения не являются исходными и фундаментальными по отношению друг к другу, скорее каждый из них предполагает наличие другого и строится в расчете на другой.

Общеизвестно, что сегодняшний мир противоречив и полемичен больше, чем когда-либо прежде, и будущее человечества во многом зависит от умения организовывать и вести диалог.

В связи с этим поднимается очень важный на сегодняшний день вопрос – вопрос культуры диалога, который подлежит специальному обучению.

Известно, что текст диалога может быть письменным и устным. В противоположность письменному диалогическому тексту, подразумевающему предельную развернутость словесного выражения мысли, устный, в силу многих причин социально-психологического характера, как правило, не требует развернутости, ведется с применением невербальных средств общения, ибо удачно выбранный жест, мимика, пантомимика, сопровождающие, а иногда и заменяющие вербальные средства, могут оказать большую помощь в достижении взаимопонимания. А взаимопонимание возможно лишь при наличии доверительного диалога, учитывая интересы, симпатии, ценностные и культурные ориентации его участников (Сафонова,1996; Тер-Минасова, 2000).

Очевидно, что на процесс взаимопонимания будет оказывать влияние ситуационный характер диалога, а также личностное восприятие ситуации, преломленные через наличие желания и потребности в общении между участниками диалога. Представляется, что как общение, так и взаимопонимание невозможны без единого языка, где важна не столько общая знаковая форма, сколько ее семантика, т.е. значения, которыми оперируют участники диалога. Говоря о коммуникативной стороне процесса общения, следует остановиться на средствах, с помощью которых происходит обмен информацией. Что касается невербальных средств общения, здесь применяются различные неречевые знаковые системы. Выделяют следующие невербальные средства общения (Шевандрин, 1995: 106).

- визуальные: кинетика (движения рук, головы, ног, туловища, походка);
- выражение лица; выражение глаз; кожные реакции (покраснение, побледнение и т.д.);

- проксемика (пространственная и временная организация общения); вспомогательные средства общения – подчеркивание или сокрытие особенностей телосложения (признаки пола, возраста, расы);
- средства преобразования внешности (одежда, косметика, очки, украшения, татуировка, усы, борода и так далее);
- акустические: паралингвистические (качество голоса, диапазон, тональность); экстралингвистические (паузы, смех, плач, вздохи, кашель, хлопанье); тактильные: (прикосновение, пожатие рук, объятие, поцелуй);
- ольфакторные: приятные и неприятные запахи окружающей среды, естественный и искусственный запахи человека.

Интерактивная сторона процесса общения предполагает взаимодействие людей. Под взаимодействием обычно подразумевается организация совместных действий, позволяющих группе реализовать общую деятельность (Шихарев, 1979: 113).

В настоящее время во всех сферах человеческой деятельности ощущается потребность в компетентном специалисте, обладающем знаниями, умениями, навыками и определенным набором свойств личности, которые в совокупности позволяют ему на высоком уровне осуществлять свои профессиональные функции в изменяющихся экономических условиях. Специфика иноязычного делового общения специалистов экономической сферы состоит в том, что для его эффективного осуществления необходимо системное использование знаний по специальным дисциплинам; иностранному языку, психологии общения, теории коммуникации. Поэтому обучение будущих экономистов иноязычному деловому общению должно, с одной стороны, опираться на фундаментальные знания по каждой из этих дисциплин и, с другой стороны, создавать условия для их применения в ситуациях делового общения на иностранном языке.

Эффективность делового взаимоотношения определяется не только тем, как поняты слова собеседника, но и умением правильно интерпретировать визуальную информацию, то есть взгляд партнера, его мимику и жесты, телодвижения, позу, дистанцию и угол общения, а также тембр речи. Именно «прочтение» невербального, экспрессивного репертуара собеседника способствует достижению взаимопонимания. Отслеживание такой информации в ходе любого делового разговора может вооружить человека сведениями о морально-личностном потенциале партнера, о его внутреннем мире, настроении, чувствах и переживаниях, намерениях и ожиданиях, степени решительности или отсутствии таковой. Знание и понимание подобной инфор-

мации может привести к положительному исходу деловых переговоров, встреч, договоров в деловом мире, вот почему при обучении студентов-экономистов деловому общению, представляется целесообразным ознакомить и обучить их различным невербальным средствам общения.

Речь можно точнее понять и лучше запомнить, если она дублируется жестами. В деловом общении жесты весьма информативны. Они могут быть сигналом к окончанию встречи (например, готовность одного из собеседников встать из-за стола – корпус чуть наклонен вперед, при этом руки опираются на что-либо) или иметь прямо противоположное значение и свидетельствовать о заинтересованности в беседе, например, рука находится под щекой, но не подпирает ее. Другие жесты-символы ограничены рамками той или иной культуры или местности, причем эта специфичность может проявляться двояко. К ним относится, например, довольно распространенный сегодня во многих странах мира американский символ «ОК», означающий «все хорошо», «все в порядке» и передающийся с помощью большого и указательного пальцев, которые как бы образуют букву «О». Однако этот жест нельзя считать общепринятым. Например, во Франции он может означать ноль, а в Японии – деньги. Аналогично, жест согласия, выраженный кивком головы во многих культурах, в том числе и в нашей, в некоторых странах, например в Болгарии, отображает отрицание, несогласие.

Еще одна группа жестов-это жесты-регуляторы. Они играют очень важную роль в начале и конце беседы. Один из таких жестов-регуляторов – рукопожатие. Это традиционная и древнейшая форма приветствия. Она информативна и говорит о многом. В деловом мире рукопожатие используется не только при приветствии, но также как символ заключения соглашения, знак доверия и уважения к партнеру.

Проксемические особенности невербального общения также выступают в качестве особой знаковой системы и несут смысловую нагрузку.

Так, например, размещение партнеров лицом друг к другу способствует возникновению контакта, символизирует внимание к говорящему. Экспериментально доказано преимущество некоторых пространственных форм организации общения (как для двух партнеров, так и для большой аудитории). Выбор дистанции зависит от взаимоотношений между людьми и от индивидуальных особенностей человека. Как правило, люди стоят ближе к тем, кому они симпатизируют. Например, интроверты плохо переносят слишком близкую дистанцию.

Взгляд, его направление, частота контакта глаз – еще один компонент невербального общения. С помощью глаз передаются самые точные и откры-

тые сигналы из всех сигналов межличностной коммуникации, потому что они занимают центральное место на лице человека. Например, во время делового общения ваш взгляд должен встречаться с глазами партнера около 60–70% от всего времени общения. Скованный, зажатый собеседник, который встречается с вами взглядом менее 1/3 от времени общения, редко пользуется доверием.

Так же надо знать, например, что во время переговоров и деловых бесед никогда не следует одевать темные очки, потому что у партнера появится ощущение, что его рассматривают в упор.

В деловом общении необходимо так же обращать внимание на голосовые характеристики партнера. Голос содержит в себе очень много информации о хозяине. По тону голоса, по его высоте и скорости можно определить настроение, характер и темперамент его обладателя.

Очень важным средством невербального общения является стиль одежды. Внешний вид, одежда человека играют важную роль в процессе общения. Одеваясь, человек должен осознавать, какую информацию он передает своим внешним видом и как она скажется на достижении его целей общения.

Таким образом, невербальные средства общения, в частности жесты, являются неотъемлемой и необходимой частью бытовой жизни людей каждого этнического коллектива, т.к. выполняют не только идеологические, культовые или социальные функции, но и отражают повседневную практическую деятельность частного человека (McNeill, 1992: 4). В данной связи необходимо подчеркнуть, что социокультурный подход к обучению устной речи на английском языке студентов-экономистов позволяет включить в учебный процесс невербальные средства повседневного и делового общения.

ЛИТЕРАТУРА

1. *Каган М.С.* Мир общения: Проблема межсубъектных отношений. М.: Политиздат, 1988. 319 с.
2. *McNeill D.* Hand and mind: What gestures reveal about thought. Chicago, 1992.
3. *Тер-Минасова С.Г.* Язык и межкультурная коммуникация. М.: Слово, 2000. 264 с.
4. *Шихарев П.Н.* Современная социальная психология в США. М.: Наука, 1979. 209 с.
5. *Шевандрин Н.И.* Социальная психология в образовании. М.: ВЛАДОС, 1995. - 544 с.

THE USE OF NON-VERBAL COMMUNICATION MEANS IN DEVELOPING SPEAKING SKILLS OF STUDENTS MAJORING IN ECONOMICS

L. Ter-Sargsyan

ABSTRACT

Successful communication requires to be competent and experienced not only in verbal but also in non-verbal communication since most of our communication takes place at the non-verbal level. The article deals with the principles of forming and developing students' oral speech through non-verbal communication, taking into account their content and functions.

Keywords: non-verbal communication, business communication, verbal communication, dialogue, oral speech.

ՈՉ ԽՈՍՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒՄԸ ՏՆՏԵՍԱԳԵՏ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Լ. Տեր-Սարգսյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայտնի է, որ ոչ խոսքային հաղորդակցումը կարևոր է ոչ միայն առօրյա խոսքում, այլև գործարար հաղորդակցման գործընթացում: Հոդվածում քննության է առնվում ոչ խոսքային հաղորդակցման միջոցների ուսուցանումը տնտեսագետ ուսանողների բանավոր խոսքի ձևավորման և զարգացման նպատակով, հաշվի առնելով սույն միջոցների բովանդակությունը և գործառույթները:

Հիմնաբառեր՝ բանավոր խոսք, խոսքային հաղորդակցում, երկխոսություն, ոչխոսքային հաղորդակցում, գործարար հաղորդակցում:

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ. ՄՈԼԻԵՐ

Ա.Մ. Գլջյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
d.gljyan@gmail.com

ԱՄՓՈՓՈՒՄ

Պարոնյանը համաշխարհային գրականության մեծ դեմքերի, այդ թվում, Մոլիերի, ստեղծագործական փորձն ուսումնասիրել է, որպես զիխորթափանցի բանարվեստի է ության մեջ և ճշտի արվեստագետիիրուղինու խնդիրները: Նա, Մոլիերի փորձը յուրացրել է՝ խորապես գիտակցելով նրաան հատականության և ժառանգության ուժեղն թույլ կողմերը:

Հիմնաբառեր՝ Պարոնյան, Մոլիեր, ստեղծագործական ժառանգության:

Պարոնյանի, ինչպես որևէ գրողի, ստեղծագործությունն ըմբռնելու բանալիներից մեկը պետք է փնտրել՝ կենտրոնանալով նրանց գրական համալսարանների՝ ազգային և համաշխարհային արվեստի մեծերից քաղած դասերի վրա, քանի որ ավագների փորձն ու գիտելիքները յուրացնելն օգնում է կրտսերներին ստեղծագործության հետ կապված սկզբունքային խնդիրները վճռելու գործում:

Պարոնյանը, նախքան գրական ասպարեզ մտնելը, գիտակցել է, որ հայրենի գրական հասարակությունը գտնվում է եվրոպական մշակույթի կենտրոններից հեռու, ուստի, ընձեռած աճելու և ինքնադրսևորվելու պայմանները կարող են օբյեկտիվորեն սահմանափակել իր տաղանդի հնարավորությունները: Ինքը, որպեսզի զարգանա, պետք է մոտիկից ծանոթանա եվրոպական մշակույթին. կյանքի, գիտության, ազգա-յին ու համաշխարհային գեղարվեստի, նրա պատմության վերաբերյալ հիմնարար գիտելիքներ ձեռք բերի, խորամուխ լինի նաև՝ հայրենի գրականության պատմության առանձնահատկությունների և պահանջ-ների մեջ: Այսինքն, անհրաժեշտ էր, որ ինքը դարաշրջանով շնչի, որպեսզի լինի մտքի և ոչ թե արվեստի արտաքին էսթետիզմի մարդ:

Պարոնյանը. «Յուր երիտասարդության մեջ՝ յուր հանճարին գիտակցությունն ունենալու սկսած միջոցին», «եռանդով կարդացած էր

ընտրելագույն հեղինակներն»[1], վկայել են ժամանակակիցները. «Նա գիտցած էր խուզարկել ամեն ազգաց մատենագրությանց մեջ և լավագույն ադամանդները դուրս հանել, ի բաց թողլով ավելորդը»[2]: Այդ հեղինակների մեջ առանձնացել է Ժան-Բատիստ Մոլիերը: «Սովորաբար Մոլիերի կամ Պուալոյի հատոր մը ուներ ձեռքը, պատուհանին քով, ուր կ'առանձնանար իրիկունները», հիշել են նրանք. «Շատ լուրջ դեմք մը ուներ, լուրջ խոսվածք մը». «Շատ կը կարդար ու քիչ կը գրեր»[3]:

Ժամանակակիցները և հետագա պարոնյանագետները գրողի անհատականությունը նաև համեմատել են Մոլիերի հետ, նրան ընկալել իբրև «հայ Մոլիեր»[4], «նոր Մոլիեր»[5]: Ա. Տերտերյանը, Պարոնյանին գնահատել է իբրև «Մոլիերին պարալել-երևույթ»[6]:

Պարոնյանագետները, սակայն, գրողի՝ Մոլիերի հետ ստեղծագործական կապերին ու առնչություններին անդրադառնալիս սովորաբար կենտրոնացել են գրական վարպետության որոշ դասերի վրա: Նման մոտեցման միակողմանիությունը դեռ ժամանակին մերժել է գրականագետ Սիմոն Երեմյանը: Գրական վարպետության դասերը, անշուշտ, կարևոր են, նշել է նա: Յուրաքանչյուր սկսնակ, պատրաստվելով արվեստի ասպարեզ մտնել, ձգտում է նախորդների արհեստի վարպետության գաղտնիքները յուրացնել: Բայց Պարոնյանի մեծությունը պայմանավորված չէ դրանով: «Պարոնյան մեր մեջ կը մտցներ գրական այն երգիծական մասնաճյուղը, որ չափազանց դժվարին է նկատված՝ նույնիսկ և նոր միջազգային գրակա-նության մեջ», – նշել է գրականագետը: Խորն է նրա արվեստը. «ինքնաբուխ» ծիծաղի ետևում թաքնվում են դառն արցունքներ: Բացառիկ հարուստ ու կատարյալ է նաև երգիծաբանության զինանոցը: Բնական է, որ Պարոնյանը Մոլիերից յուրացրած լինի երգիծական արվեստի ինչ-ինչ սկզբունքներ (օրինակ, երգիծելիս, ֆրանսիացու նման է գործածել չափազանցության հնարանքը, նշել է գրականագետը, որպեսզի «կրակին վրա յուղ» «նետեր»), բայց դա երկրորդական հանգամանք է: Բոլոր կրտսերներն էլ գրական արհեստը կատարելագործում են նախորդների փորձով: Պարոնյանի գրականությունը գնահատելիս սրա վրա առանձնապես պետք չէ կենտրոնանալ: Անհրա-

[1] Տե'ս Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Եր., 2004, էջ 132:

[2] Նույն տեղում, էջ 124:

[3] Նույն տեղում, էջ 76:

[4] Տե'ս Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Եր., 2004, էջ 107:

[5] Նույն տեղում, էջ 190:

[6] Տերտերյան Ա., Երկեր, Եր., 1960, էջ 737:

ժեշտ է բացատրել, ընդգծել է նա, թե գրողը համաշխար-հային մշակույթի ի՞նչ դասեր է յուրացրել, որպեսզի իր ստեղծագործական անհատա-կանությամբ և գրականությամբ բարձրանա տեղային երևույթ լինելուց: Չէ՞ որ ակնհայտ է, որ երգիծաբանը, ծանոթ լինե-լով «տիեզերահռչակ տաղանդների», «մեծ վարպետների» ստեղծագործությանը, նշել է Ս. Երե-մյանը, «առանց մուրացկանը չէ, վասնզի պետք չէր զգար մուրալու»: Նույնիսկ, կարելի է ասել, ընդգծել նա, թե Պարոնյանի երգիծանքը բացառիկ ինքնատիպ է, հմայքն ավելի մեծ, քան՝ նրանցը: «Անդերսեն, Մոլիեր իրենց կյանքին փուլերը նյութ են ըրած իրենց գրականություն-ներուն, իսկ Պարոնյան իր առջև նյութ ուներ հայ հանրություն մը»: Նրա ստեղծագործությունները կարդալիս «կը ծծենք Վերածնունդի հույսին արշալույսին գույները»[7]: Ինչո՞վ է, ուրեմն, Պարոնյանին գրավել Մոլիերը:

Մեծ տաղանդները, պատրաստվելով գրական ասպարեզ մտնել, ամենից առաջ փորձում են պատասխան գտնել իրենց ստեղծագործական անհատականությունն ըմբռնելու, գրական կենդանի գործընթացի մեջ կողմնորոշվելու, արվեստի իրենց ուղղությունը որոշելու հարցերում: Նրանք գիտակցում են, որ ծնվելով որոշակի դարաշրջանում, երկրում, պորտալարով կապված են հայրենի գրական գործընթացին, բայց եթե իսկապես մեծ են, պարտավոր են հաղթահարել երկրի և ժամանակի կապանքները և դառնալ մարդ-կության որդին ու մշակը:

Պարոնյան-Մոլիեր գրական առնչության մեջ խորամուխ լինելու համար անհրաժեշտ է, նախ և առաջ, ճշտել, թե համաշխարհային գրա-կանության պատմության մեջ Մոլիերն ի՞նչ տեղ էր գրավում և, հետևա-բար, Պարոնյանին իր ստեղծագործական անհատականության ու փորձի ո՞ր կողմերով կարող էր հետա-քրքրել:

Բանն այն է, որ դեռևս Պարոնյանից առաջ Մոլիերի անհատակա-նության և ստեղծագործության գնահատ-ման վերաբերյալ ձևավորվել էր երկու տեսակետ: Առաջինի կողմնակիցները՝ Լեսինգը, Շլեգելը, Պուշ-կինը, հիմնվելով ստեղծագործական անհատականության ու ստեղծա-գործության որոշ ըմբռնման վրա, Մոլիերին դիտել էին իբրև կլասիցիս-տական գրականության տիպական ներկայացուցիչ: «Մոլիերի, իսկ նրանից առաջ Պլավտուսի» արվեստի գլխավոր բնութագիծն այն է, որ նրանք «ժլատ մարդու դիմա-նկարի փոխարեն մեզ տալիս են» «ժլատու-թյան, որպես կրքի, տարօրինակ և տհաճ պատկերը»[8], – գրել էր Լեսինգը, և շատերը նրան հավատացել էին: Շլեգելը, իր հերթին, Մոլիեր-երգի-

[7] *Երեմյան Ս.* Հակոբ Պարոնյան, «Բազմավեպ», Վենետիկ,1913, թիվ 4:
[8] *Лессинг*, Гамбургская драматургия, М., 1938, С. 335.

ծաբանին «բարձրից» նայելով, «գտել» էր, որ նրա ծիծաղն ու երգիծանքը պարզունակ և մակերեսային են՝ սահմանված խնդուք պատճառող զավեշտախաղերի համար: Նրա ստեղծագործությունների վրա նկատելի է օտար չհաղթա-հարված ազդեցությունների դրոշմը, պնդել էր նա. դրանք, նույնիսկ, գողացված լինելու տպավորություն են թողնում[9]: «Մոլիերի ժլատը միայն ժլատ է»[10], – Լեսինգին կրկնել էր նաև ռուսական գրականության ամենամեծ հեղինակություններից մեկը՝ Պուշկինը: (Նրա տեսակետը հետագայում, որպես դասագրքային ճշմարտություն, կրկնել են խորհրդային գրականագետների մեծ մասը, մեկնաբանելով, թե Մոլիե-րի ստեղծագործություններում «տիպական գծերը կերել են մարդուն»[11]: Մեր գրականագիտությունը դեռևս լիովին չի հաղթահարել Վ. Գրիբի, Ս.Դ.Արտամոնովի[12] և այլոց սույն հայացքը, որը սկզբունքորեն ապա-կողմնորոշել է նաև մեր պարոնյանագետներին՝ անհնար դարձնելով Պարոնյան – Մոլիեր կապի բնույթը լիարժեք ըմբռնելը: Դրա խոսուն ար-տահայտությունն է այն փաստը, որ Մոլիերի երկերը հայերեն հրա-տարակվել են որպես Ֆրանսիական կլասիցիզմի արտահայտություն)[13]:

Երկրորդ տեսակետի կողմնակիցները՝ Գյոթեն, Բայրոնը, Գոգոլը, հակառակ տեսակետն են պաշտպանել: Նրանք Մոլիերի անհատակա-նության և ստեղծագործության մեջ ըմբռնել են համաշխարհային գրա-կա-նության հիացմունքի արժանի արվեստագետին, որի վիթխարի մե-ծությունը չի տեղավորվում որևէ առանձին գրական ուսմունքի շրջա-նակների մեջ: «Մոլիերի ստեղծագործություններից մեր դեմ հառնում է հեղինակի սիրելի մեծ անհատականությունը», – գրել է Գյոթեն: -«Մոլիե-րին ես ճանաչել ու սիրել եմ իր երիտասարդական տարիներից սկսած և ողջ կյանքիս ընթացքում նրանից սովորել եմ: Առանց հոգնության տարին մի քանի գործ եմ կարդում նրանից, որպեսզի մշտապես կապի մեջ լինեմ այդ հրաշալի մարդու հետ»[14]: Պարոնյանը, անկասկած, պաշտպանել է երկրորդ տեսակետը, քանի որ նա, ինչպես կտեսնենք ներքևում, Գյոթեի ու Գոգոլի նման է ընկալել նրա «մեծ անհատականությունը»:

Պարոնյանն ինչու՞ է Մոլիերին ընտրել: Նախ, որովհետև ֆրանսիա-ցին գրական աշխարհի մեծ հեղինա-կություններից էր, որին շատերն էին

---

[9] *Էքերման*, Զրույցներ Գյոթեի հետ, Եր., 1975, էջ 237:
[10] *Пупкин А.С.* Полное собр. соч. , Т. 8, М., 1964. С. 91.
[11] *Гриб В.* Избранные работы. М., 1958. С. 376.
[12] *Արտամոնով Ս.Դ.* Տասնյոթ-տասնիններորդ. արտասահմանյան գրականության պատմություն, Եր., 1986, էջ. 158–204:
[13] Ֆրանսիական կլասիցիզմ, Եր., 1982:
[14] *Էքերման*, նշվ. աշխ. էջ 236:

դիմում: Երկրորդ, Պարոնյանը, մեր կարծիքով, իր և Մոլերի առջև կանգնած խնդիրների միջև նմանություն է տեսել: Մտովի վերհիշենք, թե Պարոնյանի գրական ասպարեզ մուտք գործելու շրջանում ի՞նչ վիճակ էր հայ գրականության, մասնավորապես, թատերգության և երգիծաբանության ասպարեզներում: Չնայած Զարթոնքի գրականության առաջաքայլերին, շատ ուժեղ էին Մխիթարյանների սկզբնավորված հայկական կլասիցիզմի գեղարվեստական ավանդույթները, Էդ. Հյուրմուզյանի, Ս. Հեքիմյանի, Թ. Թերզյանի, Ա. Բագրատունու, Ղ. Ալիշանի, Մ. Պեշիկթաշլյանի հեղինակությունը: Միաժամանակ, գրվում և բեմադրվում էին կենցաղագրական բնույթի կատակերգություններ՝ Գ. Ռշտունու «Հայր Ջոհրաբ Կորկոտնաքյանը», Խորեն Գալֆայանի «Ալաֆրանկան», Վահան Պարտիզակցու «Գագիկ Բ»-ն, որոնք գեղարվեստի տեսակետից թույլ էին, թեկուզ հանդիսատեսը խանդավառությամբ էր ընդունում: Ո՞րն էր լինելու իր ուղին: Ընթանալու էր մխիթարյանների՞ բացած ուղիով, զարգացնելու էր նրանց ավանդույթները, թե՞…

Պարոնյանը, ծանոթանալով Ժան-Բատիստ Մոլիերի կյանքին ու գործին, գիտակցել է, որ իբրև ինքնուրույն արվեստագետ ձևավորվելու գործում վճռական նշանակություն է ունեցել, նախ և առաջ, իր դարաշրջանի գրական ուղղության՝ կլասիցիզմի և կլասիցիստ արվեստագետների՝ Պիեռ Կոռնելի, Ժան Ռասինի և, մասնավորապես, արվեստի խոշոր տեսաբան Նիկոլա Բուալոյի անհատականության և գեղագիտական հայացքների նկատմամբ ինքնուրույն դիրքորոշումը: (Այս խնդիրը, մեր կարծիքով, Պարոնյանի համար դարձել է հատուկ ուսումնասիրության առարկա):

Պարոնյանը հասկացել է, որ Մոլիերը, լինելով նյութական ու հոգեկան աշխարհը ճանաչելու բնածին ունակությամբ օժտված և արվեստի հարցերում խորագիտակ, Բուալոյի ժառանգության նկատմամբ բազմակողմանի մոտեցում է դրսևորել: Նա հիացել է կլասիցիզմի մեծ տեսաբանի գիտելիքներով, բայց նաև ըմբռնել է, որ Բուալոն՝ Արիստոտելի և Հորացիուսի պոետիկաների, հունահռոմեական դասական արվեստի և գեղագիտության մեծ հետևորդը, անփոխարինելի ուսուցիչ է միայն հին հունական դասական արվեստն ու տեսությունը, դասական արվեստագետի կոչումը մեկնաբանելու հարցերում: Նա իրավացի է, երբ պնդում է, թե գեղարվեստական զարգացման բնականոն ընթացքը շարունակելու համար բանար-վեստի տեսության մեջ պետք է հաղթահարել նախորդ դարաշրջանից փոխանցված քաոսը, բանարվեստի կանոնները բանականության օրենքներին ենթարկել, վերականգնել կապը հունահռոմեական ավանդույթների հետ:

Այս հարցերից դուրս, սակայն, նա, ի տարբերություն Արիստոտելի, սահմանափակ մտածող է, ուստի արվեստի սեփական ուղի ընտրելու հարցում նրան դիմելն ու խորհուրդ ակնկալելն անօգուտ է: Նա, մասնավորապես, անգիտանում է պատմության ընթացքում որակական առաջադիմության օրենքը, այսինքն, չի գիտակցում, որ մարդկությունը, անկախ հզոր բնագավառներում ունեցած ինչ-ինչ նահանջ-ներից ու կորուստներից, զգալի առաջադիմել է: Հետևաբար, նոր գրողը ոչ թե հնազանդորեն պետք է հետևի դասական նախորդների ավանդույթներին, ինչպես սովորեցնում է Բուալոն և, ինչպես նրան լսելով, արել են Կոռնելը և Ռասինը, այլ, կողմնորոշվի դեպի աշխարհի և մարդու նոր հայեցակետը և, նոր վերաբերմունք մշակելով գեղարվեստի դարաշրջանների, գրական գործընթացի տրամաբանության, արվեստի հեռանկարի և խնդիրների վերաբերյալ, լուծում գտնի ինքնուրույն ուղու իր որոնումներին:

Կլասիցիզմը դասական արվեստի պատմության ծաղիկն է, բայց այն, հավատարիմ իր ծագումնաբանութ-յանը, արվեստագետին կողմնորոշելով դեպի հունահռոմեական դարաշրջանի գեղագիտության փորձն ու գիտելիքները, նահանջել է արվեստի գլխավոր՝ կենդանի իրականությանը համընթաց քայլելու ավան-դույթից, հասկացել է Մոլիերը: Արվեստում առաջընթացի ոգին ներկայումս արվեստագետներին թելադրում է ոչ թե նախորդների ավանդույթը շարունակել ու կատարելագործել, ինչպես սխալմամբ կարծում է Բուալոն, այլ՝ կյանքի ակունքին փարվելով, հետևել դարաշրջանների հաջորդափոխման օրենքի տրամաբանությանը: Գրողը, որպեսզի անհատականության հնարավորությունները դրսևորի, նպատակասլաց ուղի ընտրի, պետք է բանիմացորեն դիրքորոշվի գործընթացի նկատմամբ: Բուալոն անգիտանում է այս պահանջը, այդ պատճառով էլ գրողի գործունեությունը սահմանափակում է դասական արվեստի շրջանակներով:

Պարոնյանը գիտակցել է, որ, ի տարբերություն Բուալոյի, Մոլիերը հասկացել է, որ նոր կյանքն է առաջադ-րել ժամանակի արվեստի կանոնների սահմանափակությունն հաղթահարելու և արվեստի ու գեղագիտության ավելի ընդգրկուն օրենքների հետևելու պահանջը: Նա, որպեսզի խնդիրը վճռի, մի կողմից, հետևելով Բուալոյի խորհրդին, կենտրոնացել է իր արվեստագետ հոգու և տաղանդի պահանջների վրա՝ դրանք, նրա հանձնարարականների համաձայն, ստուգել է ոչ թե «անիմաստ», «խանդավառ բռնկումով» (398), այլ «զգաստ դատողությամբ» փնտրելով ու գտնելով «առողջ մտքերի» այն «դժվարհասանելի, բայց կարևոր» «շավիղները» (399), որոնց ճշմարտությունն անգիտացողները խորտակվում

են: Մյուս կողմից, կողմնորոշվել է ոչ թե կլասիցիստների, այլ՝ Հյուսի-սային վերածնության մեծ արվեստագետների փորձն ու գիտելիքները:

Համաշխարհային արվեստի դարաշրջաններից յուրաքանչյուրը կենդանի կյանքի մայրուղու առաջադի-մության տրամաբանությամբ է ձևավորվել, գիտակցել է նա, և սնել իր մարդուն, որն արվեստին իր պահանջներն է առաջադրել: Այդպես է եղել Հին Եգիպտոսում, Հին Հունաստանում, միջնադարյան Եվրո-պայում, Վերածննդի դարաշրջանի Իտալիայում, այդպես է նաև Նոր ժամանակներում: Վերածննդի իտա-լական արվեստը խորքի մեջ ոչ թե անտիկ դասականի վերածնունդն է, այլ՝ խոշոր և բազմանշանակ իմաս-տային կառույց, որի արմատները մարդկության կրոնական ծիսական-հանդիսանքային մտածողության մեջ են:

Վերածնության կեցության գլխավոր գաղափարապատկերային ոլորտը Միջնադարի ժողովրդական ծի-ծաղային մշակույթն է: Վերածնության արվեստը հարություն է առել և զարգացել՝ շատ բաներում հետևե-լով անտիկ և միջնադարյան ոչ թե դասական, այլ՝ գրոտեսկային իրապաշտության արվեստի ավան-դույթներին: Վերածնության արվեստագետները, մարմնավոր արժեքների վրա կենտրոնանալով, Տիրա-մոր գրկում մարդկանց փրկելու կոչված Աստծո հողեղեն Որդու գեղարվեստական կերպարը ստեղծելով, ուշադրությունը մերկ մարմնի վրա կենտրոնացնելով, տղամարդու ուժը և առնականությունը, կնոջ երկրային գրավչությունը պատկերելով՝ հզոր հարված են հասցրել ոչ միայն պաշտոնական դասական աշխարհայեցությանը՝ ասկետիզմին, այլև՝ սկզբունքային քայլ կատարել աշխարհի ժողովրդական հայե-ցակարգի և նոր արվեստի ուղղությամբ: Նրանք հաստատել են, որ Մարդը բնության գլուխգործոցն է և պետք է լավագույնս դրսևորի հոգևոր ու մարմնավոր ուժերը: Իտալական բարձր Վերածննդի ամենախո-րագիտակ արվեստագետը՝ Լեոնարդո դա Վինչին, հակադրվելով ժամանակի արվեստում ընդունված դասական ուղղության ջատագովներին, այդ թվում, Միքելանջելոյին, «Մոնա Լիզա» («Ջոկոնդա») կտա-վում, «մարդու գեղեցկություն» ասելով, նկատի է ունեցել ոչ թե ազատ բնավորության տիտանական գծե-րով օժտված իդեալ հերոսի կերպարը, այլ՝ կենդանի մարդու, տվյալ դեպքում, քաղքենի կնոջ իրական նկարագրի բաղադրիչները՝ կերպարի սեռային, հասակային, հոգեբանական, սոցիալական որոշակիութ-յունը, անհատականություն լինելը, հարուստ ներաշխարհ ունենալը:

Մոլիերն ըմբռնել է նաև Հյուսիսային Վերածնության արվեստագետների՝ Շեքսպիրի, Սերվանտեսի և Ռաբլեի արվեստի

ուղղության տրամաբանությունը: Նրանց ստեղծագործությունը գնահատել է ոչ միայն որպես գրական տաղանդի և վարպետության դրսևորում, այլև՝ վերընթացի օրենքներին անսալու արդ-յունք: Ասպարեզ մտնելով մարդկության պատմության անցումային շրջաններից մեկում՝ այս արվեստա-գետները գիտակցել են, որ իտալական Վերածննդի իդեալը մնացել է ետևում: Ժամանակի շունչն այլևս հնարավոր չէ արտահայտել դասական մարդու կերպարի միջոցով: Առաջադիմության ուղիով ընթանալու համար գեղարվեստական մտածողությունն անհրաժեշտ է հարստացնել առավել ընդգրկուն սկզբունք-ներով, ինչպես նաև պատմաշրջանի մատուցած բարդ և հակասական նյութի բովանդակությանը համապատասխան գեղարվեստական պատկերներով, կերպարներով և արտահայտչաձևերով: Նոր լուրջ ողբերգություն և կատակերգություն գրելիս խնդիրը դարձյալ, ինչպես անցյալում, «ավելի լավ» և «ավելի վատ» մարդկանց ներկայացնելն է, բայց Արիստոտելի ժամանակներից հետո կյանքն առաջ է ընթացել, աշխարհում էական փոփոխություններ են կատարվել: Հետևաբար, ինչպես Շեքսպիրը, Սերվանտեսը, Ռաբլեն, մյուսները, նաև՝ ինքը, պարտավոր են ոչ թե կրկնել հներին, այլ՝ նոր նյութի հետ կապված խնդիրներին համապատասխան գեղարվեստական լուծում գտնել:

Պարոնյանը Մոլիերի փորձից ու գիտելիքներից քաղած դասերը որպես իր ստեղծագործական խնդիրները վճռելու մեթոդական ուղեցույց է օգտագործել: Նա, մասնավորապես, հասկացել է, որ, գնահատելով հանդերձ հայկական կլասիցիզմի արվեստը և արվեստագետներին, ինքը ևս պետք է կողմնորոշվի դեպի կենդանի կյանքի առաջադիմության պահանջները, յուրացնի Զարթոնքի շարժման հաստատած աշխարհի նոր հայեցակարգի և գրականության հիմունքները, իր ուղին կապի ժողովրդատոնական ծիծաղի և երգիծանքի ավանդույթները զարգացնելու հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Եր., 2004, էջ 132:
2. *Տերտերյան Ա.,* Երկեր, Եր., 1960, էջ 737:
3. *Երեմյան Ս.* Հակոբ Պարոնյան, «Բազմավեպ», Վենետիկ, 1913, թիվ 4:
4. *Лессинг*. Гамбургская драматургия. М. 1938.
5. *Էքերման*, Զրույցներ Գյոթեի հետ, Եր., 1975:
6. *Пупкин А.С*. Полное собр. соч., Т. 8. М. 1964.
7. *Гриб В*. Избранные работы. М., 1958.
8. *Արտամոնով Ս.Դ.* Տասնյոթ-տասնիններորդ. արտասահմանյան գրականության պատմություն, Եր.:
9. Ֆրանսիական կլասիցիզմ, Եր., 1982:

10. *Էքերման,* նշվ. աշխ. էջ 236:

HAKOB PARONYAN'S LITERARY UNIVERSITIES: MOLIÈRE

A. Gldjan

ABSTRACT

Hakob Paronyan studied the creative heritage of prominent representatives of world literature, in particular Molière, aiming at a deeper understanding of the essence of poetic art and trying to find his own path. He internalized Molière's experience by comprehending his individual style, the strengths and weaknesses of his creative heritage.
Keyword: Paronyan, Molière, creative heritage.

ЛИТЕРАТУРНЫЕ УНИВЕРСИТЕТЫ АКОБА ПАРОНЯНА: МОЛЬЕР

А.М. Глджян

АННОТАЦИЯ

Акоб Паронян изучал творческий опыт выдающихся представителей мировой литературы – в частности, Мольера, стремясь все глубже проникнуть в суть поэтического искусства и выверить свой собственный путь. Он усвоил опыт Мольера, глубоко осознавая его индивидуальность, сильные и слабые стороны творческого наследия.
Ключевые слова: Паронян, Мольер, творческое наследие.

ЖУРНАЛИСТИКА

ՌԱԴԻՈՆ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Մ.Մ. Հովսեփյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից փուլում ողջ աշխարհում ընթանում են հեռահաղորդակցման միջոցների և համացանցի սրընթաց զարգացման և տարածման անշրջելի գործընթացներ, առանց որոնց անհնար է պատկերացնել հանրային կյանքի որևէ ոլորտ կամ բնագավառ: Տեղեկատվական-տեխնոլոգիաները դարձել են յուրաքանչյուր հանրության, յուրաքանչյուր անհատի ամենօրյա կիրառություն ունեցող ամենապահանջված հաղորդակցային միջոցները, որոնք օրեցօր ավելի գերիշխող դեր և նշանակություն են ձեռք բերում հանրության կյանքում: Գլոբալացման և արմատական փոփոխությունների դարաշրջանում տեխնիկական միջոցների զարգացումն ու առաջընթացը ծնեցին հաղորդակցման և տեղեկատվության հավաքման և փոխանցման նոր, առավել հասանելի և արդյունավետ միջոցներ, որոնք իրենց հերթին ձևավորեցին հանրային և անհատական հաղորդակցման նոր հարաբերություններ, ձևեր և դրսևորումներ: Նախկինում պասիվ ռադիոունկնդիրը, հեռուստադիտողը և ընթերցողն ստացան տեղեկատվության ստանալու, հավաքելու և փոխանցելու լայն հնարավորություններ: Օգտվելով տեղեկատվական-տեխնոլոգիաների ներդրման և զանգվածային կիրառման հնարավորություններից յուրաքանչյուր անհատ և կազմակերպություն կարողացավ ոչ միայն օգտվել, այլև հիմնել սեփական լրատվամիջոցը և գործուն դերակատարություն ունենալ գլոբալացման արդյունքում ձևավորված տեղական, տարածաշրջանային և համաշխարհային տեղեկատվական շուկաներում: Գլոբալացման գործընթացները ոչ միայն հնարավորություն ընձեռեցին անհատին կողմնորոշվելու տեղեկատվական հոսքերում,, այլև ընտրելու, իսկ այժմ արդեն կառավարելու իր ցանկացած տեղեկատվամիջոցը, որի հնարավորությունը չկար ոչ վաղ անցյալում:

Հիմնաբառեր՝ Ռադիոն և տեղեկատվական տեխնոլոգիաները, ռադիոհեռարձակման նոր թվանշային ստանդարտներ, ռադիոն համացանցում, մոբայլ շարժական սարքեր:

Ժամանակակից փուլում գլոբալացումը դարձել է արագ փոփոխվող աշխարհի խորհրդանիշ: Ըստ հայ տեսաբանի՝ «Այսօրվա գլոբալիզացիան հասարակական-տնտեսական տեխնոլոգիական օրինաչափ գործընթացների օբյեկտիվորեն անխուսափելի հետևանք է, որի մեջ ակամա ներգրավված են բոլոր ազգերն ու պետությունները»:1 Տեսաբանների մեծ մասը հակված է այն տեսակետին, որ գլոբալիզացիան նոր երևույթ չէ և իր դրսևորումներն է ունեցել նախորդ դարերում ևս, 2 մի մասը կարծում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և համացանցը հնարավորություն են տվել գլոբալ տեղեկատվամիջոցներին առավել ակտիվ դերակատարում ունենալ հասարակական-քաղաքական, մշակութային արժեքների տարածման ասպարեզում և դառնալ տարբեր քաղաքակրթությունների և մշակույթների մերձեցման և տարածման միջոց: 3 Այդ պատճառով է, որ խոշորագույն տեղեկատվամիջոցները գլոբալիզացիայի հնարավորությունները օգտագործելով կարճ ժամանակահատվածում կարողացան նորանկախ պետություններում ձևավորել տեղեկատվական ազդեցության այնպիսի գոտիներ, որոնք հնարավորություն տվեցին տեղեկատվամիջոցներին կառավարելու և ուղղորդելու տեղեկատվական գլոբալ հոսքերը: Ըստ մեր դիտարկման նմանատիպ տեղեկատվամիջոցի օրինակ է ծառայում «Ազատություն» ռադիոկայանը, որը հեռարձակվում է տարածաշրջանային 21 պետությունների 28 լեզուներով, այդ թվում նաև հայերեն:

Վերջին տասնամյակներում մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական և տնտեսական նոր հարաբերություններով պայմանավորված գլոբալացման գործընթացները որակական նոր հնարավորություններ ստեղծեցին տարածաշրջանային նորանկախ երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության համար: Նոր ձևավորվող տեղեկատվական հոսքերում մեծապես կարևորվեց և արժեվորվեց ռադիոյի տեղն ու դերը որպես գլոբալ տեղեկատվական նոր դաշտի առանցքային խաղացողի և ձևավորողի: Գլոբալ արմատական փոփոխությունները մեծապես ազդեցին ռադիոյի վարած ծրագրային քաղաքականության և կարգավիճակի վրա, որոնք համընկան տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխություններով, հատկապես «սառը պատերազմի» ավարտով, սոցիալիզմի սիստեմի փլուզմամբ և նոր, շուկայական տնտեսական հարաբերություններով պայմանավորված: Այդ պատճառով մեզանում զանգվածային տեղեկատվամիջոցների, հատկապես, ռադիոյի հետագա զարգացումը տեղի ունեցավ թռիչքաձև և բավականին կարճ ժամանակահատվածում, որը լուրջ նախադրյալներ ստեղծեց նոր, գլոբալ ռադիոտեղեկատվական, քարոզչական հարաբերությունների ձևավոր-

մանը, տեղեկատվական գլոբալ հոսքերի կտրուկ մեծացմանն ու ընդլայնմանը, որոնց շնորհիվ ռադիոն դարձավ գլոբալ տեղեկատվության և մշակույթի տարածման ամենամատչելի և ամենաընդունելի լրատվամիջոցներից մեկը («Ազատություն» ռադիոկայան, ՀՀ հանրային ռադիո և այլն)։

Ժամանակակից փուլում ռադիոժուռնալիստիկայի արդյունավետ զարգացմանը նպաստում են մի շարք կարևոր գործոններ, որոնք կանխորոշում են նրա դերն ու նշանակությունը ժամանակակից հասարակարգում, մասնավորապես հաշվի առնելով նրա օպերատիվությունն ու ամենահասությունը տեղեկատվության ընդունման, հավաքման և հեռարձակման ասպարեզում։

Ռուս տեսաբան Յասեն Զասուրսկու խոսքերով «ռադիոն ժամանակակից մարտահրավերների պայմաններում, կարողացավ ոչ միայն պահպանել իր տեղը ԶԼՄ-ների համակարգում, այլև լսարանի համար մնաց անկեղծ ու սրտացավ զրուցակից»։ 4

Ռադիոյի զարգացման միտումները բավականին դրական է գնահատել հայտնի սոցիոլոգ և փիլիսոփա Մանուել Կաստելսը, մասնավորապես նշելով, որ շնորհիվ համացանցի «ռադիոն ռենեսանս է ապրում, դառնալով ամենատարածված կապի միջոցն աշխարհում»։ 5

Արդեն 1990-ականներին ինչպես նորանկախ պետությունները, այնպես էլ անհատներ հնարավորություն ունեցան ձեռք բերելու լրատվության տարածման անսահմանափակ և արդիական ռեսուրսներ։ Պատմական կարճ ժամանակահատվածում ձևավորվեցին հարյուրավոր մասնավոր ռադիոկայաններ, ինչպես նաև նախադրյալներ համացանցային ռադիոյի հիմնադրման համար, որը 2000-ականների սկզբներին այլևս իրողություն էր նաև նախկին խորհրդային և սոցիալիստական երկրներում։

Տեղեկատվական-տեխնոլոգիաներն այնքան արագ էին զարգանում, որ արդեն 1990-ականների սկզբներին ԱՄՆ-ում մշակվեցին նոր տեխնիկական ձևաչափեր, որոնց միջոցով հնարավոր եղավ ձայնը տարածել համացանցում՝ սկիզբ դնելով համացանցային ռադիոհեռարձակմանը։ Տեխնիկական և ստեղծագործական լուծումների շնորհիվ արդեն 1993թ. հիմնադրվեց առաջին համացանցային “Internet Talk Radio” ամերիկյան ռադիոկայանը։

Ժամանակակից փուլում ռադիոյի զարգացման համար կարևոր խթան են հանդիսանում մի շարք գործոններ, որոնք պայմանավորված են տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ և տարածմամբ։ 6

Գլոբալացման գործընթացները, մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետությանը տվեցին ոչ միայն լայն հնարավորություններ ինտեգրվելու տարածաշրջանային և միջազգային տեղեկատվական շուկաներին, այլև սերտացնելու կապերը Սփյուռքի և նրա կառույցների հետ: Հատկապես մեզ նման մեծ սփյուռք ունեցող երկրների համար համացանցի և թվանշային տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործումը բավականին սերտացրել է տեղեկատվամիջոցների, հատկապես ռադիոկայանների գործունեությունը, փոխադարձ լսելի դարձնելով եթեր հեռարձակվող հաղորդումներն ու ծրագրերը: Վերջին տասնամյակներում ՀՀ-ում և Սփյուռքում գործող ռադիոկայանները թվանշային տեխնոլոգիաներից և հատկապես համացանցի հնարավորություններից օգտվելով ձևավորեցին մուլտիմեդիա հնարավորություններով ինտերակտիվ երկլեզու և եռալեզու կայքեր, կազմակերպեցին օնլայն հեռարձակում, անհամեմատ սերտացնելով հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունները: Հայաստանյան և Սփյուռքի ռադիոկայանները դարձան ինտերակտիվ տեղեկատվական և քարոզչական հարթակ՝ հնարավորություն տալով տարբեր երկրներում ապրող մեր հայրենակիցներին միմյանց հետ շփվելու և մասնակցելու կազմակերպվող համահայկական տարբեր միջոցառումներին, պարբերական և առաջնահերթ դարձրին մայրենիի, հոգևոր և մշակութային ինքնության քարոզչությունը ռադիոեթերում: Սփյուռքի պայմաններում գործող չորս տասնյակից ավելի ռադիոկայանների և ռադիոժամերի մեծ մասը, ինչպես նաև մեկ տասնյակի հասնող առցանց ռադիոկայանները համացանցի միջոցով լսելի են դարձել Հայաստանի Հանրապետությունում: Իր հերթին սփյուռքի ռադիոունկնդրի մշտական լսելիության շառավղում է գտնվում ոչ միայն ՀՀ հանրային ռադիոն, որն ունի հեռարձակման միջազգային ընդգրկում, այլև համացանցային հեռարձակում ապահովող եթերային և առցանց ՀՀ մասնավոր ռադիոկայանները:

Գլոբալացման գործընթացները մեծապես նպաստեցին նաև արտերկրում գործող և ոչ վաղ անցյալում խլացվող «Ամերիկայի ձայն» և «Ազատություն» խոշորագույն ռադիոկայանների մուտքը նորանկախ պետություններ, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության տեղեկատվական տարածք և գործուն դերակատարություն ունենան տեղեկատվության հավաքման և տարածման ասպարեզում: Այսօր «Ազատություն» ռադիոկայանը, որը տեղակայված է նախկին սոցիալիստական Չեխիայի մայրաքաղաք Պրահայում, ներկայացուցչական հայկական ծառայության ունի նաև Երևանում՝ մոտ 30 լրագրող և համարվում է ՀՀ-ում գործող ամենամեծ կազմ ունեցող արտասահմանյան տեղեկատվամիջոցը:

«Ազատություն» ռադիոկայանը սերտորեն համագործակցում է ՀՀ ռադիոոլորտում գործող ռադիոկայանների հետ, ամենօրյա լրատվական հեռարձակում կազմակերպելով ինչպես ՀՀ մասնավոր ռադիոկայանների եթերում («Ռադիո Երևան», «Ռադիո Հայ»), այնպես էլ օնլայն, արբանյակային և մոբայլ կապի միջոցներով:

Գլոբալիզացիայի պայմաններում ռադիոյի զարգացման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

ա/ տեղեկատվական տեխնոլոգիաներով պայմանավորված, որը հնարավորություն տվեց անցում կատարելու ռադիոհեռարձակման նոր թվանշային ստանդարտների,

բ/ Համացանցի զարգացմամբ և նրա հնարավորությունների օգտագործմամբ,

գ/ մոբայլ շարժական սարքերի, հատկապես բջջային հեռախոսների օգտագործմամբ:

Անդրադառնալով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը պետք է նշենք, որ Ժամանակակից փուլում տեղեկատվական տեխնոլոգիաները ողջ աշխարհում այնպիսի առաջընթաց են արձանագրել, որ հնարավորություն են տվել ռադիոհեռարձակման ոլորտին թևակոխելու որակական նոր, թվանշայնացման փուլ: Էլեկտրոնային տեղեկատվական զանգվածային լրատվամիջոցների բուռն զարգացումը հնարավորություն ընձեռեց էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցներին անալոգային ռադիոհեռարձակումից անցում կատարելու թվանշայինի: Թվանշային ստանդարտների զարգացման արդյունք էր 2004թ. ԱՄՆ-ում MTV հեռուստաընկերության վիջեյի կողմից շրջանառության մեջ դրված «Պոդքաստինգ»-ը, 7 որը կարճ ժամանակահատվածում մեծ տարածում գտավ առաջատար հեռուստառադիոընկերություններում՝ դառնալով նրանց վարած ծրագրային քաղաքականության անբաժանելի բաղադրիչը որին հաջորդեց 2005 թվականին ամերիկյան ‚Infinity Broadcastingե ընկերության կողմից գործարկված աշխարհում առաջին լայնահաղորդ ռադիոկայանը, որը հեռարձակում է բացառապես պոդքաստինգներ: 8

XXI դարասկզբի իրողություններից են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների մուտքը հայաստանյան ռադիոշուկա, որն հնարավորություն տվեց աստիճանական անցում կատարելու նոր, թվանշային ռադիոստանդարտների: Ժամանակակից փուլում ռադիոյի թվանշայնացումը հրատապ անհրաժեշտություն է և նորանկախ երկրները, այդ թվում նաև Հայաստանը, ծավալուն աշխատանքներ են

տանում նախանշված ժամկետում անցում կատարելու թվանշային ստանդարտների, որոնք ըստ միջազգային չափանիշների բաժանվում են երկու խմբի՝ առանձին ռադիոհաճախության տիրույթ ապահովող համակարգեր և համակարգեր, որոնց դեպքում հաճախության տիրույթը կարող է օգտագործվել գոյություն ունեցող ռադիոծառայությունների հետ համատեղ:

Հայաստանում թվանշային հեռարձակման նոր ստանդարտների է անցել ՀՀ հանրային ռադիոն, իսկ ՀՀ ռադիոոլորտում գործող մասնավոր ռադիոընկերությունները հեռարձակման նոր ստանդարտներով պայմանավորված հաճախությունների մրցույթին պատրաստվում են մասնակցել 2018թ. հուլիսի 20-ին: 9

Պետք է նշել, որ չնայած ժամանակակից փուլում էականորեն մեծացել է ռադիոհեռարձակման տեխնիկական հնարավորություններն ու ձևերը, այնուամենայնիվ աշտարակային, մետրային հեռարձակումը աշխարհի ցանկացած պետության, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության համար, ունի ռազմավարական նշանակություն և առաջնահերթություն:

Օգտվելով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հնարավորություններից, Հայաստանի Հանրապետության ռադիոշուկայում գործող մասնավոր ռադիոկայանները փորձեր են կատարում դուրս գալ միջազգային ռադիոհեռարձակման ասպարեզ և հաղորդումներ պատրաստել տարածաշրջանային երկրների ռադիոլսարանների համար: Այդպիսի հաջողված փորձերից է «Ար ռադիո միջմայրցամաքային» և Ռադիո Հայ ռադիոկայանների միջազգային հեռարձակումները:

Անդրադառնալով համացանցի հնարավորությունների օգտագործմանը, պետք է նշենք, որ այն նոր ասպարեզ և հեռանկարներ բացեց Հայաստանի Հանրապետությունում և Սփյուռքում գործող ռադիոընկերությունների համար: Հայաստանի Հանրապետությունում այդ գործընթացը սկսվեց 1990-ականների կեսերից և իր շարունակությունը գտավ հետագա տարիներին: Հայաստանի Հանրապետությունում գործող ռադիոընկերությունների համացանցային ռադիոկայքերի հիմնական դոմեյնը 1994թ. օգոստոսի 26-ին գրանցված am տիրույթն է: Համացանցի զարգացումը հնարավորություն տվեց ավանդական ռադիոկայաններին բացի օֆլայն հեռարձակումից կազմակերպելու նաև օնլայն հեռարձակում, որը կարճ ժամանակահատվածում բավականին մեծ լսարան հավաքեց: Նախադրյալներ ստեղծվեցին զուտ համացանցային ռադիոկայանների ձևավորմանը: Ռադիոյի ի հայտ գալը համացանցում

նախանշվեց մրցակցության և զարգացման նոր շրջափուլ՝ էականորեն մեծացնելով պոտենցիալ և իրական լսարանի թիվն ու տեղեկատվություն հաղորդելու շառավիղը: Առցանց ռադիոյի զարգացմանը նպաստեց նաև համացանցի տեխնիկական և ստեղծագործական հնարավորություն-ները, մասնավորապես առցանց ռադիոհեռարձակում կազմակերպելու համար հաճախականության կամ ալեհավաքի կարիք այլևս չկար:

Համացանցում ռադիոյի զարգացումը լուրջ խնդիրներ առաջադրեց ավանդական ռադիոկայաններին, սակայն նրանց մեծ մասը կարողացավ ժամանակին ճիշտ կողմնորոշվել ստեղծված իրավիճակում և արդյունա-վետ օգտագործելով համացանցի հնարավորությունները գտավ տեղե-կատվության տարածման նոր ուղիներ ու միջոցներ: Ռադիոկայանները հիմնադրելով մուլտիմեդիա հնարավորություններով, կոնվերգենացված, ինտերակտիվ ռադիոկայքեր և կազմակերպելով օնլայն հեռարձակում կարողացան ընդարձակել հեռարձակման շառավիղը՝ ռադիոկայանը կողմնորոշելով աշխարհի տարբեր երկրներում գտնվող իրենց ռադիո-ունկնդիրներին: Այդ աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու համար ռադիոկայանները սոցիալական ցանցերում սկսեցին ձևավորել աջակցման խմբեր, որոնց միջոցով պարբերաբար կազմակերպում են ճեպահարցազրույցներ և օնլայն բանավեճեր:

Մուլտիմեդիականությունը, կոնվերգենացումը և ինտերակտիվու-թյունը, որոնք թվանշայնացման գործընթացների արդյունք են, դարձան նորագույն ժուռնալիստիկայի բնութագրիչներն ու կողմնորոշիչները: 10

Ժամանակակից փուլում օնլայն հեռարձակում են ապահովում մի շարք հայաստանյան ռադիոընկերություններ՝ ՀՀ հանրային ռադիոն, «Ռադիո Վանը», «Լրատվական ռադիոն», «Ռադիո Վեմը», «Ռադիո Երևանը», «Ազատություն» ռադիոկայանի հայաստանյան ծառայությունը: Իսկ ՀՀ-ում գործող փոքրաթիվ առցանց ռադիոկայանները թեև ներ-կայացված են համացանցում, սակայն գտնվում են ձևավորման փուլում և էական դերակատարություն առայժմ չունեն: Հայաստանյան առցանց ռադիոյի զարգացման համար նշանակալից իրադարձություն էր 2014թ. հուլիսի 23-ին Մարտունիում գործարկված մարզային առաջին առցանց «Մարտունիի ձայն» ռադիոկայանը, որը շուրջօրյա ինտերակտիվ հեռար-ձակման շնորհիվ սերտ կապ է հաստատել օտար երկրներում ապրող նախկին մարտունեցիների հետ: 11

Հայաստանյան ռադիոոլորտի վերջին տարիների նորություններից է ռադիոկայանների կողմից համացանցի աուդիովիզուալ հնարավորու-թյունների օգտագործումը, որի շնորհիվ «անտեսանելի» ռադիոն ոչ միայն դարձավ «տեսանել», այլև սկսեց հաջողությամբ մրցակցել լրատվական

և օպերատիվ տեղեկատվություն տարածող հեռուստաընկերությունների հետ՝ սկիզբ տալով որակապես նոր հաղորդումների ռադիոդիտմանը: Նմանատիպ գործունեության հաջողված օրինակներից են «Լրատվական ռադիոյի», «Ազատություն ռադիոկայանի», «Ավրորա» ռադիոկայանի կողմից պատրաստվող օպերատիվ աուդիովիզուալ հաղորդումները, որոնք ռադիոդիտողների բավականին մեծ լսարան են ապահովում:

Ինչպես ցույց տվեց ժամանակը, համացանցային ռադիոն չի կարող «սպանել» ավանդական ռադիոյին, ինչպես հեռուստատեսությունը «չսպանեց» կինոյին, իսկ կինոն՝ թատրոնին: Մեր կարծիքով, ավանդական և առցանց ռադիոկայանների մրցակցության մասին դժվար է խոսել, քանի դեռ համացանցը հեղինակային իրավունքի տեսակետից գտնվում է «օրենքից դուրս»: Մինչև այս հարցը չկարգավորվի, իսկ այդ հարցը դժվար թե շուտ կարգավորվի, ավանդական և առցանց ռադիոկայանները կգտնեն գոյատևման և մրցակցության այլ միջոցներ: 12

Համացանցի հնարավորությունների արդյունավետ օգտագործումը հնարավորություն տվեց սփյուռքում ապրող մեր հայրենակիցներին կազմակերպելու օտար երկրներում գործող մի շարք հայկական ռադիոկայանների օնլայն ռադիոհեռարձակում: Այժմ օնլայն հեռարձակման հնարավորություն ունեն Լոս Անջելեսում գործող, շուրջօրյա հեռարձակում ապահովող «Երևաննայթս», «Ռադիո Հայ», Բոստոնի «Անկախ ձայնասփյուռ», Մոնրեալի «Նարեգ», Փարիզի «Այբ FM», Բեյրութի «Սևան», «Վանա ձայն», Մոնտեվիդեոյի «Արմենիա» և այլ հայկական ռադիոկայաններն ու ռադիոժամերը: Սփյուռքի պայմաններում գործող հայկական ռադիոկայանների գործունեության ուսանելի օրինակ կարելի է համարել 2014 թ. հունիսին Ֆրանսիայում գործող «Այբ ՖՄ», «Ռադիո Արմենիա» և «Ռադիո Ա» ռադիոկայանների կողմից քեսաբահայերին օգնելու նպատակով կազմակերպված բարեգործական ակցիան, որի ընթացքում հավաքված գումարը ուղարկվեց Լաթակիա՝ տեղահանված քեսաբահայերին: Ակցիան օպերատիվորեն լուսաբանած Սփյուռքի և հայաստանյան լրատվամիջոցները յուրօրինակ եթերային կամուրջ հաստատեցին աշխարհի տարբեր երկրներում հաստատված մեր հայրենակիցների հետ, նրանց մասնակից դարձնելով համահայկական այդ կարևոր միջոցառմանը:

Հայկական ռադիոկայանները ներկայացված են նաև You Tube տեսահոսթինգում, որը հնարավորություն է տալիս նրանց օգտվելու տեղեկատվական այս նոր հարթակում առկա դրսևորման ձևերից ու միջոցներից:

Մոբայլ շարժական սարքերի, հատկապես բջջային հեռախոսների միջոցով ռադիոն մեծ տարածում է գտել ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Թերևս մոբայլ կապի միջոցով FM ռադիոյի հասանելիությունն ու մատչելիությունն է, որ հնարավորություն է տալիս պոտենցիալ ռադիոունկնդրին բջջային հեռախոսի միջոցով օնլայն տարբերակով ունկնդրել ՀՀ-ում և արտասահմանյան երկրներում հեռարձակվող ռադիոկայաններին՝ օգտվելով նաև նրանց արխիվային, մոբայլ ռեսուրս ծառայություններից: Մոբայլ ռեսուրսի այդ ծառայությունները հնարավորություն են տալիս օնլայն և առցանց հեռարձակում իրականացնող ռադիոկայաններին կատարելու երկարաժամկետ և կարճաժամկետ հավելվածների արխիվացում՝ հնարավորություն ընձեռելով օգտատերերին իրենց հարմար ժամին ունկնդրելու արխիվացված հավելվածները: ՀՀ-ում մոբայլ կապի նմանատիպ ծառայությունություններից օգտվում են ՀՀ հանրային ռադիոն, «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունը, «Վէմ», «Սպուտնիկ-Արմենիա» և այլ ռադիոկայաններ:

Հայաստանյան ռադիոկայանների համար հեռարձակման նոր հնարավորություններ է ընձեռել Հայաստանում գործող «Ռոստելեկոմ» հեռահաղորդակցության ընկերությունը, որի շնորհիվ հայաստանյան 16 ռադիոկայաններ 2016թ. հունիսից կաբելային հեռուստահաճախականությամբ կարող են կազմակերպել իրենց ծրագրերի ռադիոհեռարձակում: Ռադիոունկնդիրները հեռուստատեսային հաճախականությամբ կարող են ընտրել և ունկնդրել հայաստանյան 16 ռադիոկայանների ծրագրերը: Այս ձևաչափը, չնայած նորություն է հայաստանյան հեռահաղորդակցության շուկայում, սակայն վաղուց ընդունված ձևաչափ է աշխարհի շատ երկրներում: 13

Պետք է նշենք, որ Հայաստանում բջջային FM հաճախականությամբ ռադիոունկնդիրների թիվը 2–3 անգամ գերազանցում է օնլայն հեռարձակմամբ ռադիոունկնդիրների թվին: Նման միտում է նկատվում նաև ողջ աշխարհում:

Ըստ TNS Gallup Media ընկերության վերլուծաբանների, եթե 1980-ական թվականներին լսարանը օգտագործում էր էլեկտրոնային լրատվամիջոցները, 1990-ականներին ընտրում ալիքներն ու հաճախականությունները, ապա 21-րդ դարի սկզբներին՝ արդեն ղեկավարում է դրանք:

Գլոբալացման ժամանակակից փուլում հայաստանյան էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցները, այդ թվում ռադիոն, ակտիվորեն ներգրավված են հարուստ ավանդույթներ ունեցող տարածաշրջանային և համաշխարհային էլեկտրոնային տեղեկատվաշուկաներին,

որոնք նպաստում են միջազգային ասպարեզում հայաստանյան ռադիոընկերությունների ինտեգրմանը և հետագա զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Մկրտչյան Ա.Մ.* Գլոբալիզացիա, թե «գլոբալիզացիա», Ի սկզբանե էր Բանն, /ժուռնալիստիկայի և գրականագիտության հարցեր, Եր., 2004, էջ 21:
2. *Castells M.* The rise of network society, sekond edition, Singapore, 2010, 65 p.
3. *Անանյան Գ.Գ.* Հանուն և ընդդեմ գլոբալիզացիայի, Եր., 2003, էջ 6:
4. *Вартанова Е.Л.*, Постсоветские трансформации российских СМИ и журналистики, М., 2013, С.147.
5. *Засурский Я.Н.* Информационное общество и СМИ // Медиаскоп //. 20.06.2006. С. 89.
6. *Մկրտչյան Ա.Մ.* Գլոբալիզացիա, թե «գլոբալիզացիա», Ի սկզբանե էր Բանն, /ժուռնալիստիկայի և գրականագիտության հարցեր/, Եր., 2004, էջ 19:
7. *Засурский Я.Н.* Информационное общество и СМИ // Медиаскоп // 20.06.2006.
8. *Кастельс М.* Галактика Интернет: Размышления об Интернете, бизнесе и обществе/ пер. с англ. А. Матвеева под ред. В.. Харитонова. Екатеринбург, 2004. С.223.
9. *Белов В.* I-radio: вчера, сегодня, завтра // «Мой компьютер», 2005. № 51.
10. Պոդկաստինգը iPod (Apple ընկերության մեդիանվագարկիչների ապրանքային նշան) և broadcasting (եթեր) բառերի միավորումից է առաջացել: Պոդկաստինգի միջոցով ռադիոկայքեր այցելողները հնարավորություն են ստանում լսել, դիտել և ներբեռնել իրենց հետաքրքրող տեղեկատվությունը և երաժշտությունը: Պոդկաստինգներ ՀՀ-ում ունեն ՀՀ հանրային ռադիոն, "Ազատություն" ռադիոկայանի հայկական ծառայությունը, "Ռադիո Վան", "Երևան" և "Վեմ" ռադիոկայանները:
11. См.: *Насакин Р.* Тематический обзор: Интернет // PC Week. 2006. 24 янв.
12. Թվային ռադիոհեռարձակման համակարգի ներդրման գործընթացի իրականացման ժամկետը երկարաձգվեց մինչև 2018թ., www.tert.am, 5/26/2016:
13. *Лукина М.М.. Фомичева И.Д.* СМИ в пространстве Интернета. М., 2005, СС. 80–85.
14. *Բարսեղյան Հ.,* Մարտունիում գործարկվել է առաջին օնլայն ռադիոն, www. ankakh.com, 02.08.2014:
15 *Болотова Е., Круглова Л.* ТВ vs радио: кто выживет в кризис?// http:// www.chaskor.ru/p.php?id=4296 ё
16 Ռադիոհեռարձակման հնարավորություններ հայաստանյան հեռահաղորդակցության ոլորտում, «Արմենիա» հեռուստաընկերություն, «Ժամը» լրատվական ծրագիր, 29.06.2016թ.:

RADIO IN THE ERA OF GLOBALIZATION

M. Hovsepyan

ABSTRACT

Radical changes in the era of globalization and technological progress have given birth to new sources of information and communication, which, in turn, formed new relationships, forms and approaches. In recent decades, in the region due to geopolitical and economic relations appeared qualitatively new opportunities created by globalization processes. The processes of globalization, in our opinion, were not only a wide range of opportunities for regional and international integration of markets, but also in strengthening the ties between Ar-

menia and the Diaspora. The processes of the development of radio in Armenia in the context of globalization can be divided into the following stages;
a/ information technology, which has allowed the transition to new standards for digital broadcasting. b/ the development of the Internet and its potential use with. c / portable mobile devices (cell phones).
Keywords: radio and information technologies, radio and the created new standards, radio the Internet, mobile devices.

РАДИО В ЭПОХУ ГЛОБАЛИЗАЦИИ

М.М. Овсепян

АННОТАЦИЯ

Радикальные изменения в эпоху глобализации и технического прогресса родили новые источники информации и коммуникации, которые, в свою очередь, образовали новые отношения, форм и подходов. В последние десятилетия, в регионе обусловлено геополитическими и экономическими отношениями появились качественно новые возможности, созданных глобализационных процессов. Процессы глобализации, на наш взгляд, были не только широкий спектр возможностей для региональной и международной интеграции рынков, но и в укреплении связей между РА и Диаспорой. Процессы развития радио в Армении в условиях глобализации можно разделить на следующие этапы: а) информационные технологии, которые позволили переход к новым стандартов цифрового вещания, б) развитие Интернета и его потенциальное использование, с) портативные мобильные устройства (сотовые телефоны).
Ключевые слова: радио и информационные технологий, радио и новые цифровые стандарты, радио в Интернете, мобильные устройства.

Из университетской жизни

26-го июня в Российско-Армянском университете стартовала *Летняя школа* по международному публичному праву (МПП) и международному праву прав человека (МППЧ). Мероприятие состоялось в результате успешного сотрудничества РАУ с представительством Управления Верховного комиссара ООН по делам беженцев (УВКБ ООН) в Армении, ереванским офисом Совета Европы, Международным Комитетом Красного Креста (МККК) и благотворительной общественной организацией “MissionArmenia”. В первый раз Летняя школа в таком формате была проведена в РАУ в 2016 году. Взяв за основу успешный опыт и результаты Летней школы-2016, организаторы были заинтересованы в том, чтобы проект продолжался и в дальнейшем.

Приветствуя участников, проректор РАУ по науке П.С. Аветисян подчеркнул важность проведения Летней школы в области международного права и прав человека, а также актуальность развития данной сферы. Среди основных целей проведения Летней школы организаторы указали повышение уровня правовой осведомленности будущих юристов и эффективности организации подобных мероприятий, расширение знаний и повышение профессиональных навыков участников.

«Интерес к этой области растет: желающих принять участие в Летней школе в этом году было намного больше, чем в прошлом. Участники были тщательно отобраны в условиях сильной конкуренции», – отметила заведующая кафедрой международного и европейского права РАУ Л.А. Еремян.

Советник по правовым вопросам делегации МККК в Армении Ирен Алоян в своей приветственной речи подчеркнула важность изучения международного публичного права и увеличения числа специалистов в данной сфере, в особенности для Армении.

На церемонии открытия Представитель УВКБ ООН в Армении Наира Марутян обратила внимание участников на значение институционального сотрудничества государственных органов, международных организаций и высших учебных заведений для обеспечения эффективной защиты прав человека и, в частности, прав беженцев. *«Мы очень рады уже двухлетнему плодотворному сотрудничеству с РАУ»,* – добавила в заключение Н. Марутян.

В этом году для проведения лекций по МППЧ были приглашены международные эксперты: советник повопросам международного гуманитарного права в МККК Мариа Химена Лондоньо, менеджер проектов в области прав

человека Совета Европы Андрей Есин и руководитель ереванского офиса Совета Европы Links Наталия Вутова.

Участникам Летней школы по МПП и МППЧ будет предоставлена возможность на конкурсной основе принять участие также в летней школе по международному гуманитарному праву, организовываемой делегацией МККК в Армении в сотрудничестве с Американским университетом Армении и в летней школе по правам беженцев, организовываемой представительством УВКБ ООН в Армении в сотрудничестве с благотворительной общественной организацией “MissionArmenia” и Ереванским государственным университетом.

* * *

С 12 по 17 июня делегация Российско-Армянского университета в составе проректора РАУ Г.З. Саркисяна, заведующего кафедрой общей физики и квантовых наноструктур А.А. Саркисяна, заведующего лабораторией аналитической биохимии вуза Л.С. Унаняна и студентки по направлению «Зарубежное регионоведение» И. Осепян посетила Японию.

В ходе визита состоялся ряд официальных встреч представителей РАУ с руководством Цукубского университета (Tsukuba University), Университета Токай (Tokai University), Японского фонда (Japan Foundation), старшей школы Международного христианского университета (ICU High School) и др. Стороны обсудили перспективы дальнейшего сотрудничества и определили вектор развития двусторонних отношений, обратив особое внимание на реализацию совместных проектов и программ, создание научных коллабораций, осуществление эффективной академической мобильности. Отметим, что делегация Российско-Армянского университета встретилась также со студентами РАУ, обучающимися в Цукубском университете по программам академической мобильности.

По итогам переговоров были намечены возможные пути взаимодействия между РАУ и университетами и научными центрами Японии в физико-технической и медико-биологической сферах, области IT и высоких технологий и др. Стороны подчеркнули необходимость создания в Армении различных условий для изучения японского языка, армяно-японских исторических связей, а также актуальность более системной и продуктивной популяризации японской культуры среди обучающихся Российско-Армянского университета и РА в целом.

* * *

3–7 июля в Пятигорске состоялся «Кавказский диалог-2017» – ежегодный международный научно-образовательный проект, организованный Фондом поддержки публичной дипломатии им. А.М. Горчакова уже в шестой раз.

Заведующий кафедрой политологии РАУ О.Л. Саркисян был приглашен в качестве эксперта для участия в работе форума «Кавказский диалог-2017». В первый день форума О. Саркисян выступил с докладом и представил презентацию «Публичная дипломатия на Южном кавказе», а во второй – провел секцию «Роль публичной дипломатии на Кавказе».

Работа Форума проходила в рамках трех тематических секций: «Современные геополитические процессы и экономическое сотрудничество на Кавказе», «Выработка и координация единой медийной политики на Кавказе», «Роль публичной дипломатии на Кавказе». В первые дни были представлены доклады и презентации, а затем по тем же тематическим направлениям были организованы деловые игры. Состоялось также отдельное обсуждение проекта создания Инициативного молодежного комитета по делам Кавказа.

В своем выступлении О.Л. Саркисян отметил, что страны Южного Кавказа скорее являются объектами публичной дипломатии глобальных и региональных акторов: США, ЕС, Россия, Турция, Иран и др. Между тем эффективная публичная дипломатия возможна только при диалогичности, субъект-субъектном соотношении, иначе публичная дипломатия может превратиться в одностороннюю пропаганду. Он также выделил те факторы, которые препятствуют диалогу на уровне гражданского общества между странами Южного Кавказа, и подчеркнул, что в этих странах на данный момент, по существу, отсутствует стратегия публичной дипломатии.

Форум состоялся на базе Института Международных отношений Пятигорского государственного университета. В мероприятии приняли участие молодые политологи, журналисты, студенты и аспиранты, а также ученые, эксперты, представители органов государственной власти из Абхазии, Азербайджана, Армении, Грузии, России и Южной Осетии.

* * *

13-го июля на Международном финансовом конгрессе состоялось подписание Соглашения о создании и функционировании Сетевого финансового института в рамках Евразийского сетевого университета.

Сетевой финансовый институт создан шестью вузами Евразийского экономического союза (ЕАЭС) в целях организации сотрудничества в сфере образования и науки в области финансов, направленного на кадровое и научное обеспечение эффективного сопряжения национальных финансовых систем в рамках ЕАЭС и включения их в общий евразийский финансовый рынок.

Соглашение подписали следующие организации:

- Российско-Армянский университет (Республика Армения);
- Белорусский государственный экономический университет (Республика Беларусь);
- Кыргызско-Российский Славянский университет им. Б.Н. Ельцина (Кыргызская Республика);
- АО «Финансовая академия» (Республика Казахстан);
- Финансовый университет при Правительстве Российской Федерации;
- Санкт-Петербургский государственный экономический университет (Российская Федерация).

Сетевой финансовый институт является первым пилотным структурным объединением, сформированным в рамках Евразийского сетевого университета, и открыт для присоединения к нему других образовательных и научных организаций, банков и финансово-кредитных организаций стран ЕАЭС. Основой для его создания выступил Евразийский сетевой университет, меморандум о котором был подписан 12 апреля 2016 года в рамках Евразийской ассоциации университетов.

Президент АО «Финансовая академия» Министерства финансов Республики Казахстан Наталья Коржова отметила: «Наряду с организацией образовательной деятельности в рамках концепции непрерывного образования особый акцент будет сделан на программах дополнительного образования и повышения квалификации. Предполагается проведение масштабной работы по разработке и актуализации профессиональных стандартов на финансовых рынках, гармонизации квалификационных требований к специалистам финансовых рынков. Особое внимание будет уделено разработке отраслевой рамки квалификаций как инструменту сопряжения квалификационных требований рынков труда стран Евразийского союза, а также механизмов признания уровней образования и квалификаций».

* * *

17-го июля в Российско-Армянском университете стартовала летняя школа «Евразийский интеграционный проект в контексте современных геополитических изменений». В течение пяти дней участники узнают о различных аспектах евразийской интеграции и новых подходах в изучении и осмыслении евразийских интеграционных процессов.

На открытии выступили и приветствовали участников летней школы заведующий кафедрой политологии РАУ Саркисян Оганес Лаврентьевич и проректор по науке Аветисян Паркев Сергеевич. Участникам была представлена программа летней школы, а также практическое задание.

Выступили эксперты из Армении: заместитель директора Института Кавказа в Армении Минасян Сергей, эксперт по вопросам Грузии Джонни Меликян, колумнист журналов “The National Interest” и «Россия в глобальной политике» Арег Галстян, эксперт Института Кавказа Грант Микаелян, заведующий кафедрой истории и теории политической науки Ереванского государственного университета Ашот Енгоян. В последние дни летней школы, при поддержке фонда публичной дипломатии им. А.М. Горчакова, ожидаются лекции российских экспертов: председателя совета Центра международного продвижения, научного сотрудника Института экономики РАН Романа Чукова и заведующей сектором экономического развития постсоветских государств Института экономики РАН Елены Кузьмины.

Летняя школа – уникальная площадка для интерактивных обсуждений актуальных в данной сфере вопросов с ведущими экспертами, обмена опытом с другими участниками и т.п. В ходе мероприятия будут проведены лекции, дискуссии и практические занятия по таким темам, как экономика Армении в период членства в ЕАЭС, армяно-грузинские отношения в контексте евразийской интеграции, место Южного Кавказа в евразийском интеграционном проекте, тенденции развития ЕАЭС, политический диалог между США и Армения.

Летняя школа «Евразийский интеграционный проект в контексте современных геополитических изменений» была организована кафедрой политологии РАУ, Госкомитетом по науке РА при поддержке фонда публичной дипломатии им. А.М. Горчакова.

* * *

С 7–13 августа в Российско-Армянском университете прошла первая неделя III Летней программы обмена в рамках проекта "Network East-West", организованного в сотрудничестве с юридическим факультетом Берлинского университета имени Гумбольдта. В этом году темой проекта стала «Европейская конвенция о правах человека: современные проблемы».

В программе участвовало по 10 студентов из РАУ и Берлинского университета им. Гумбольдта. Получив темы для исследований, участники приступили к написанию научных статей при поддержке организаторов и преподавателей из двух университетов.

За первую неделю программы студенты активно поработали в группах, выступили с докладами и участвовали в обсуждениях. Студенты из Германии ознакомились с правовой системой Республики Армения, посетив Кассационный суд РА и Офис омбудсмена РА. В РАУ была также организована встреча с омбудсменом Нагорно-Карабахской Республики Рубеном Меликяном. Наряду с участием в интенсивной академической составляющей проекта студенты из Германии также успели ознакомиться с историей и культурой Армении.

С 14 по 20 августа программа продолжится в Берлине, где студенты РАУ и университета имени Гумбольдта присоединятся к участникам аналогичной программы, имплементируемой университетом имени Гумбольдта в сотрудничестве с университетами-партнерами из Чехии, Грузии, Венгрии, Латвии и Украины. В ходе второй недели программы студенты получили возможность поделиться результатами своих исследований со сверстниками и изучить правовую систему Германии.

* * *

1-го сентября состоялось подписание соглашения о вступлении Российско-Армянского университета в Университетский Альянс SAP. РАУ стал первым вузом Армении, вошедшим в Университетский Альянс SAP. Для студентов и преподавателей был также организован День технологий SAP.

На базе Российско-Армянского университета будет запущен SAP "Next-Gen Lab"-центр инноваций и нетворкинга, где студенты, помимо изучения технологий, будут работать над проектами партнеров и клиентов SAP

в Армении, СНГ и по всему миру. РАУ и SAP также будут работать над подготовкой и запуском совместной магистратуры в сфере “Data Science”.

Университетский Альянс SAP – глобальная академическая программа, которая знакомит студентов и преподавателей с программным обеспечением SAP и технологиями для цифровой трансформации экономики и бизнеса, включая решения для интернета вещей, больших данных, блокчейна, аналитики, робототехники, машинного обучения, виртуальной, дополненной и смешанной реальности. Цель программы – развитие технических и управленческих навыков путем включения решений SAP в учебный процесс соответствующих университетов и колледжей. Сегодня в программе участвуют более 3300 учебных заведений из 106 стран мира, 9 из 11 стран СНГ присоединились к SAP.

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

Аветисян Р.А. – к.филол.н., доцент кафедры Армековедения РАУ

Акопян Н.А. – соискатель Института философии, социологии и права НАН РА

Акопян Н. – д. псих. н., профессор Армянского государственого педогогического университета им. Хачатура Абовяна

Варданян С. – лектор в унивеситете Практической психологии и социологии «Урарту»

Габриэлян А.А. – аспирант кафедры Мировой политики и международных отношений РАУ

Глджян А. – к.филол.н., Аграрный университет Армении

Гюльзадян Д. – к.филол.н., доцент, преподаватель Ванадзорского государственного университета им. О.Туманяна

Гянджумян Е.Э. – аспирант кафедры Гражданского права и гражданско-процессуального права РАУ, секретарь судебных заседаний Административного суда РА

Дорфман Л.Я. – д.псих.н.,профессор, зав.кафедрой Психологии и педагогики Пермского государственного института культуры

Дунамалян Н.А. – к.п.н., преподаватель кафедры Политологии Института права и политики РАУ

Макарян Ц.М. – соискатель кафедры Конституционного и муниципального права Института права и политики РАУ

Макарян Ц.М. – аспирант кафедры Экономики и финансов Института экономики и бизнеса РАУ

Мартиросян Г.К. – аспирант кафедры Управления, бизнеса и туризма Института экономики и бизнеса РАУ

Мирумян К.А. – д.филос.н., профессор кафедры Политологии Института права и политики РАУ

Мисисян С.С. – преподаватель кафедры Русского языка и профессиональной коммуникации РАУ

Нагдян Р.М. – д.псих.н., преподаватель кафедры Психологии Института гуманитарных наук РАУ

Овсепян М.М. – д.филол.н., профессор кафедры Печатных и вещательных СМИ ЕГУ

Оганесян Т.О. – аспирант кафедры Экономики и финансов Института экономики и бизнеса РАУ

Петросян И.Б. – к.э.н., преподаватель кафедры Экономической теории и проблем экономики переходного периода Института экономики и бизнеса РАУ

Саакян М.А. – к.э.н., доцент кафедры Управления, бизнеса и туризма Института экономики и бизнеса РАУ

Саркисян А. – соискатель кафедры Экономической теории и проблем экономики переходного периода Института экономики и бизнеса РАУ

Саркисян О.Л. – к.филос.н., доцент, зав.кафедрой Политологии Института Политологии и права РАУ

Саркисян Р.М. – аспирант кафедры Конституционного и муниципального права Института права и политики РАУ

Тер-Саргсян Л. – преподаватель кафедры Языков Армянского государственного экономического университета

Товмасян Г.Ж. – к.филол.н., доцент

Ширханян С.С. – к.п.н., преподаватель кафедры Политологии Института права и политики РАУ

Чобанян М.Х. – к.э.н., доцент и преподаватель кафедры Управления, бизнеса и Института экономики и бизнеса РАУ

***Главный редактор** – М.Э. Авакян*

***Редактор** – Ш.Г. Мелик-Адамян*

***Корректор** – Э.А. Рухкян*

***Компьютерная верстка** – А.С. Бжикян*

Адрес Редакции научных изданий
Российско-Армянского университета:

0051, г. Ереван, ул. Овсепа Эмина, 123
тел./факс: (+374 10) 27-70-52(внутр. 42-02)
e-mail: redaction.rau@gmail.com

Заказ № 36
Подписано к печати 15.11.2017г.
Формат 60х84$^{1}/_{16}$. Бумага офсетная № 1.
Объем усл. 17,9 п.л. Тираж 100 экз.